




«Չարենց 7-ը նորի Անահիտ Չա-
 ւնցի գործն է, եւ չախարհիչ տո-
 կոսով, մէկտեղելու, վերձանելու,
 զաստորելու եւ ծանօթագրելու սղջ-
 նանքին աղերսուող բոլոր երեսնե-
 րով: Վերջապի աշխատանք մը, որ
 ի է առջուտ հարապատի առաջմը-
 ղիչ տարերքով, նուիրումով, պաշ-
 ամունքով, բայց սովական հա-
 րապատուիւնը բացարիկ ուժ մը չէ
 նման արտասխանատու գործերու
 աղիքով, նաեւ ու մանաւանդ հաս-
 կացողութիւն պէտք է, բազանցելու
 շնորհ, տարբարադրելու բնակչը,
 համեմատելու կարողութիւն ու վե-
 րակատուցելու ունակութիւն, արժա-
 նիքներ՝ որոնք կը փողփողին բնա-
 գիրներու բաժնիին համարեա՝ բո-
 լոր էջերուն վրայ, նախանձնի չա-
 փով մը:



Բարսի

ՓԵՏՐՈՒԱՐ 85

digitised by

ARARAT

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Գ. ՊԸԼՏԵԱՆ Ամդաստան
- 4.- Յ. ԿԱՐԱՊԵՆՅ Ո՛ւր մնացին 1925 թուականի ծնունդները
- 14.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Ազատ գոտի
- 16.- Ս. ԱՍՍՏՐԵԱՆ Ռոյթա
- 24.- ՎԱՐԱՆ ՌԻԺ Նկարիչը կը հրապարակէ
իր հայեացքները
- 25.- Ն. ՊԵՆԿՅԱՆ Միֆրոնեզիա
- 35.- * * * «Բսան տարուայ գործ է այս»
- 50.- Ե. ԶԱՐԵՆՅ Մ...-ի յիշատակին
- 54.- Գ. ՅՈՎԱԷՓԵԱՆ Անտիպ երկեր
- 57.- Ե. ԶԱՐԵՆՅ Դուրս մնացած ուրիշ կտորներ...
- 59.- * * * Հնարար է
- 62.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Յակար Յակոբեանի հետ
- 69.- Մ. ՄՆԱՍԵԱՆ Հրաշքայ Անտեանի նամակները
Վիեննա-ի Միջառնակներում
- 77.- * * * Մշակութային լուրեր



digitised by

A.R.A.

Բագրու

ԱՅՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍԻ

Գ. Պ. Պ. Պ. Գ. Պ. Պ. Գ. Պ. Պ. Գ. Պ. Պ. Գ. Պ. Պ.

Գ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ.

Անդատան

կը փորձի
 կը փորձի անդադար հողը արտին
 հողը միշտ փորուած եւ նոյն անբեր հերկը արտին
 փրփրոզ
 բխոզ
 ամպացոզ հոտին մէջ տարբարութեան
 ոչինչ որ գար
 ոչինչ որ լուտը
 հեռու մտիկ ո՛չ ոք որ խօսէր
 կայուն մկանոտ քանոթեան
 թերեւս կային խօսողներ թերեւս
 արտէն անդին մեռնողներ ըլլային
 չկային
 խօսողներ
 ո՛չ մէկ տեղ արտէն անդին յայտնուող
 գիս ծակոզ
 գիս իրենց կրակէ միշտույ ծակծկոզ, ոչինչ
 որ լուտը, կը փորձի
 գիշերը հողին եւ գիշերէն անդին
 անդաստանը երկարոզ գիշերին հոգեվարժով մեծաբան

10097-80/2

առաւօտը անօթի
 անտարբեր ամէն տեղ նոյն հոտը ներմակին
 բզկտուքը ներմակին աւլոյ
 շրջոյ շուքի բծախտաւոր երամներով
 գլխուս շուքը, նոյն հեւքը հողին
 ամենախօս հոն, պապ շնչառութեան՝ էի
 պարապը ձեռքին անդամահատ
 ապրող ինքն իր մէջ, կը փորէի
 մութին մէջ մորթը լոյսին
 վէրքը կիտուած
 նեղքը նառագայթը ճիւղն
 եւ կողին մէջ հոսումը հողին ի հող
 ազմուկին թարախը լեղի, օ՛
 կուծերուն խոնար լուսիւնը խորունկ
 երկրին մէջ անյայտ ու ծանրօրէն նամբորդող
 գետերն ի վար մինչեւ ծովաբերանը այլակերպ օրուան
 կայինք այլ տեղ հոս
 ներհատող խորացնող ներմակի խորութեան իբրեւ
 վիհացոյ անապատը աչքին մէջ, եւ ձեռքը հոն
 բաց կտրուած ձեռքը դեռ
 շարժուն
 հողին մէջ եղած հոգաստղ
 փայլող հսկայ հսկող բիրին մէջ հողին, մեռելներ
 կախուած անուններէ կախուած
 քեզմէ, կը փորէի
 եւ չունէի
 ո՛չ աչք ո՛չ դէմք
 հողն ընդ հողին
 ո՛չ իսկ ական
 պայթեցնելու համար կարգը լոյսին, անմարմին
 կը խրէի անանունութեան եւ ձեռքը որ կ'երթար
 հողի փափուկ ու մեծախօս փերուներեան
 տարտրձակուող արմատացոյց ցաւ ընդերաթօխչ դէպ
 ի փորուածքը յայտնութեան, կը փորէի
 մութի փորին հողն այն հայրերուն, կողն ի վեր
 որ էր արիւն
 կամ աւիշ
 կամ հեղուկ միսը որդին
 տաք ու պաղոյ ու քաշուող
 հողացոյ կողն աստրժոյ մը աստանդեալ
 պատնուած
 պատգամուած եւ անը սրունքն ի վեր կ'ելլէի
 լերան
 մերձեցայ
 մտայ մտերմութեան ունէի

գինձ, որդին, եւ չկար
 եւ յետոյ վայրը չկար
 փռս լեցուն աղիճներով
 վախով ծառանգուած
 այնքան խորունկ որ կ'անցնէի այլ տեղ խորունկ, փորեցի
 ամուլ հողին մէջ
 վիզն ի վեր
 եւ բերանը անապատ այրող խօսէն
 եւ լեզուն երկփեղկ երբ եղանձ
 գիշերէն անդին կատարակուիլ բաներուն նետուած
 բանտարկուած լոյսի կարգին եւ անսահման միմակութեամ, եւ
 յետոյ վայրը մահն էր
 անտարբեր ամէն տեղ կայուն համը ճերմակին
 ֆաղցրութիւն-բրտութիւնը ներմակին
 կը խօսիմ
 կը խօսէի անդադար հողը արտին գիտես
 եւ մինչեւ ո՛ւր եւ մինչեւ
 ե՞րբ այս խօս
 փորումը գնորային այս փոր
 խօսումը գիտ փորող գիտ փորձող
 փեռեկտող
 աշխարհացրող, եւ ձեռքը որ կ'երթայ խուլ
 կ'երկարի հողի թանձր հոգեվարժին
 անբեր աներկ
 ո՛չ մէկ տեղ արտէն անդին արտադիր, հովասող, պէտք էր
 կենալ ու փորեց գիտ
 ան, գիտես, անանուն, փսխեց գիտ, հիմա
 կը կենամ
 ելլող բորտոս մութէն
 անժամանակ գամուած ձողին
 փորտիճէ պարպուած մարմին մորթագերծ
 նայուած խորհող աչքէ մը կտպոյտ

.....

կը խօսիմ կը խրիմ
 բեռնի պէս
 աչքին մէջ
 կը փորեմ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Ց

**ՈՒՐ ՄՆԱՅԻՆ 1925՝ ԹՈՒԱԿԱՆԻ
ԾՆՈՒԱԾ ՆԵՐԸ**



Ասում են, թէ այդ տարի ամէն ոք Չարլըստոն էր պարում, որ կանայք ամանածեւ գլխարկ էին հագնում, քրէթ-դը-շիմից կարուած շրջագլխոտ եւ մինչեւ ծունկը հասնող մարգարտեայ վզնոց: Այդ տարի, տղամարդիկ խոբրէ գլխարկ են կրելիս եղել, հագել դժաւոր հագուստ եւ, յայտնի չէ ինչու, աւանց ձեռնափայտի անից դուրս չեն եկել:

Այդ տարի ինձ հետ ծնունդ են միլիոնաւոր մարդիկ, սակայն այսօր նրանցից ոչ մի լուր չկայ: Ես յիշում եմ իմ նախորդներին, գիտեմ նաեւ իմ յաջորդներին, սակայն ոչինչ գիտեմ իմ տարեկիցներին մասին: Նայում եմ շուրջիս եւ զարմանում: 1925 թուականից առաջ եւ յետոյ ծնուածները, այսպէս թէ այնպէս, մի տեղ են գրաւել աշխարհում, կա՛մ շատ ուրախ են, կա՛մ շատ տխուր: Ոմանք նոյնիսկ մեծ մարդ են դարձել: 1925 թիւը կարծես հենց այնպէս միջանկեալ տարի է եղել, պատմական ինչ-որ կատակ՝ նետուած նորածինների երեսին, մի կերպ ծածկելու տասնամեակի կէսը, որը ո՛ր այս կողմին է պատկանել, ոչ էլ այն: Մի տեսակ քաւարան: Արդեօք դուք հանդիպե՞լ էք մէկին, որը 1925 թուի ծնունդ եղած լինի:

Ինձ թւում է, թէ աշխարհը հազիւ ազատուած Առաջին Համաշխարհային պատերազմի աղէտից, որոշել է մի պահ մոռացութեան յանձնուել: Այդ պահը եղել է իմ ծննդեան տարին: Այդ քնաթաթախ վիճակը երկար չի տեւել: Վրայ է հասել Երկրորդ աշխարհամարտը, այլեւս ոչ ոք յետ չի նայել: Եւ այսպէս, 1925 թուականը մնացել է քարերի արանքում, դարձել օրուէլեան պատկեր:

Կարծես երէկ էր, երբ ծննդեան թուականիս նայելով մարդիկ ինձ «խոխա» էին անուանում: Այդ բնութագրումը մնաց ճակատիս: Հետագային ինչ էլ արեցի, շխարողացայ ձերբազատուել «խոխայութիւնից»: Թերեւս այդ է պատճառը, որ միւս էլ մնացի պատանի, թէեւ հայելին տարբեր բաներ է ասում: Մական ի՞նչ փոյթ: Եթէ մենք՝ 1925 թուականին ծնուածներս, մարդ-

կուսիական մտայնութեամբ սերունդն ենք, ապա թող աշխարհը մեզանից որեւէ ակնկալութիւն չունենայ: Ի՞նչ է տուել, որ պահանջ ունենայ: Խնդիրն այն է սակայն, որ 1925 թիւը հետզհետէ հեռանում է ինձանից՝ դառնալով տասնամեակների տակ կուշ եկած սապատուոր ուղտ, որը ինքնութիւն է ողերսուում: Տեսնես ի՞նչ են մտածում Հասակակիցներս: «1925 թուականի ծնունդն երբ բոլոր երկրներին, միացէ՛ք», ազդակում է Հոգիս: Լսող կա՞յ:

Հոնոլուլուում ծնուած ճապոնացի մի քարեկամ ունեմ՝ անունը Ռիչարդ Կոչիկավա, փոքրակամ, ջղուտ մի մարդ, որը շարունակ կկոցում է աչքերը եւ ամէն խօսքի վրայ ծիծաղում, սակայն յիմար չէ: Պահարար է: Ասում է, թէ քառասուն տարուայ ընթացքում երեք միլիոն աման է լուացել: Ես յարգում եմ Ռիչարդ Կոչիկավային: Ես նոյնպէս 1925 թուականի ծնունդ է: Քաղիլիւմ է զրում: Մի օր իրեն հարց տուեցի.

- Ռիչարդ, եթէ քեզ պատեհութիւն տրուէր նորից ծնուելու, ե՞րբ կ'ուզենայիր աշխարհ եկած լինել:
- 1925 թուին, — պատասխանեց Ռիչարդ Կոչիկավան:
- Ինչո՞ւ:
- Որովհետեւ այդ թուականին աշխարհի լաւագոյնն ու վառարարազոյնը խառնուել էին իրար:
- Սակայն այդ խառնուրդից դուրս դո՞ւն է ստացուել:
- Ի՞նչ աւարեբութիւն, — ասաց Կոչիկավան, — մոխրագոյնը ուելի լու է սեւից ու սպիտակից:

Ասացի, թէ յիմար մարդ չէ Ռիչարդ Կոչիկավան: 1925 թուականին տեղի ունեցաւ Լոկարնոյի խորհրդածողովք՝ մշտելով Եւրոպայի խաղաղութիւնն ապահովել փոխադարձ երաշխիքներով, Նեյլի թէյլըր Ռուբ Ռայտմիդի նահանգապետ ընտրուեց, ստալին կիւնը, որ նման պաշտօն ստանձնեց Միացեալ Նահանգների պատմութեան մէջ, Ջան Սկրպըր Թենըրում դատաւարուեց ասեանի կողմից, հանրային մի դպրոցում Դարվիին աստիճանական զարգացման տեսութիւնը դասաւանդած լինելու համար, սկրպտիստ Գան Բէյլըրը ստալին անգամ մարդկային պատկեր փոխանցեց հեռուստատեսային մի գործիքի միջոցով, Ալուի Նիթիերը հրատարակեց «Իմ պայքար»-ի առաջին հատորը, Ջարլի Չափլինը հանդէս եկաւ «Ուկու տենիզ» շարժանկարում, Միլիկանը յայտնաբերեց տիեզերային ճառագայթները, Հնարուեց լուսահեռադրութիւնը եւ Թուրանիստանի մարմինը Հողի երես հանուեց դատարար նիւթից յետոյ:

Այդ բոլորը ինձ Հեռ օրեւէ առնչութիւն չունէին, երբ աչքերս բացեցի զաւտանիստ այդ քաղաքում, որը վխտում էր ծերացած մանուկներով: Հինք տարի առաջ ընկել էր Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայերը մըտամուր քայլում էին նեղ փողոցներով: Յայտնի չէ ո՞ւր էին զնում այդ նախկին պիտուորականներն ու նախարարները: Մէկ տարի առաջ մահացել էր Լենինը, Հեղինակութիւնը կորցրել Տրոցկին եւ իշխանութեան դուրս անցել Ստալինը, Բոնապարտի ստուերը տարածուել էր նաեւ մեր քաղաքի վրայ: Այդ սարի, զարմանալի խաղեր են խաղացել մանուկները: Փոխանակ զնդակ խաղալու, խոնուել են անկիւններում եւ միմեանց հարց տուել.

- Կարմի՞ր թէ Ծոազոյն:
- Վա՛յ կարմիր ասողին:

Այդ մանուկները զաւակներն էին Մանուկ Հանրապետութիւնը կերտած մարդկանց, ոմանք ընկած ոտղմադաշտում, ոմանք խողխողուած բանտերում, ոմանք զնդակահարուած անտուն գիշերում: Նրանք՝ այդ զաւակները, նի-

հար, դու՛նատ, սեւաթուր բաներ էին, որոնք ժպտալ չդիտէին: Գաղթականներ էին գաղթական աշխարհում: Հնոտիներէ մէջ կորած՝ սատում էին ցեխակերտ պատերի տակ եւ հոանդով կոճ էին շրթում: Երբ ես հասայ նրանց տարիքին, նրանք արդէն փոշոցային էին դարձել: Ես էլ միացայ նրանց: Փողոցայիններէ մէջ ամէնից ազնուականը Համայնակ Արարատեանն էր, որին Համիկ էինք կոչում: Համիկը լախ ճակատ ունէր, խոշոր խոժ աչքեր, թափանցող հայեացք: Այլ ուղից մի քիչ կազում էր: Ատում էին, թէ ինչ-որ զօրավարի զուակ է: Սարտափելի հազում էր: Մի օր արիւն թքեց թաշկինակի մէջ:

- Ես որ մեռնեմ՝ ինձ Հայաստան տարէք, — ասաց Համիկ Արարատեանը:
- Ինչպէ՞ս տանենք:
- Ես ի՞նչ իմանամ, տարէք էլի՞:
- Այ աղայ, զու յիմար-յիմար բաներ ես ասում:
- Կարօտել եմ հօրս, — ասաց Համիկ Արարատեանը:
- Գու հէր ունե՞ս, Համիկ:
- Այո, Երեւանի բանտումն է: Ինձ Երեւան տարէք, — ասաց Համիկ Արարատեանը:

— Այ աղայ, զու հենց յիմար-յիմար բաներ ես զուրս ասելու: Իմ ծնուած տարին որոշ զէպքեր են տեղի ունեցել աշխարհում, սակայն եւ ոչ մէկը գրողալի: Այդ օրերին աշխարհը բաժանուած էր զազութներէ: Տանողը տանողին էր, երկրներ էին կողոպտում, ժողովուրդներ ստրկացնում յանուն արեւմտեան քաղաքակրթութեան: Ատում էին, թէ դերձանայինը Համայնակարութիւնը տարել էին Ռուսաստան՝ որպէս փորձարկման դաշտավայր: Ռուսներն էլ եկել լուրջի էին տուել այդ բուրբը, երբ երկիրը բնաւ էլ պարտաւ հող չէր նման բանի համար: Մինչեւ որ Արեւմուտքը խելքի է բնկել, Մոսկուան արդէն հիմնած է եղել իր գաղութատիրութիւնը: Ինչե՞ր էին ասում եւ միշտ ամէն ինչ կապում զերմանայիններին ու անգլիացիներին:

Այդուհանդերձ, 1925 թուին Մեծն Բրիտանիան վերահաստատում է սովորական յիմար ընտրում է Հինդերբուրգը: Աւստրիայում, գերմանացիները տեղահանում են լեհական Վերին Սիլեզիայից, իսկ լեհերը՝ այդ երկրամասի գերմանական շրջանից: Ճրանտիան շարունակում է պատերազմը մարտիկան ցեղախմբերի ու Սուրիայի դէմ: Իսպանիայում, զօրավար Ռիվերան ձեռքից առնով միահեծանութիւնը ստանձնում է վարչապետի պաշտօնը: Թուրքաստանում, Պանդալուր յափշտակում է վարչապետութիւնը: Իտալիայում, Փաշիստական կարգերի ներքոյ, երկիրը ոտքի է կանգնում տնտեսական տաղանապից: Ռուսաստանը Համաձայնագիր է կնքում Ճապոնիայի հետ, ըստ որի, ճապոնական ուժերը հեռանում են Հիւսիսային Սախալիից:

Եղած-լեղածը այս է, պաղապուր իրադրութիւններ, որոնք սակայն կուտակուելով, ըստ երեւոյթին, պիտի գային սանձադերձելու աշխարհի ամէնից մեծ ուղբերգութիւնը: Ով գիտէ ինչե՞ր են տեղի ունեցել այդ տարի, որից մարդկութիւնը լուր չունի: Օրինակ, ո՞վ իմացաւ, երբ մեր հարեւան Գաղթական Աւագը, ուսերը կքած, հօրս դատաւարով, Օդոստոս Զին, ասել է.

- Սիմոն, լաւ եղաւ, որ էրէխէն հստեղ ծնուաւ:
- Հապա ո՞ւր ծնուէր, — հարց է տուել Հայրս:
- Էլ սաղ էրէխայ չմնաց, բուրբը կոտորուեցին: Իմոնք էլ:

- Աշխարհի ճամբէքը լցուել են հայ որդերով:
- Իսկնց զուլում գուշմանս էլ լսեսնի:
- Ի՞նչ պիտի էլնի սրանց վերջը:
- Որո՞նց վերջը, — հայրս իմանալով հանդերձ ուզել է իմանալ:
- Մեռածներն ու սաղերի, — ասել է Գաղթական Աւարը եւ այդ գիշեր ցաւից մահացել:

Եւ այսպէս, մենք ծնունցինք անկախ մեր կամքից, չիմանալով, թէ ինչու ենք ծնուել, բայց արարքը տեղի էր ունեցել: Եկել էինք: Ամէն պարագայի, սկիզբ էր: Մեր ծնուած տարին աշխարհը կըրձ էր միակենմանութեան ստակ: Մեզ ձօտ էլ մի ինչ-որ ջորեկան թագաւոր էր դարձել: Այդ տարի որքա՞ն շատ թագաւորներ կային: Տեղից վեր կացողը գլխին թագ էր դնում: Մահայն այդ այնքան էլ կարեւոր չէր: Կարեւորն այն էր, որ հայրս կամաւոր էր եղել եւ սուն պատից կախել էր Հայաստանի Հանրապետութեան գինձը, նը: Տարիներ յետոյ ուղղակի զարմացայ, թէ ինչպէս մի բուռ հայեր հանրապետութիւն էին կերտել հարեւան հրոսակ ցեղախմբերի մէջ, որոնք դեռ միջնադարն էին ապրում: Եւ այսպէս էլ, երբեք չհաշուուցի Լենինի արածի հետ: Մարդ Աստծոյ, գու ի՞նչ զործ ունեւ մի այլ ժողովրդի ճակատագրի հետ:

Եւ քանի որ եկել էինք, ապա զգուձ էինք մեր ոտքերի տակ երկրաչնդի թաւալումը, բնադաբար գիտէինք, որ մենք մասն ենք ստաղերի, որ աստղերից վեր ու աստղերի մէջ մենք ապրում ենք յաւիտեան, չնայած նրան, որ արեւելեան քարոտ փոփոցներում մեր ոտքերն էին արիւնում, իսկ մեր սուր-տերում սպիտակ ցաւը զնալով աստաղեկական տարածք էր ստանում: Մենք հասուն ծնունցինք, հետադային է, որ մանկացանք եւ տեղից վեր կացողը խաբէց մեզ՝ մեր ձեռքից խլելով մեր ունեցածն ու չունեցածը: Միամիտ տարի էր, միամիտ սերունդ, որը կարծում էր, թէ արդարութեան ձգտելով արդարութիւն կը հաստատուի աշխարհում, երբ շաքարի լոյսութեան պատճառով ճարհատուած՝ չամիչով էինք խմում գունատ թէյը: Այդ դեռ բաւական չէր, նկուզներում կուչ եկած՝ տիեզերական զուգահեռականներ էինք դծում, որեթէ հասնելով անհասանելիին, երբ տարիներ յետոյ էր, որ Այնչոսայն պիտի զարգացնէր Յարաբերականութեան Տեսութիւնը: Այդպիսի Գոն-Կիչոտ սերունդ աշխարհը բնաւ չի տեսել:

1925 թուականին շատերն են ծնուել, շատերը մահացել: Մուսածնբից շատերը անյայտ մեծութիւններ են, իսկ մահացածներից ոմանք յայտնի ունչութիւններ: Այդուհանդերձ, լինք կարող չողբալ մահը Սերգէյ Եսէնինի, Գամիլ Ծրամարիոնի եւ Սուն Եաթ-Սէնի: Այդ տարի ծնուածների մէջ ինձ ծանօթ են անուաններ Ռորերթ Քենեդիի, Փաթրիկ Լումուսայի, Փլանըրի Օքանըրի եւ Սուկիո Միլիմայի, շորսն էլ եղբրական վախճան ունեցան: Միչիման, 40 վէպերի հեղինակ, մի օր, ձօտ տասնըճինդ տարի առաջ, ծիսասկան անձնասպանութիւն զործեց՝ իր կեանքը զարձնելով արուեստի զործ, մի բան, որին ձգտել էր շարունակ: Ամերիկացի հասակակիցներին մէջ գիտեմ Գոր Արդալին, Ջան Հոքսին, Ռասըլ Բէյքըրին, իսկ անձնապէս ճանաչում եմ Ուիլիըմ Բաքլիին ու Ուիլիըմ Մթայըրընին: Վերջինս ինձանից մի քանի ամիս փոքր է եւ ինձ դրացի: Սրանից երեք տարի առաջ, Մարտ 16ին, իր «Սոփիի Ընտրութիւնը» զործը ներկայացրի Նիւ Միքսիքոյում տեղի ունեցած դրական մի հաւաքում: Երբ բեմից վար իջայ, Ուիլիըմ Մթայըրըն սեղմեց ձեռքս, ասելով.

— Միայն հայը կարող էր այնքան խորապէս թափանցել Սոփիի հոգեկան բարդ կառույցի մէջ:

— Որովհետեւ Հայոց Եզեռնի պատմութիւնը պատմութիւնն է բիւրաւոր Հայ Մոֆիների, — պատասխանեցի:

— Ինչո՞ւ չես գրում, — ասաց Ուիլիամ Մթալընը:

— Արեւը թոյլ չի տալիս, — պատասխանեցի: Եւ նիւթը փոխեց:

Սակայն, իրաւ, Հայերն ա՛ր են: Այդ տարի ինձանից բացի ուրիշ Հայ չի՞ ծնուել: Ես սակաւին չեմ հանդիպել մէկին: Եւ այսպէս ինձ մենակ եմ գրում: Գուցէ նրանք նպատակաւորմար են գտել շնուել այդ տարի: Վըստաս հեմ, սրեւէ տեղ աշխարհի մթին ու լուսէ մատեաններում արձանագրուած են անունները այդ տարի ծնուածների, սակայն թէ ա՛ր են, դազափար չունեմ: Անցեալ օրը, Ջան Մըրֆի տնուեով մէկը նիւ Հէյլընից ինձ հետախօսեց: Նիւ Եարթ Լայֆ ապահովագրական ընկերութեան ներկայացուցիչն էր: Ուզում էր ինձ կեանքի ապահովագրութիւն ծախել:

— Ես թ՛նչ պիտի անեմ կեանքի ապահովագրութիւնը այս անապահով աշխարհում, — ասացի, ջանալով փակել հարցը:

— Հէնց ա՛յդ է խնդիրը, — պատասխանեց Ջան Մըրֆին՝ ձայնում անակնկալ հարազատութիւն:

— Ո՞րն է խնդիրը:

— Այն, որ մարդիկ փիլիսոփայ են դարձել,

— Սակայն ես փիլիսոփայ չեմ, — չգիտեմ ինչու ինքնապաշտպանութեան անցայ, — ես պարզապէս չեմ հաւատում կեանքի ապահովագրութեան:

— Ինչի՞ էք հաւատում, կթէ անքաղաքամարութիւն չէ հարցնելը, — քնքշօրէն հետապնդեց Ջան Մըրֆին:

— Կեանքին:

— Եթէ կեանքին էք հաւատում, Հապա կեանքի ապահովագրութիւնը լաւագոյն երաշխիքն է, — ասաց Ջան Մըրֆին:

— Երաշխիք ինչի՞ դէմ:

— Անակնկալների: Մի՞թէ կեանքը լեցուն չէ անակնկալներով:

— Ես սիրում եմ անակնկալը:

— Ասացէ՛ք խնդրեմ, դուք 1925ի ծնունդ էք:

— Ինչպէ՞ս գուշակեցիք:

— Ձողիակոտի Աոի՞ւծը, — ոչեւորուած վրայ բերեց Ջան Մըրֆին:

— Ճիշդ այդպէս: Սակայն ինչպէ՞ս իմացաք:

— Ես էլ նոյն տարուայ ծնունդ եմ, — ասաց Ջան Մըրֆին:

Ջան Մըրֆին ալիւս մոռացաւ ապահովագրութիւնը: Որոշեցինք հանդիպել որպէս վաղեմի բարեկամների:

Տարօրինակ մարդիկ են այդ թուականի ծնուածները: Դուք նրանց արտաքինին մի նայէք, ոչ էլ խելօք կեցողւածքին: Կանայք շափազանց զգայուն են, վիպական, սակայն միեւնոյն ժամանակ կապուած նիւթին, նիւթեղէն տաքուաներին որպէս ծէս ու յուշ, որպէս լինելութեան դրամական: Սիրում են ծաղիկի թերթիկներ շորացնել գրքերի մէջ, ոչինչ չեն նետում, Հաւաքում են, կուտակում, յատկապէս սիրային նամակներ: Առարկաները նրանց համար խորհրդանշանային նշանակութիւն ունեն: Տղամարդիկ հանելուկ են, փակուած դազանի մի տուփի մէջ, որի վրայ գրուած է Թննուկ: Դժուար թէ նրանց ներաշխարհին մօտենալ կարողանաք, թէեւ շատ հաղորդական են: Հակասութիւնների տպւրակ են, սակայն եթէ դժուր կայ կատարելիք, աստօջին գծի վրայ են, բնատուր առաջնորդ, որոնք ընդունակ են նոյնիսկ սխրա-

գործողութիւններէ, Յետոյ, ծայրայեղական են, կա՛մ այս, կա՛մ այն, միջին ճամբայ չկայ նրանց համար: Լաւ հաշուապահ են, հմուտ արհեստասոր, անվախ զինուորական, փայլուն արուեստագէտ: Բարեխաղից հաց կանոց մարդիկ:

Այդուհանդերձ, 1925 թուականի ծնունդները անդէ՛մ մարդիկ են հասարակութեան մէջ: Կարծես յանցաւոր են ծնուած լինելու համար: Բարեւում եւ, սակայն գէ՛մքը չի մնում յիշողութեանդ մէջ: Ի՞նչ եմ հանդիպել: Յանցաւոր են գրեւ իրենց Հայոց Մեծ Եղեռնի համար, Աւաջին պատերազմի համար, զանազան յեղափոխութիւնների համար, Երկրորդ աշխարհամարտի համար, աշխարհի տակնուվրայութեան համար: Նրանք համոզուած են, որ իրենք ի միջի ալլոց սերունդն են, որը պատահականորէն ընկել է հրսպարակ, առանց որի էլ աշխարհը երկա կ'երթար: Հինց այդ է պատճառը, որ նրանք կա՛մ շատ խելօք են, կա՛մ շատ դիժ, կա՛մ շինուած են, կա՛մ քանուամ: Առաջի, չէ՞, դուք նրանց արտաքինին մի նայէ՛ք, ներսում ահագին զայրոյթ կայ, թէ՛ մի խարոյկ, որը որեւէ վայրկեան կարող է ժայթքել:

Յրանսական գիշերօթիկ զպրոցում մի ուսուցիչը ունէ՛ր, անունը՝ Վլադիմիր Գիվալարով: Հասակակից էինք, երկուսս էլ եօթը տարեկան: Վլադիմիրը մեծուկը, չէ՛կ տղայ էր, լըջաղէ՛մ ու որբ, միւս հայ որբերի մէջ հասցան էր, միայն զայրոյթի պահին ուսուցիչն էր հայհոյում, ամէն հայհոյանք սկսելով «ե՛ս աստով: Ուսուցիչն լուսանքների իմ պաշարը ժառանգել եմ Վլադիմիրից, երբ դուք եմ անուամ, ոչ ոք չի հասկանում, սակայն խաղաղում եմ: Մի օր, ոսնազնդակի մրցութեան ժամանակ, խաղը հաջիւ սկսուած՝ Վլադիմիրը նշանակեց ստաջին դուրը: Հակասակ խումբը բողոքեց, թէ՛ զընդակը գծից դուրս էր: Եղաւ իրարանցում, քաշկուտք, յանկարծ ասա՛լ խոյացաւ հակասակ խմբի բերդապահ Մուկուչը եւ ծառայեց Վլադիմիրի ստաջին, բռունցքները վահան դարձրած: Երբ ես միջամտեցի, չիմացայ որտեղից աքացիի մի հարուած ստացայ կո՛քիս, սապալուեցի:

- Դու վախկոտ սո՛խ ես, — սպառնաց Մուկուչը:
- Ես ու՛ն եմ, վախկոտ չեմ, — բողոքեց Վլադիմիրը:
- Թու՛ս, սոխ, նոյն բանն ա՛ւ, — սպառնալիքի օղակը սեղմեց Մուկուչը:
- Վախկոտը դու՛ն ես, — պատասխանեց Վլադիմիրը:
- Հալա սրան նայէ՛ք, չէ՛կ մըջեմին նայէ՛ք, — համակիրներ որսաց Մուկուչը:
- Եթէ կռուել ես ուզում, մենակ մէյդան արի, — ասաց Վլադիմիրը:
- Հօրդ Կոփկաստում սպանեցին, քեզ էլ ես հասեղ կը սպանեմ, — ասաց Մուկուչը:
- Հէջոս սաղ ա, դու օրու-սուր բաներ ասում ես, — զուհասուեց Վլադիմիրը:
- Բալլեւիկը եթէ հօրդ չի խփել, ի՞նձ ա խփել, — Հեզնեց Մուկուչը:
- Ի՞՞մ հէջը կապիտան ա՛:
- Ի՞՞մ հէջն էլ գեներալ, — քմծիծաղեց Մուկուչը՝ վարակելով միւսներին:
- Ի՞՞մ հէջը տա՛ղ ա, — ճշաց Վլադիմիրը, Հետզհետէ կասկելով եղեռնութիւնը:
- Մէ՛կ, է՛րկու, ի՛րեք, — ձախ ցուցամտաբ ձախ քունքին տարաւ Մուկուչը, — Թբա՛խկ, — եւ ինքնազո՛ւ շուրջը դարձաւ:

Ես գիտէի, որ Մուկուլը չէր դիմանայ Վլադիմիրի բռունցքներին, Վլադիմիր ուժ ունէր Վլադիմիրը: Նրա դէմքը մի պահ քարացաւ, ապա աչքերը գուրս պրծան խոռոչներից, ամբողջ մարմնով սկսեց դողալ, բերանը երկար բաց մնաց, բառերը չգոյացան, յիս քայլեց, շուռ եկաւ, վազեց բակի երկայնքով դէպի ընթերցարանի շէնքը, բարձրացաւ աստիճանները, ներս մտաւ, դուռը գոցեց: Տեսեց յաւիտենութիւն: Յետոյ թանձր ծուխ բարձրացաւ պատուաններից, ապա հրոյ լիզուներ: Ծառ չանցած՝ ամբողջ շէնքը հրդեհուեալ էր: Նոյն օրը Վլադիմիրին վտարեցին գլորոցից: Յաջորդ գիշեր մազլցեցի Փրանսական որբանոցի պատը, այլեւս չվերադարձայ:

Վլադիմիր Պիվալարովն ու ես նոյն թուականի, նոյն օրուայ ծնունդ էինք:

Ի՞նչ եղաւ Վլադիմիրին: Ո՛ւր է հիմա Վլադիմիրը: Ո՞ղջ է: Յոյս ունեմ ողջ է:

Այդպէս եղաւ: Պատմութիւնը եկել էր, անցել: Մենք մնացել էինք պատմութեան լուսանցքում: Մենք չէինք մասնակցել, ոտնայն մենք կրեցինք ամենամեծ հարուածը, ինչպէս հիւլէական պայթիւնին յաջորդող ալիքը: Ուրիշները կուռեւել, ընկել էին ռազմի դաշտում, մենք սանձանների ծայրում ծուլարած՝ ստացել էինք ներքին վէրքը, որը աւելի այլանդակ է, քան շաշմանդամ պիսուորի անվերջ հողեվարքը: Ամէն օր սպասում էինք վատթարագոյնին, եթէ վատ էր լինում օրը, գոհ էինք մնում: Մեր օրերը եղան վատ օրերի շարան, ուր նիւթական զրկանքից առուել՝ մեզ սանջում էր սիրոյ շաղցը: Դարձել էինք դաժան մտնուկների բանակ, քանդում, այրում, կողոպտում էինք ամէն ինչ: Մրտի փոխարէն քար էր նստել մեր կրծքում: Նայում էինք մեր մեծերի շուարած աչքերին եւ զգում, թէ ինչոր տեսակով շարիք է տեղի ունեցել, որ երազներ են փլուզուել, որ աշխարհը հրեքը նոյնը չէ լինելու: Վրէժ էինք լուծում աշխարհից:

Մտածում եմ Համաշխարհային մի յանձնախումբ ստեղծել, ստուգելու Համար, թէ ի՞նչ եղան 1925 թուականի ծնունդները — քանի՞ հողի են ապրում, քանի՞ ան են մահացել, ով ո՛ւր է հասել, ո՞վ տեղ չի հասել, ո՞վ է ամուսնացել, ո՞վ ամուսնի մնացել, քանի՞ աւազակ սւնենք, քանի՞ հողեւորական, քանի՞ առեւտրական, քանի՞ քաղաքագէտ, քանի՞ մաքսանենք, Բանաստեղծ առեւ՞ ինք: Մտածում եմ նաեւ այդ թուականին ծնուածներէ մի Համահասակ կազմակերպել՝ հիմքը դնելու ամէնազգեստ մի նոր ժողովրդի, մի նոր պետութեան, որի նշանախօսը լինի ՈԶ: Ո՛չ պատերազմին, ո՛չ բռնադատութեանը, ո՛չ կեղեքումին, ո՛չ խտրականութեանը, ո՛չ անմարդկայնութեանը: Տեսնենք ի՞նչ կը լինի:

Այդ տարի, Դեկտեմբեր 31ին, Երեւանից Մուկուլայի վրայով Նիւ Եորք էի վերադառնում: Ընանապարհին կանգ առայ Մադրիդ: «Դրանդէ» պանդոկում սենեակ ապահովելուց յետոյ իջայ մտակայ մի ըմպելարան: Իսպանիան տխուր էր, չնայած որ տարեմուտի գիշեր էր: Տրանկոյի շուքը ներկայ էր ամէն մի անկիւնում: Այդ նոյն ծանրութիւնը դրացել էի Մուկուլայում, նուազ չափով Երեւանում: Մի դուռով սքալ պատուիրիցի, անցայ երկրորդին, երրորդին: Քոլի բարձրադիր աթուռ վրայ մի երեսուննոց մարդ էր նըստած, թուխ, նիւհար, ջղախին: Նա նոյնպէս կատակ չէր անում իր դուռովի հետ: Մէկը միւտի ետեւից պարպում էր: Քանի որ ըմպելարանը գրեթէ դատարկ էր, անմիջապէս մտերմացանք՝ ապաւինելով Փրանսերէնին: Էմմանուէլ Թիվերա: Այդ էր իր անունը:

— Դուք Ամերիկայից եք, այդպէս չէ՞, — սասց կժմանուէլ Ռիվերան :

— Ինչպէ՞ս գուշակեցիք :

— Ձեր շարժումներից, հաղուստներից, ինչպէ՞ս ստե՛մ, — սասց կժմանուէլ Ռիվերան, — ե՛րբ եկաք :

— Հինց այսօր, բայց ոչ թէ Ամերիկայից, այլ՝ Մոսկուայից :

— Մոսկուայի՞ց, — յանկարծ պայծառացաւ կժմանուէլ Ռիվերայի զէ՛մքը :

— Այո, Մոսկուայից . . .

Կժմանուէլ Ռիվերան ինձ ժամանակ շտուկց վերջացնելու խօսքս, արող ծօտեցաւ, ձախ թեւը ուսիս կանթից, ամուր սեղմեց, սասց .

— Ծա էլ համայնավար եմ :

— Բայց . . .

— Մենք համայնավարներս թէ՛կ ընտանիքի զաւակ ենք, անկախ այն հանգամանքից, թէ՛ ինչ ազգութեան ենք պատկանում :

Ինձ այլ ելք չէր մնացել՝ եթէ ոչ ստանձնել նորընծայ համայնավարիս դերը : Եստ խանդավառ էր կժմանուէլ Ռիվերան, զժուար պիտի լինէր տեսնել նրա յուսախաբութիւնը : Յետոյ կար նաև այդ զաղանի զաշնի հրապարանքը : Արդէն վաղը պիտի մեկնէի : Ինչո՞ւ վիշտ պատճառէի նրան : Հեռազհետէ կիսամութ ըմպելարանը վարդազոյնի էր փոխում : Թժում էինք եւ զգում էրերի ատրալուծումը զիմացի հայելու մէջ : Նա ինձ պատմեց իր կեանքի պատմութիւնը : Երբ սասց, թէ 1925 թուի ծնունդ է, իմացայ, որ դատապարտուած է, չքուար ընտանիքի զաւակ, հինգերորդը ութ որդիներից, մտայլ մանկութիւն՝ Մանտիպազօ զէ Կոմպոսելայում, ապա մեքենագործի աշկերտ՝ Մադրիդում, անդամ՝ մեքենագործների ընդհատակեայ արհեստակցական միութեան, ամուսնացած, երեք զաւակների հայր, շարրորդն էլ ձա՛մբին : Կեցցէ՛ յեղափոխութիւնը :

— Դուք այս գիշեր մեզ հետ պիտի դիմաւորէք Նոր Տարին, — սասց կժմանուէլ Ռիվերան, — մերոնք շատ պիտի ուրախանան ձեր ներկայութեամբ :

— Մակայն ովքե՞ր են ձերոնք, — անակնկալի եկայ, — ես ձամբող մի օտարական . . .

— Մեր ընկերները : Դուք շատ պիտի համակրէք մերոնց :

Գիշերը բաւական առաջացել էր, երբ զուբս եկանք ըմպելարանից, քայլեցինք ուս ուսի, միմեանց զրկած, տատանուելով, անցանք մի այլ պողոտայ, ապա մի լայն ծառաստան, թեքուեցինք աջ, մտանք մի նեղ փողոց, կանգ առանք մի կրպակի առջև : Ատազձագործի խանութ էր, կիսամութ : Կժմանուէլ Ռիվերան բանեք խօսեց մի գիրուկ, միջին տարիքի կնոջ հետ, որը ինձ երկար զննելուց յետոյ, մեզ տարաւ մի նեղ նրբանցք, ապա մի այլ նրբանցք, բացեց մի նեղլիկ դուռ եւ յանկարծ մեզ գտանք մի սրահում, ուր ծխախոտի թանձր ծուխի վարազոյրի միջից մեզ էին նայում հարիւրաւոր աչքեր : Միջոցում տակաին կար երաժշտութեան ու պարի ընդհատուած կըլուտոյթը : Ձէի կարողանում ընկալել իրականութիւնը : Ինձ թուում էր, թէ հրազնի մէջ էի, կժմանուէլ Ռիվերան կանգնեց սրահի մէջտեղում, ճառ արտասանեց, բնականաբար խօսաներէն, որին յաջորդեց ծափահարութիւն, արհեստեւ մէկ առ մէկ ներկաները ծօտեցան, սեղմեցին ձեռքս : Ձէ՞ որ մենք նոյն ընտանիքին էինք պատկանում : Ամերիկեան համայնավար : Ետլորի հարեացք ի՞մ վրայ էր :

Ատոմեանարար վարժուեցի մթնոլորտին ևս որովհետեւ անելիք չու-
նէի, խմելքին կառչեցի: Գրեթէ ամէն տարիքի մարդ կար սրահում, սակայն
մեծամասնութիւնը երիտասարդներ էին, տղամարդիկ՝ միջնահասակ, թուի
ու մազառ, կանաչք՝ անաթոյր ու շիկահեր, այս ևս այն կողմ տառապանքի
զծեր, ու սակայն նաև խինդ ու ժպիտ, խառնուած պարին, կերուխումին:
Որախճանքը հանդիսաւոր էր, ինչպէս ծէս, կարծես ինչ-որ աներեւոյթ ուժ
կաշկանդել էր կեանքի կերքը: Ինձ էլ ստիպեցին մասնակցել շուրջպարին:
Ես չէի պարողը, այլ այն կրակէ հեղուկը, որը ինքնարերարար լեցում էր
բաժակին մէջ: Ներկաներից մէկը, ամէնից յաղթանդամը, մերթ ընդ մերթ
մէ լազունը էր արտասանում, որին արձագանգում էր խումբը: Ձգիտեմ Նոր
Տարին եկե՛ւ էր թէ ոչ, սակայն ժուռքի վարադոյրի ետեւ իւրաւում առաջա-
ցու, տիրեց վայրկեանական խուճապ, ապա սպասողական շուտութիւն: Սեւ ու
կապոյտ համազգեստներով մի խումբ մարդիկ ներս խուճեցին, մի քանի
հաւժկու մեռքեր ինձ հրեցին սեղանի շուրջ, եղաւ բուռն վիճաբանութիւն,
աղմուկ, իրարանցում, կրակներէրի ահապին գոփիւն, լեցի իմամտուէլ Ռի-
վերայի բողոքի ազդակը, որին յաջորդեց կանանց ճիւղ: Այս բոլորը չգիտեմ
որքան տևեց: Երբ ինձ գուրս հանեցին սեղանի սակից, վերսկսուել էր սօ-
նահանդէսը: Բացակայ էին միայն յաղթանդամն ու իմամտուէլ Ռիվերան:

Ատում են, թէ 1926 թուին կանաչք վարդի թերթիկի շափ էին ներկում
իրենց շուրթերը, սպիտակ բրնձափոշով պատում իրենց երեսը, երկար, վը-
տանգաւոր կրունկներ հագնում եւ անընդհատ Յոֆստրաւ ու Ջարլստոն պա-
րում, որ աղամարդիկ ծիծաղելի զալիֆէ էին կրում, սպիտակ կօշիկ եւ սպի-
տակ մեռնոց, կրծքներին էլ մեխակ: Կարծում էին, թէ այդպիսով ազատա-
զրուել են, որ վերջապէս նոր մարդը տեղ է հասել: Կա՛մ մոռացել էին Առա-
ջին պատերազմը, կա՛մ այդպիսով մոռանալ էին ուզում: Երկու զեպքում էլ
սակաւին վիզական էր աշխարհը, ամէն ոք սակաւին հերոսութիւն էր խա-
ղում, երբ իրական հերոսները անփառունակ վախճան էին ունեցել: Փարի-
զում՝ կինը գրուել էր պատուանդանի վրայ, Բեռլինում՝ Հիթլերը մեծագա-
րութեան երազներ էր որոճում, Հուսմում՝ Մուսոլինին փայտէ զինուորնե-
րով էր խաղում, Մոսկուայում՝ Սաալինը սոյամ զանգուածներին լողունգ-
ներով էր կերակրում, իսկ Վաշինգտոնում՝ Վիլսոնը, անդիտակ որ ընկել է
գալլների զոհմակի մէջ՝ ուսուպիական ծրագրեր էր մշակում: Ձգիտեա ին-
չո՛ւ, ամերիկացի արուեստագէտները, յասկապէս դրողները, ամերիկեան
տաղտը կեանքը թողած՝ ընկել էին Եւրոպայի փողոցները եւ հանդիպած ա-
ռաջին աղիճի հետ ստակելով կարծում էին, թէ գերագոյն արկածախնդրու-
թիւնն են գործում: Անգլիան արդէն Անգլիա էր, բոլոր շարիքների ու բա-
րիքների կղզին, նայած թէ ո՛ր անկիւնից էիր մօտենում Լոնդոնի շահերին:
Այսպիսի բաներ էին ստում, երբ մենք ծնուեցինք, մենք՝ քսանական
Թուականների ապստաններս, որ փաստօրէն մանր առեւտրականներ պիտի
դառնայինք, սակայն իրերի ինչ-որ անհասկանալի դասաւորումով իրէպա-
ններ կառչեցինք: Դէ՛, արի ու էլը ցեխից հանիր: Եւ որովհետեւ Արեւմուտ-
քը արդէն իսկ ընկել էր արգիւնաբերական արդի յեղափոխութեան ատամ-
ների տակ, մենք ո՛չ այս կողմը մնացինք, ո՛չ այն, այլ մնացինք կախուած
օդում: Գուցէ այդ է սլատառը, որ սակաւին մեռք լենք քաշել օդային ամ-
բողներից: Հենց այդ է պատճառը նաև, որ ամէն ոք վախենում է մեղա-
նից: Գիտեա, թէ գործնական մարդը ո՛ւր է կանգնած, ի՛նչ է ուզում: Միշտ
էլ կարելի է սակարկել նրա հետ: Գաղափարապա՛լուն է, որ շարունակ զըլ-
խացուանք է պատճառում, լուրջի է առնում պատահական ամէն մի քաղա-

քաղաքի յայտարարութիւնը եւ հաշիւ պահանջում: Հակառակորդը չէ, որ սպառնում է էջխանաւորներին, այլ՝ այդ փխրուն իղէալիստը, ամենավատնազաւոր արարածը ողջ պատմութեան մէջ:

«Արբանակը ծնեց Իսահակին. Իսահակը ծնեց Յակոբին. Յակոբը ծնեց Յուդային եւ նրա եղբայրներին. Յուդան ծնեց Փարեսին եւ Չարային՝ Քամարից: Փարեսը ծնեց Եզրանին. Եզրանը ծնեց Արամին. Արամը ծնեց Ամինարային. Ամինարայը ծնեց Նաստոնին. Նաստոնը ծնեց Սաղմոնին...»: Հա ծնեցի՛ն աւ ծնեցի՛ն, իսկ եթէ Սաղմոնը չծնէր Բոոսին, ի՞նչ կը լինէր, անկասկած Բոոսին կը ծնէր մի այլ մէկը ու թերեւս մարդկութիւնը աւելի երջանիկ լինէր: Հարցը այդ չէ սակայն, այլ ո՛րն, որ ամէն մարդ էր հետքն է թողնում մարդկութեան համայնապատկերում, ինչպէս ասույզը, որ մի պահ ճեղքում է խուարը՝ վերազատնալով սկզբնապատճառին, որ անպատճառ ունի իր պատճառը, թէկուզ եւ այս ղէպքում պատճառը լինի բարոյապաշտ, քանի որ Բա՛նն է մեր հասկացած տիեզերքի գոյութեան պատճառը: Սպանիք Բանը, կը փլուզուի մոլորակը եւ իր հետ արեգակնային համակարգութիւնը, Կաթնածիրը եւ բոլոր համաստեղութիւնները, որովհետեւ Բանը կորիզն է մեր լինելութեան, նոյնիսկ եթէ պատահի, որ մէկը ծնուած լինի քսաներորդ դարի սուլային քսանորդին, երբ աշխարհը բազում արհաւիրքներից անցած լինելով հանդերձ տակաւին անմեղ էր, երբեմն ապուշ, սակայն միշտ միամիտ, կարծելով թէ իրականից արտուել՝ իրական է բնազանցականը, անշուշտօրէն, անհասանելին, որ անմահութիւնը գեղեցիկի մէջ է, որ որքի մի կաթիլ արցունքը աւելի արժէ, քան բոլոր մատենադարաններն ու թանգարանները, կարողացա՞յ միաքս պարզել:

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՏ

Դեկտեմբեր 1984 — Քրնիքիքը

Ինձնաշարժները, երկու ուղղութեամբ,
յուս կ'երթ-իւնկենմ:
Կարելի է հոսկէ անցմիկ
ձեր մանկութեամբ
համամեայ, երեսնամեայ
տարիներու ճամբաներէն,
ուր հանայք կարելի էր
զմել աժամ,
ուր կերպարը կը վաճառուէր
անցեալ դարէն առնդ ճգուած
կամարակալ խամութեանում:
Դժբախտաբար, հագար ձեռի
պատճառներով,
դրանք դժուար է բացատրել,
չեմք յաշոյած անդծ պահել
«Հաժ Տաուտչն ու
ժովեզերեայ միւս սրճարանները,
ուր կրնայի՞ք մարտի խաղալ
կամ ներկիլէն ըմբռչիմել համզիտա:
Անշուշտ, մէկը միշտ
ձուկ պիտի որսար
եղէզով երկար:

ԱՂԱՏ ԳՕՏԻ

Այս, պարուններ,
այստեղ հազաքի
ազատ զօտին է,
նայնիսկ մուտքերում
արտօնագիրի
պահանջ չի դրուիր:
Այստեղ հազաքի
սիրտը կը կշռուի,
սակայն կը մնայ
ստեմանագիծը
բանակամութեան քիչերուն հագար:

digitised by A.R.A.R.@

Յանձնայնդէպս,
 միայն վայրերը կը սրամաղրենք,
 իսկ մնացեալը... ձեր յիշողութեան,
 պատկերացումի
 խաղին ձգուած է:

Տակաւին այստեղ,
 մարդիկ կան, որոնք
 կը կրակեն անցորդներուն
 այնքան դիւրին...
 Վերջ թ վերջոյ
 տեղ մը պէտք է ապահովուի,
 ուր արտօնուի ձերբազատուիչ
 չարչրկող, տանջող անձկութիւններէն...

Հոս ամէն ինչ
 նոր է ու հին:
 Մեր հարերով աւարկուած
 նախուն՝ շատանց
 միանուլուած է ասփայլքը:
 Տանկարանը ցորենի՝ անդին
 որ բազմաձև, փոփոխական

ոներով միշտ նորագուած է
 եւ կը մնայ... արդիական:
 Հանկարծներ կան՝ թէկուզ այրած:
 Եւ բեռնակիրներ, որոնք տխրութեամբ
 երկար կը մայիմ
 մեկնող նաւերուն,
 կը դանդաղին
 նարինջ բաւոյ կռօներուն մօտ՝
 ծարաւն իրենց յագեցնելու:

Այո, պարոններ,
 նաւահանգիստի
 ազատ գոտին է:
 Մանամագիծը՝ արեան-երակի,
 առեւանգուած անցեալի եւ
 մտաւեանգուած
 սկզկալութեանց:
 Ազատամարտն է
 կիրքերու խելառ:

Այո, պարոններ,
 հոս ամէն ինչ
 կարելի է:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՉԵՐՆԱՆ

Ս. Ա Ս Ա Տ Ր Ե Ա Ն

Ռ Ռ Յ Ե Ա

Ես չեմ հասցնում պատմելու, անսպասելի դալիս է կնոջս մտերիմ ընկերուհին եւ նրանք ինձ թողնում են միայնակ՝ զարթնող յուշերիս հետ... Իսկ յուշերս ինձ սրաթեւ յետ են տանում զբասումեայ իմ երիտասարդութեան օրերը:

Մտքերս վազում են Լոռեստան եւ յուզում անթեղուած մի յուշ, որ յառնում է տարիների անցեալից, զօղանլի պէս կանչում ու ես անանջաւոր հողմերի շառաչին, ջրվէժների թափին, գնում եմ ուխտի՝ եղնիկների ոտնահեաքերով, հասնում երկնամերձ դազաթներին, ժօտեանում արծուարների կապոյտ խաղաղութեան, յետոյ իջնում քարափների յոնքին կզած դաւազիբ կանձաններով, լսում կիրճում գալարուող գետի անարկու որրտը ու նայում թիւ քաններկու փապուղու կեկուպեան մթամած աչքին, յետոյ բռնում գետափնեայ մի բարակ կածան, յառաջանում՝ անկնդրելով անտառի կուսայ շուրթերի ծաւալուն երգը ու... խոնարհում անյայտ, անըմբռնելի ճակատադրի առաջ:

Քառասուն տարուայ մշուշի միջից նոյեան աւետաբեր աղանու պէս հախրում են յուշերս եւ իմ մայրամուտի շառաղանած հորիզոնում զօղանջում է մի կանչ... Ռոյիս՝, Ռոյիս՝...

Տ

Լոռեստանում կառուցուող երկաթուղագծի վրայ դրամը թիակով են հաւաքում...

Լուրը պատէպատ խփուելով տարածւում է մեր քաղաքում:

Մենք աղքատ ենք, դրամի կարօտ: Ես ու մայրս հազիւ ենք մեր ընտանիքի օրուայ հասը հասցնում:

Զը՛նդ... զը՛նդ... ջուճս չի տանում... Խաւարի միջից լսւում է Լոռեստանից եկող դրամի զնդոցը:

Կինս այրոմի մէջ դառաւարում է մեր լուսանկարները եւ ուշագիբ նայում իմ ջոանամեայ մէկ նկարին՝ տեսւմ.

— Մերուն տղայ ես եղել ժամանակին:

Ես ժպտում եմ զուհուս: Հիմա տարիքը փոխել, Ենրացրել է իմ դէմքը:

— Լոռեստանում եմ նկարուել, վարձուց, շա՛տ վաղուց, — տեսւմ եմ ափսոսանքի վերջիչումով...:

Կինս քեզանքով շոյում է ներմակ մազերս եւ թախանձում.

— Պատմիբ, երեւի հին յուշեր ունես, շմոռացուող յուշեր, ո՞ր ժպտում է կապոյտ աչքերի բարե ժպիտով, — պատմիբ, անցեալը միշտ քաղցր է, — կրկին շոյում է մազերս եւ խրախուսում.

— Պատմիբ...:

- Մամ, ջնամ ևս...
- Ձէ', որդի, այսքան հոգսերի մէջ քօն կը տանի...
- Մամ, գնում եմ Լոռեստան:
- Լոռեստան, — զարմանում է մայրս:
- Գնում եմ փող աշխատելու:
- Մամէն էդ քո ջանքին մատաղ, — մայրը կերկերում է:
- Մամ, լացո՞ւմ ես:
- Մամը ցաւդ տանի, բա Ի՞նչ անեմ...

Ձեռքով մթութեան մէջ լուսփում եմ արտասուող ձորս դէմքը:

Խոնաւանում են նաեւ իմ աչքերը:

— Մամ, ես մեծ, քսան տարեկան տղամարդ եմ արդէն:

— Տասնեփննդ դեռ չէ լրացել, — ճշդում է նեկեկալով:

— Մինչեւ Լոռեստան հասնեմ՝ տասնեփննս կը լրանայ:

էլ չի խոսում, քացում է դիրկը, ինձ բաշում գիրկը եւ արտասուքից թրջուած երեսը թում է չիթ ու բերնիս, հորթը կորցրած մայր կովի մոլեղնութեամբ համբուլում, հոտոտում է դէմքս:

— Ախ, Աստուած, այս որքա՞ն բախուաւք եմ ես, ախտօ, որ չի՛չ աղքատ ենք... Ի՞նչ կը լինէր, Աստուած, որ էս աղքատութեան էլ մի հար... — էլ չի շարունակում խօսքը, զոջում է իսկոյն եւ շնջում, — Փա՛ւքդ շատ, Աստուած, էսպէս էլ գտն ենք...

Մի օր յետոյ աչեկոծւում է մեր բաւը, լուրը տարածւում է տնից-տուն, որ Ջաւէնը գնում է Լոռեստան:

Արդէն ձորս հաւանութեամբ ծախել եմ մեր պատի ժամացոյցը եւ հօրիցս յիշատակ մնացած որսորդական հետադիտակը:

Մայրս կապում է ճամբորդական իրերս եւ մէկն մէկի մէջ մի քանի կաթիլ արցունք գնում:

Մեկնելու պահին տրամադրութիւնս լաւ չէ, զոջացել եմ, բայց արդէն ուշ է, բակի հարեւանները մէկիկ-մէկիկ պալիս են եւ բարի ճանապարհ մայթում:

— Ա՛խ, ի՞մ անփորձ բալէս, ինչպէ՞ս կ'ապրես այդ հեռուոր Լոռեստանում, — վզովս ջնկած լացում է մայրս:

— Ազլի', լաւ չես անում, թող որ տղան սիրան ուրախ երթայ, — խրատում են էս ու էն կողմից մեր բակի, մեզ պէս չքաւոր ու բարի հարեւանները:

— Լա՛ւ, թող դեռ, ես նրա պնացած ճամբին մատաղ, — փղձկալով համակերպում է մայրս:

Երբ հրաժեշտիս համբոյրն եմ տալիս տասնեակնդամեայ քրոջս, նա վզիս փաթաթուելով, լացակումած շնջում է:

— Աղի ջան, մեզ մենակ ես թողնում...

— Ձէ, չէ, աղիդ ջան, չէ՛. դեռում եմ փող աշխատելու, որ դուք լաւ ապրէք: Դժուար է հրաժեշտի բաժանումը... բայց բաժանուելի, մարդաստար մեքենայի տասնեակ ճամբորդների մէջ տեղ գրուելով:

Հարապատենքիս եւ ինձ բաժանող միջոցում փոշի մնաց, փոշու յետեւում՝ լացող մայր ու ջոյը, իսկ առջեւում՝ Լոռեստան վազող մի անխայտ ճամբայ, որ ինձ թէ՛ վախ եւ թէ՛ յոյս էր ներշնչում:



Կայան, կամ քումիլ թիւ քսաներկու: Մի խելագար գետ, որ փչում է կողերը զարերի վրայ, իսկ քարերը՝ զարեր չեն, լեռարմասներ, որոնք գետի զայրոթը փրփուրի փոխած՝ խօժուս նայում են հեկաների պէս եւ նրանց ահարկու քարային նայաւածքի տակ եւ փրփրակալած ջրերից շատ վեր՝ կառուցուել է մի կայան, որտեղ կեանք կայ եւ ետուն աշխատանք:

Այդ կեանքի մի մասնիկը ես եմ: Ճըրմանսիական կապալառու ընկերութեան պահեստում աշխատող, մէկն գործի մասնակցող մի պաշտօնեայ:

Ընկերութեան զարկերակը փապուզին է, որ զէշըր ու ցերեկ փորում են անդուշ, անդադրում, որի անցքով մի օր սյիտի ուսրայ վայրատարժը, հարաւից հիւսիս, Դպրացում սովորած Փրանսերէնս այստեղ հրաշք է գործում, դարձնելով ինձ մէկն գործի պիտանի:

Փապուզու մէջ շփոթ է ստեղծուել,

խաւացի մասնազէտները խօսում են, բացատրում իրենց միտքը՝ կէս խաւերէն, կէս Փրանսերէն, որ փապուզու մէջ հորատողները փափուկ, փխրուն հողաշերտի են հանդիպել, դորձը շարունակելու համար անհրաժեշտ են կազնու գերաններ, որպէսզի հորատման աշխատանքը անվտանգ շարունակել կարողանան:

Իսկոյն օրոշուեց, որ խաւացի փայտի մասնազէտ միտի Ձիցին, եւ եւ տաօը լոռ փայտահատ բանուորներ մեկնեն գետի հոսանքն ի վեր՝ սասնելահեղ կիրմեարի վրայ գտնուող գետափնեայ կողմուտը, պէտք եղած գերանները հայթայթելու համար:

Կազմուեց հինգ աւանակներից բաղկացած մի կարաւան, որունց վրայ բարձեցինք վրաններ, փայտահատ գործիչներ, խոհանոցի պիտոյքներ եւ պահածոյ ուտելիքներ:

Կարաւանը անմիջապէս համբայ ելաւ դժուարանցանելի մի կածանով:

Գերանների անդափոխութիւնը պիտի կատարուէր ջրի հոսանքով, դրա համար էլ թիւ քանակիւ կայանում գերանները զետեց տրտալու յարմարութիւններ պիտի ստեղծէին:

Առաջին օրը դրազուեցինք վրաններ լարելով:

Միտի Ձիցին օրուայ աշխատանքից յոգնած, ընթրելուց յետոյ ջուհ մտաւ: Իմ ջունը չէր տանում: Վրանի մէջ պտուկած՝ մտածում եմ մերոնց մասին... յիշում եմ նաեւ մեր հարեւան հիւտնի աղջիկ՝ Փռտիկին, որի հետ հրեմն աչքակապուկ էինք խաղում... Յաճախ, անդուշտութիւնից, ձեռք ջուտ էր նրա ասանելիցամեայ նորահատ ստինքներին... Սեղ անդուշտութիւնը երկուսիս էլ դուր էր գալիս եւ նա կարմրում էր: Նրա կարմրութիւնից ես աւելի քան հանոյք էի ըստանում... էլի աշխատում էի որեւէ մանրամասնութիւն յիշել Փռտիկի հետ պատահած զէպերից, երբ վրանից ջիլ հեռու, յանկարծ, աղմուկ եւ իրարանցում բարձրացաւ, որին յաջորդեց մեր փայտահատների զոռում-զոյումը:

Ազդկարար վայրի խոշորի մի խմբակ էր, որ սարից իջնելով՝ անտառում փռած տերեւների տակ կաղին էր փնտռում:

Տ

Վաղ առաւօտեան, Միտի Ձիցին սեւ ներկով բազմապատկման նշաններ էր զբնում կտրուելիք ծառերի վրայ եւ ինձ էլ բացատրում, թէ ինչպէս պիտի սղոցել: Ես շատ չուտով նրա վստահութիւնը շահեցի ու նա մի օր մայուց յետոյ, մեզ բերող կարաւանի հետ վերադարձաւ թիւ քաններկու կայանը:

Տասը լոռ փայտահատների հետ, ժրբաջան հատում եմ ծառերը եւ հարթացրած ճանապարհով քարշ տալով, հասցրեում գետափ ու պատրաստում՝ ջուգ նետելու համար:

Հաճելի օրեր եմ անցկացնում աղաաբնութեան մէջ: չորս կողմս կանաչութիւն է, ցերեկը՝ խաղաղութիւն, իսկ գիշերը՝ գետի ջնարեր խշշոցը, որ ավերակէք տարածում է օդի մէջ:

Իրիկնամուտին, փայտահատները փռտած տերեւների տակից կաղին են հաւաքում եւ դիւերը, խարոյկի ժողիբի տակ թաղելով՝ բովում: Ես հանձնեցով ուտում եմ խորոված կաղինը, որ շիշ դառը ընկոյղի համ ունի:

Փայտահատներն աշխատում են եռանդով: Ես առիթ եմ ունենում թափառելու կուսական անտառում, մա՛նաւանդ ճաշի մօտերը, երբ արեւը շաղշում է անտառի վայրի ծաղիկների վրայ եւ ստեղծում մի ծաւալուն գորգ, որի վրայ սփռւած են զունաւոր ծաղիկներ:

Մի ժիր առուակ խոխոջում է ծառերի արանքով: Ջրի երգը ինձ դրաւում է, յիշում եմ մանկութեան օրերը, երբ մեր դիւղում խաղում էի անհող, արեւոտ առուակի ափին... Այսպէս, մանկութիւնս յիշելով՝ նայում էի ջրի քրջեցող հոսանքին, երբ նկատեցի, որ ջուրը ծաղիկներ է բերում... Նրանք ջրամոյն գալիս են եւ անցնում: Բռնում եմ մի քանիսը, թում է ձեռքով քաղուած ծաղիկներ լինեն... Վերդեօք մեզնից վեր, անտառում ապրողներ կա՞ն, խորհում եմ եւ քարում հոսանքն ի վեր: Քիչ յետոյ անտառը վերջանում է մի բացառի շուրջ, որտեղ ճարակում են մի քանի կոլիեր եւ սլխարներ, Հօտին պահպանութիւն է անում մի

հակա դատիրւ. զլուրը թաթերին՝ ներ-
կում է հանգրտո:

Ենից վախենալով՝ կրկին մտնում եմ
անտառ, անուակի ափով բարձրանում:
Ձուրը կրկին ծաղիկներ է բերում...:
Քիչ յետոյ նկատում եմ ծաղիկ նեատղին,
որը ջրափին նստած՝ ծաղիկներ է նետում
հոտոջ ջրի մէջ:

— Բարե՛ւ, — ասում եմ մտնեա-
լով:

Նա ցնցւում է իմ ձայնից եւ, զլուրը
կախ՝ շիկնում:

Մի գեղեցիկ, լուռ պարմանուհի է,
երեւի ոչխարի եւ կովերի պահապանը:
Հագին կարծիք ծայ-ծայլ հագուստ ունի,
ակտիւներին՝ օգեր եւ ծածերի երկու ա-
ռատ հիւսք, որ ցած իջնելով՝ քսում էին
խոտերին, ծաղիկներին:

— Բարե՛ւ, — կրկնում եմ աւելի
համարձակ եւ լուռ անպանութեամբ:

— Ինչո՞ւ ես մեր ոճով խօսում, դու
հօ լուռ չես...:

— Իսկ դու ինչո՞ւ ես ծաղիկները
փրցնելով ջուրը նետում, — հարցնում
եմ աւելի աշխուժացած:

— Սրանք իմ լուր տանողներն են, —
բացատրում է եւ դէմքը բարձրացնելով
նայում աչքերիս:

Սեւ աչքերի նայուածքը շատ հաճելի
թուաց ինձ, արեւով թրծուած թուի դէմ-
քը եւ կոկոնելու պատրաստ շուրթերը,
հրահրում են արեանս վաղքը:

— Ծաղիկները ինչպէ՞ս լուր կը տա-
նեն, — խօսակցութիւնը չընդհատելու մի-
տումով, շարունակում եմ:

— Իս ինչո՞ւ եկար, — կտրուկ պա-
տասխանում է զարմանք պատճառելով:

— Իսկ դու ինչի՞ց ենթադրեցիր, որ
ջրի հոսանքով տարուող այդ վրաստար
ծաղիկները իմ ուշադրութիւնը պիտի
դրանեն:

— Քանի օր է, որ ամէն քայլափո-
խում զաղտազօղի հետեւում եմ քեզ...:
Երբ մօտենում էիր անուակին, ես ծաղիկ
էի ուշարկում, — ասում է մի շնչով եւ
շիկնում, աչքերը հակում վար, քաղցրա-
նում:

Իմ մէջ ալիքաւորում է մի շարժում,
որտեղ մէջ պատուարներ են քանդում,

որտեղ մէջ խենթութիւն է խլրտում, ես
ցնցւում եմ ներքին երջանկութիւնից:

Անկաշկանդ բնութեան ծոցում, այս-
պէս անսպասելի, հանդիպես մի դեղանի
աղջկայ, որ այնքան պարզ եւ անսեւեւթ
խոստովանի իր սիրոյ զգացումները...:
Տատանում եմ, չզիտեմ տարփասէր ար-
ջի նման յարձակուեմ ու գրկե՞մ այդ ջր-
մութեան աղբիւր աղջկան, սեղմեմ բա-
զուկներին մէջ եւ կրակ տամ վառե՞մ,
թէ ասպետի նման ծունկի դամ ու պատ-
շաճ ձեւով յայտնեմ իմ բունկող սէրը:

Նա հանդարտ՝ ոտքի է կանգնում,
թօթափում է վրայի ծաղիկները եւ ամե-
նայն խաղաղութեամբ առաջարկում:

— Կաթ կը խմե՞ս, դեմ կթեմ-բե-
րեմ, — ասում է այնքան սրտանց, որ
կարծես իր տան հիւրը լինեմ:

Ես յուզումով դեռ նայում եմ նրա
սլացիկ եւ դեռահաս հասակին: Լոռեա-
տանի արեւը շուտ է հասունացրել, ան-
կաշկանդ ասինքները խլրտում են թոյլ
հագուստի տակ, ամենաթեթեւ շարժու-
մից եւ մատնում իրենց ըմբոստ գոյութիւ-
նը, հրահրելով իմ ցնորուող վիճակը...:
Իայց այդ աղջիկը զարմանալի ջերմ նայ-
ածք ունի եւ կախարդական ուժ, որ իմ
մէջ զուպում է ամէն խենթութիւն:

— Ասացի կաթ կը խմե՞ս, — կրկին
հարցնում է ձայնի ամբողջ քաղցրու-
թեամբ:

— Չէ՛, սպասիր, ինձ թում է երա-
զի մէջ եմ, — շնջում եմ անկեղծու-
թեամբ:

— Երո՞ղ, երա՞ղ...: Երկու տարի է,
որ ես ապրում եմ երազելով, — ասում
է ու շիկնում զաղտնիք յայտնողի պէս:

— Այդ ի՞նչ երազ է, որ երկու տարի
շարունակում է, — հարցնում եմ աւելի
հետաքրքրուած:

— Դա երազ չէր, իմ ճակատադիրն
էր, որ գուշակից մեր ցեղից մի անծա-
նօթ կին: Երկու տարի ատալ, նա եկաւ
երեսան շալակին, մտի ափս կարդաց եւ
դնաց: Ես հաւատում եմ այդ կնոջ գու-
շակութեանը: Մի կնոջ համար գուշակից,
որ քնական մահով չի մեռնի, եւ այդ կի-
նը, մի քանի ամիս առաջ անտատում մո-
ղորակելով՝ յովազին կեր դարձաւ, իսկ
ինձ համար գուշակից, որ հետո՛ւ-հետո՛ւ

տեղից մի անծանօթ մարդ կը դայ աւ կը մուրրուի այս անտառի մէջ...

Հարուած նայում եմ նրա լուրջ դէմքին եւ մի պահ վախով համակուամ' :

— Ես չեմ թողնի, որ դու մուրրուես, — յուսադրում է մեզմութեամբ, — դու այն մարդն ես՝ որին ես երկու տարի է, որ սպասում եմ... : Ես չեմ փորձեցի, դու հասկացար ջրի երեսի լողացող ծաղիկներին միաժեր :

Ես արդէն հասկանում էի այս պարզ, շեշտակաւ աղջկայ զգացմունքները, երբ անսպասելի պահանջեց :

— Տա՛ր ինձ, տ'ար որ ուզում ես, տա՛ր, ես կը դամ թեզ հետ, հետո՛ւ, հետո՛ւ տեղեր :

Այրքան պարզ եւ անմիջական խոստովանութիւնից դարձացած՝ նայում էի նրա սեւ աչքերին, որոնք անթարթ ինձ էին նայում եւ կարծես թէ պատասխանի սպասում :

Իմ պատասխանին նա չպասեց, ծաղիկներ քաշելով՝ շաղ առեց ու քրքջալով դնաց իրին պահ արուած անտառներէ մօտ :

Այդ պահին, հանդիպակաց բացատի շուրթից լսուեց մի կանչ ու ես տեսայ մի միւրուքաւոր մարդ, որ դայը ձեռքին՝ հանդիսուոր մօտեւում էր ճարակող անտառներին՝ «Ռոյնա՛, Ռոյնա՛» կանչելով :

Հովի պէս փախչող աղջկէր եղնիկէ թեթեւ վազքով հասաւ մարդուն եւ, դարձն առնելով՝ սկսեց մի կողմ կիթել : Իսկ մարդը մի հայտնաք ձգեց իմ կողմը եւ, ծառերի արանքում մարդ շնկատելով՝ ընկընեց խօսել աղջկայ հետ :



Երազից սթափուողի պէս կանգնել եմ երբող տուռակի ափին : Դեռ մի քանի ծաղիկներ մնացել են հազուադէպ փախչած : Անտառում շարժում է մի կանաչ ալիք, կանաչ շուրթերից սուրբացող մի երգ, որ քա՛ղջը պատարանք է թում... : Երկնքից կապոյտ երջանկութիւն է իջնում եւ լքողուած սրտիս մէջ : Թեւատրուած եմ մի

տոնակած զգացմունքով : որ՝ արդէն արդամարդ եմ եւ սիրելի կարող եմ այն կիթուոր աղջկան, որ կակաչի նման բացակ է կաթնատու կովի սաքերի արանքում...

Ուզում եմ զտալ անտառով մէկ, ուզում եմ, որ անսպասելի մի բան կտատուի... երբ յանկարծ լսում եմ :

— Հօրս ճամբու դրի, — սթափեցնում է ինձ եւ խոնարհ մատները հանդուցում իրար :

Ես նայում եմ իմ առջեւ կանգնած լսու աղջկան, որ ժպտում է արամունքից դուր եւ սեւ աչքերի հմայքով ինձ կաշկածողում :

Ջգոյլ մօտենում, շաշափում եմ աստերը :

— Անուշ Ռոյնա՛ է, — հարցնում եմ զողողացող ճախով :

— Ռոյնա՛ից իմացար, — նայում է խուլարկու :

— Այն մարդը այդպէս կանչեց :

— Հայրս է, — շնջում է եւ սեղծում ինձ :

Անտառի խորհրդուոր լուսթիւնը երկուցով է լցնում մեր սրտերը... : Ես նայում եմ իրար եւ վախենում այն անծանօթ զգացումից, որ ամէն մէկի հետ կանաչում միայն մի անգամ է պատահում...

— Ռոյնա՛, Ռոյնա՛, — շնջում եմ կախարդուած եւ կեանքս դնում այդ ընչուկի մէջ :

— Քո անո՛ւնը, — հարցնում է, միշտ իմ կրակուող հայտնաքից այրուելով :

— Չաւէն... :
— Ի՞նչ միաք ունի... :

— Քաջ, անպարտելի, — տառում եմ ներքին կրակա թառերի մէջ ղծելով :

Աչքերը, կակաչի միջուկի պէս սեւ, բարձրացնում է վեր եւ ափերը պահում որսիացող ստիւքներէ վրայ, երկուգած շնջում :

— Առտուած, իմ սիրած մարդուն ինձ ուղարկեցիր, յաւիտեան շնորհակալ եմ քեզանից :

Այդ վիճակում նա տնքան ասք էր, որ կարծես թէ իմ սիրոյ հնոցում այրուած կարօտի մոխիր լինէր : Ես նայեալ պաշտամունքով խառնեցի իմ հո-

թիան... ևս միանգամայն խառնուկց
իմ էութեան ու ես նրա վարսերի միջից
կեանք էի շնչում, իսկ սառք չբերերից՝
արեւ, Եւ ես արբեցի արեւ ըմպելով:



Գիւեր է:
Առողիբի լոյսով ուրուաղծւում են
սարերն ի վեր մաղլցած ծառերի կատար-
ները:

Ես ապաւին վառւում եմ Ռոյեայի
տննչանքով, խորհրդաւոր անստի մէջ
երգող տառուակի ափին: Ինձ թւում էր,
թէ առուակի ջրերը կրկին վայրի ծաղիկ
են տանում երգելով... Ես վառւում եմ
քսանածեայ մարդու անզուսպ խնթու-
թեամբ, իմ էութեան մէջ բորբոքում է
Ռոյեան:

Փայտահատ բանուորների վրանում
լոյս կայ, բայց ես դիտեմ նրանք ջնկ են
յոզանք, դադարած մարդու խորը ջնով:
Վրանի մէջ խլչալով վառւում է քարքիթի
նրազը եւ ներմակ լոյս սփռում, բայց ինձ
քաշում է խաւարը, քաշում այնտեղ՝ ուր
բունը թիգ ընկած կաղնու ծառ կայ եւ
թափում ծաղիկներ... Գնում եմ լոյս-
փելու, ստուգելու իրաւանութիւնը, որ
երազ է թւում...

Մթութեան մէջ ճշում է մի խոնկար՝
գիշակեր դազանի ճանկերում բռնուած:
Քարքիթի նրազի լոյսը շատրուանելով՝
զնում եմ ծանօթ տառուակի հասանքն ի
վեր... Ուզում եմ հաւատալ, որ հան-
գիպել եմ Ռոյեային:

Եստ մօտից լսում է ստամների կը-
նըրտոց, լոյսն ուղղում եմ ձայնի կողմը,
տննում եմ գիշակերի շարժուող մորթը,
նւ աչքերի Փոսփորային փայլը: Մարտու,
աճ ու դարձանդով է լցւում սիրտս: Լոյսն
աւելի եմ կենտրոնացնում յօշոտող դա-
զանի վրայ: Ես մի պահ արիւնստ դուռը
մեկնում է վեր, դռնում աւարկու, յետոյ,
խոչին վարժուելով՝ անսարքեր, կրկին
լսփում է արիւնստ չրթներով...-

Վերադառնում եմ վրանս ու մեկնում
մահապալին: Մտածում եմ յօշոտող եւ
յօշոտուող կենդանիների մասին: Մտա-
ծում եմ սիրոյ մասին, բնութեան ցանա-
զան հակասութիւնների մասին ու ջնում:



Լոյսը զօգանջի նման իջնում է կա-
պոյտ երկնակամարի պոռնկից, սրին
գիշակում է արեւի սուկ լեզուակը:

Անտառը արթնանում է վեհաշուք
խաղաղութեամբ եւ գիշերուայ սարսափը
ջնդում է ծառերի միջից... Ու ջիչ յե-
տոյ կրկին խլում է անստի լաւթիւնը
զնում է փայտահատների կոցինը, գի-
շակեր դազանի նման յօշոտում կաղնու
ծառերը եւ, ամէն մի ծառ ասպալուելուց
ստալ՝ սրբում, աւլում է երկնքի կապոյտ
խաղաղութիւնը...

Այդ կանաչ ջարդի կազմակերպողը
Նո եմ, ինձ էլ ուրիշներն են կարգադը-
րում... Հաշտում եմ հատուած կաղնու
դերանները եւ մի հաշտեցուցակ տա-
ղարիւմ կենտրոն... — Ընացեալստեղ, ըս-
տանել եմ հարիւրհինգ հաս ծառ...
Մի օր յետոյ անշուշտ, դնահատանքի
կարժանանում կենտրոնից՝ իմ կազմա-
կերպած ջարդի համար...

Արեւը բերում է լոյս եւ խաղաղու-
թիւն... Մտածում եմ ջարդը՝ ՎՄԻՆ իր
համբով, կեանքն իր համբով:

Մընթաց ջրերը աղկում են Ռո-
յեայ՝... ծառերը ծափ են ասլիս՝ Ռո-
յեայ՝... ինձ կանչում է մի ծանօթ տա-
ռուակ, վայրի ծաղիկներ բերելով... Հի-
մա Ռոյեան ինքն է կանչում: Կապոյտ շօր
է հագել, որը ծառ-ծալ իջնում է մինչեւ
սեւ անդրափարաքով ծածկուած ծնկե-
րը: Ինչքին տղիս կայ, աչքերում՝ յա-
ւերժութիւն: Թեւաբախում է թռչելի ան-
կարող աղանաւ ծաղի նման եւ գայիս է
ու փակչում արտիս...

— Չաւէն, ի՞մ ձիււոր, ի՞մ կարիճ:
Իմ քաղ Չաւէն, ուրախութիւնից գիշերը
լեւ ջնկ... Չաւէն, կենց էտեղ, այս
դազաններով ընդան անստի մէջ, մի
վրան դարկիր, աշխարհից հեռու, մարդ-
կանցից հեռու, որ ես ու դու սպրնք
ինչպէս մարդ ու կին... Իմ աշխարհը դու
ես, իմ կեանքը դու... Ես էլ Ասածոց
սարիչ բան չեմ ուզում, այսքանն էլ լոյս
է մի բոս աղկայ համար, իմ աչին Չա-
ւէն, իմ գլխիս տէր Չաւէն...

Այսին վրայ դում եմ նրա սառ ար-
ցունքը:

— Ռոյնա՛...
 — Ի՞նչ...
 — Ռոյնա՛, արցունքդ ինչի՞նչ կամար է...

— Սա բախտուարութեան արցունք է, Ջալէն. իմ բախտս գուշակել էին, որ օտար մարդու կին կը դառնամ, — եւ գըշտուիլ սեղմում է կրծքին ու մեղմ շէշտուում, — իմ օտար Ջալէն, իմ անօրէն Ջալէն, իմ թաղաւոր Ջալէն...

Նստում ենք իրար մօտ՝ բնաթիւք ծառի վրայ: Մէջքին մեղմ հարուածելով, խրատում են սիրալիր.

— Տես, Աստուած մեր բախտը նախօրօք կապել է իրար, մեր նախազգայիւրի պարզութեամբ, — նա չի թողնում, որ խօսքս վերջացնեմ, արցունքոտ թուշը դէմ է անում շուրթերին.

— Խօսելու փոխարէն համբուրիր...

— Մեղրից քաղցր ես...

— Մեղրի՛ց, — կրկնում է ցնծութեամբ ու յանկարծ երջանկաբեր լուր ստացողի պէս խայտում, ազատում է գրկիցս, — հենց հիմա, թեղ կամար վայրի մեղր կը բերեմ, — եւ սուրում է եղնիկի պէս թեթեւ, նոպատակի պէս սլացիկ: Ես գղջում եմ մեղրի անուն տալուս կամար:

Ժամանակը խճուում է, խառնում է անտառի անաւոր շշուկին, ծառերի կանաչ վարսերը կապոյտում մխրճուած սրբում, աւրում են երկնքի խաղաղութիւնը...: Չարագուշակ սուրում են ծառերը. օրօրում են նաեւ իմ աննյանքները՝ մեղրի հասելից զնայող մեղրահամ աղջկայ կամար, որ ուշանում է, չի զայրա...



Չարաբաստիկ երեկոն սեւ ներկ է թափում աշխարհի վրայ, Լոսնատանի վըրայ, թերեւս միայն իմ վրայ:

Գիշերը բոթաբեր՝ յդի է պարզանքով...

Որոնումից յոգնած, յուսահատ, նըստել եմ առուակի ափի նուիրական ծառին...

«Ռոյնա՛, Ռոյնա՛», լսում եմ զաւակին կորցրած մօր ուրբը...

«Ռոյնա՛, Ռոյնա՛», կանչում է մարբը աղիխարչ, անդադրում:

Ուզում եմ ճիշտ խառնեմ ողջկան կանչող մօր ուրբին, բայց մայնա խզուել է, հազար-հազար անգամ աւելի եմ կանչել վայրի թաւուտներում, զապանների ոսնահատքերով թափառել եմ ժամեր ու կանչել...

Իմ մեղր Ռոյնա...

Մթութեան մէջ, Հովարգել Երազը ձեռին, մօտենում է ինձ միրուքաւոր մի մարդ.

— Բարեկամ, այս կողմերում աղջրկայ յե՞ս հանդիպել, կազոյտ շապիկով, տասնեւչորս տարեկան մի աղջկայ...

Կանգնում եմ օտքի գծի հայեացքով.

— Հայր, այս կողմերում վայրի մ՛՛ղջր կայ...

— Կայ, որդիս, գիշերով դեռ ոչինչ, ցերեկով էլ չես կարող մօտենալ... Հրէն էն սարի անմատչելի մի խոտուում, վայրի մեղրուանոց կայ... Էդ մեղրին ո՛չ արջը կարող է մօտենալ եւ ոչ էլ Աստուծոյ ըստեղծած մարդը, — բացատրում է մի պահ, յետոյ օտարտի նայում, — էս գիշերով, ի՞նչ մեղրի մասին ես հարցընում...

Ձեռն պատասխանում, շուռ եմ զայրո, որ արցունքներս չտեսնի եւ զանդազ հեռանում եմ յուշարկաւորի նման...: Բայց ուշ է սրդէն, աղջամուղջի մէջ մթնում է իմ սիրած անտառը, կանաչ ծառերը խաւարի մէջ սեւանում, սեւ մորձոք են զատնում: Սեւ է ամէն ինչ, սեւ է եւ այն յոյրսը, որ զուցէ վերադառնայ Ռոյնան, տունաց մեղրի...

«Ուշանում ես, Ռոյնա՛, իմ այծեամ Ռոյնա՛... սպասումներս լեղի դարձան, կարօտներս կուրացան»: Խնկի սէրս ինձ սանում է գետի ջրերը...

Գուցէ այդպէս էր նրա եւ իմ ճակատագիրը. որտանց հաւատում եմ լուր կնոջ գուշակութեան. «Կը դայ ու կը մոլորուի այս անտառի մէջ»...: Մոլորուել եմ ցաւի եւ կարօտի մէջ, մոլորուել ու մոռացել եմ կեանքն ու աշխարհը, գնում եմ յանձնուելու դետի ալիքներին, որոնք հիմա էլ աւելի ահարկու չեն թւում: Գընում եմ արդէն մահուան հետ հաշտը...

ած... Ու, յանկարծ, ուղեկորոյս մը-
 քուքեան մէջ, յուսահատութեան մահա-
 մերձ պահին, հրաշքով յայտնուած է մա-
 րը՝ լուսաւոր տեսիլքի նման, յողնա-
 տանջ ու հեռուներից եկած, կանգնուած է
 խաւարում, իրար հրհրող ալիքներէ վրայ
 եւ լուսաւոր ձեռքը պարզած աղերսում է
 լացակումած։

— Մի՛ արա, Ջուէն ջան, մի՛ արա...



Մեր հիւրասենեակից յորդող երգին
 խառնուած է կանացի ծիծաղ, որ դալիս՝
 ներկան կամարում է անցեալիս վրայ ու
 ինձ քաշում է մեր տան արեւով ողողուած
 պարտէզը, որտեղ ծառերը ծաղկել են եւ
 ծաղկած ծառերի մէջ թռչունները սիրտ-
 բանում են սարփանքով։

Նստում եմ պատշգամբի տուփէ գլխ-
 ւած մենաւոր աթոռին ու գիտում դար-

նանային դուարի կեանքը, որ այնքան
 քաղցր է եւ սիրով յորդուն։

Բայց զարունն ինձ հանգիստ չի տա-
 լիս, մտքով տարուած՝ դնում եմ լոռե-
 տանի իմ դարուն օրերի հետքերով, մը-
 նում գետափի կուսական անտառը, որտեղ
 վայրի մեղք կայ եւ վայրի ծաղիկներ։
 Քայլում եմ հսկայ ծառերի արանքով,
 հասնում մի բացատի։ Նրանից հեռու, դի-
 մացը, բարձրանում է անանցանելի մի լեռ-
 որի բարձրադիր փչակում անեղազին բա-
 նում են մեղուները։

Անտառի մթին արահետներով վա-
 զում է մի աղջիկ՝ կապոյտ ծալ-ծալ շա-
 բերով, մազլցում է լիբան յոնքին կրած
 կածանով՝ հասնելու համար մութ անձա-
 ւին, որի մուտքի վրայ բղղում են, ամ-
 պում հազարաւոր մեղուներ... Բարձրա-
 նում է աղջիկը՝ շտապ-շտապ, մեղք բե-
 րելու համար... Բարձրանում է էլի՛
 վեր, հասնում նարնջադոյն ամպերին,
 մոլորում ամպերի մէջ ու յետ չի գա-
 լիս...

ՍՈՒՐԷՆ ԱՍԵՏՐԵԱՆ

ՆԳԱՐԻՉԸ ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԷ

ԻՐ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ

Պիտի չուզէի խօսիլ — նիզն ապարդիւն է,
 Եւ ապարդիւն է նզնիլ:
 Սակայն կը պնդէք:
 Ինչպէս իսկական սէրն առանց սեռի
 Կը բարգաւաճի,
 Արուեստն ալ նոյնպէս:
 Սէրը չի ճանչնար ո՛չ սեռ եւ ո՛չ ալ
 Սեռի խտրականութիւն.
 Ո՛վ կրնայ այտոնդ չհամաձայնիլ,
 Որ գեղեցիկ են մարդիկ աւելի՛
 Կանակէն դիտուած:
 Ուրեմբն զգոյշ շիտակ գիծերու
 Անէծքէն՝
 Համայն մարդկութեան ուղղուած:
 Եւ ինչո՞ւ ջանանք ջղապիրկ ուղղուիլ,
 Երբ կոր է արդէն ճշմարտութիւնը,
 Ինչպէս եւ կոր են շողերն արեւուն՝
 Հաւատարմափիւռ,
 Հաւատարագոյ:
 Զի ով ճոխութիւն կը փնտռէ,
 Խնդրում կը գտնէ միայն,
 Ու կը խեղդուի:
 Պատուաբ պէտք չէ ունենայ յատակ,
 Դիտողը պէտք է իյնայ գլխիվայր՝
 Յալխոնապէս,
 Ինչպէս սիրոյ մէջ, եւ միջոցին մէջ
 Տիեզերական:
 Պատուաբ պէտք չէ ունենայ սահման.
 Ո՛վ պիտի յիշէր շրջանն արեւին,
 Եթէ շրջանին շողերն իր շրջանի,
 Ամենատարած,
 Ամենապարզու:
 Պատուաբ Վերայ՝
 Պէտք է յանձնուի համատեղութեանց
 Զրապտոյտին,
 Եւ անցնիլ միւս կողմ...
 Եւ այսպէսով ալ կ'աւարտեմ
 Խօսքս՝ կիսաւարտ...

ՎԱՐԱՆ ՈՒՃ

Ն. ՊԵՇԻԿՈՒՇԷԼԵԱՆ

Մ Ի Բ Բ Ո Ն Ե Ջ Ի Ա
(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ)

2

ՕՂԱՆՃԱՆ (ստուգել է յետոյ, որ թրամբին հետացած է, կ'ապացանայ, կը ծնրադրէ ու կ'ապօրէ) — Է՛յ ողորմած Աստուածս, Գե՛նէ իմաստաբուն չէ, որ կը խնդրեմ, հարստութիւն չէ, որ կ'ուզեմ, կնիկս համբուրելու արժանի ըլլալ ու չէ, որ կ'ազատեմ: Է՛յ աշխարհիս անէրն ու տիրականը, ամենակալ Տէր, անանկ ճը, անանկ ճը, անանկ ճը ըրէ, որ վաղը Փարիզէն մեր քով գալիք կրողը ու սա մեր կրող կնիկը բնաւ իրարու հետ հաշտ ըլլան: Անանկ ճը, անանկ ճը, բայց անանկ ճը ըրէ, որ սա կրողը ու կնիկս իրարու հետ լուծ ու կտտու ըլլան: Կնիկս կտտու ըլլայ, կրողն ալ լուծ ըլլայ: Զէ՛, չէ՛, Աստուածս, սրբապարտութիւն ճը. ուրիշ տեսակ թո՛ղ ըլլայ: Եունը կ'ա ըլլամ ու հրկուքին վրայ ալ հաջեմ: Այո՛, շնութիւնը գուն ինծի ձգէ, կնիկս թո՛ղ կտտու մնայ, բայց Նուրհան Պարոյրը մուկ թո՛ղ ըլլայ: Ազատս, վախկոտ մուկ ճը, Կիները տախտէն չեն վախմար, բայց մուկէն կը ստարապիին: Մուկէն ստակացող կտտու ճը թո՛ղ ըլլայ կնիկս: Աս է ամբողջ աշխոս: Աս գործին մէջէն ինծի բաց ճակատով գուրս հանէ: Եթէ ազաչանքս կտտարուի, Մարտիկոս երթալու պէս, Հայոց եկեղեցիին մէջ, անուխի հաստութիւնով մոմ ճը կը վառեմ: Ասկէ դաս, ազոթագիրք ճը կը դնեմ ու պտտու Մարիամին կը նուիրեմ: Աստուած վկայ, ո՛վ Տէր, անկէ ետքը կատարեալ հաւատարեալ ճը կ'ըլլամ ու փառքդ կ'երգեմ: (Ոտքի կ'ելլէ քիթիցս, գահունակ, ժրջտուն. մեքերը կը շփէ, տրամադրութիւնը շտկուած է):

3

ԲՐՈՒՆԹԻ (կը մտնէ, գունիը չափազանց փոքր գլխարկ մը դրած: Պրուսիի մը Քալուածքով ու մեկրով կը դառնայ սեղանին շուրջը: Վերջապէս կանգ կ'առնէ) — Պարոն նպարտախճառ, ինչպէ՞ս կը գտնես դիմարկո՛ւ ՕՂԱՆՃԱՆ — Գլխա՞րկդ...

- ԲՐԼԱՆԹԻ — Այո՛, ինչպէ՛ս կը գտնենք...
- ՕՀԱՆՃԱՆ — Կեցի՛ր նայի՛մ... (Կնոջը շուրջը կը դառնայ, ամօր գլխում վրայ բաց մը փնտռողի մեղով) :
- ԲՐԼԱՆԹԻ — Ըսէ՛ տեսնենք, ինչպէ՛ս գտար... :
- ՕՀԱՆՃԱՆ — Դեռ չգտայ : Փնտռեցի ու չգտայ :
- ԲՐԼԱՆԹԻ — Ձեռ գարձանար : Անճաշակները կոյր կ'ըլլան :
- ՕՀԱՆՃԱՆ — Գլխուդ վրայ գտնուող ատ բանը՝ դուն գլխամբկ կ'անուանես... :
- ԲՐԼԱՆԹԻ — Իսկ դուն՝ գլխարկիդ տակ գտնուող ատ բանը՝ գլխուի կ'անուանես... :
- ՕՀԱՆՃԱՆ (տրամադրութիւնը մասամբ վատթարացած, կէս գայլաբոյձով) .— Կնիկ, գլուխ ըսածդ Փապրիքա մըն է : Ամէն գլուխ բան մը կ'արտադրէ : Գլուխ կայ, որ բանաստեղծութիւն կ'արտադրէ. գլուխ ալ կայ, որ զորք կ'արտադրէ : Աս գլխարկ անուանածդ իմ Փապրիքայիս շատ համարձակ տեսնած է : Բանաստեղծութիւնով գլխարկ կ'անուակը : Փապրիքա անգամ չ'անուակը : Ես ապուշ չեմ, որ բանաստեղծութիւն արտադրեմ : Բանաստեղծութիւնը ի՞նչ է : Ուտիկ՞ք է, խմիկ՞ք է, Ժը-խիկ՞ք է, հազնիկ՞ք է, վտակիկ՞ք է, թէ զովացուցիչ է : Մէջը կտրիկ՞ է բնակիչ : Բանաստեղծութիւնը պանքա՞ կրնաս դնել : Ո՞վ կ'առնէ : Ոսկի ըսես, ոսկի չէ. արծաթ ըսես, չէ՛. թղթադրամ՝, արծեթ՝, ո՛չ ան է, ո՛չ ալ միւսը... Թիթիզ անգամ չէ... Օղ է ու քամի... : Ասանկ է, եւ ըսողը Օհանճանն է :
- ԲՐԼԱՆԹԻ — Գոհա՛ր է, գոհա՛ր... :
- ՕՀԱՆՃԱՆ — Եթէ գոհար ըլլար, կիները բանաստեղծի հետ կ'ամուսնանային եւ բանաստեղծութիւնները իրենց ազնայններէն, վիզէն, կուրծքէն, թիւերէն ու մտանքէն կը կտրէին : Եթէ բանաստեղծութիւնը գոհար ըլլար, գոհարաժամանակը պիտի ծախէին : Բանաստեղծութիւնը ծուխ է, մուխ է, միջրոպով լիցուն քամի է, հազ է, հարբուխ է, հիւժմաստ է, ախ ու վախ է, porte-malheur է : Գլուխը ա՛ս է, ա՛ս, ի՛մ գլուխս, որուն վրայ որքան հիանամ՝ ջիւ է : Ի՛մ գլուխս դրամ չ'աճիլ գիտէ : Ամէնէն շահեկան գիտութիւնը : Դրամ ունեցողը ամէն բանի տէր է, թաղաւոր է, կը հրամայէ... (Հրամայելու մեղք կ'ընէ) : Դրամ չունեցողն ալ Աշխատ Դազարոս մը, որ ստիպուած է մուրացկանին առջեւ անգամ խոնարհելու, մեռք բանալու :
- ԲՐԼԱՆԹԻ — Գոհելիկ ես ու ոամիկ ես : Եւ դուն կը կարծես, թէ գրածով ամէն բան կ'ըլլատ, գրածով ամէն բան կ'ունենաս... :
- ՕՀԱՆՃԱՆ — Անշուշտ : Դրամով եթէ ամէն բան չէ, բայց շատ բան կ'ունենամ : Եթէ վաղը, այս կողմ կամ այն կողմ մէյմէկ տրջակ դրամ նետեմ, կ'ըլլամ ազնուաշուք անձնաւորութիւն : Տակաւին ինչե՛ր կ'ընեմ գրածով. էլը կը վերածեմ ազնիւ միու :
- ԲՐԼԱՆԹԻ (գլխարկը համած աւ մէկ կողմ դրած է) .— Ինչո՞ւ այդ հրաշքը չես գործած ինքզինքիդ համար :
- ՕՀԱՆՃԱՆ — Այդ հրաշքը քանի անգամ կատարած եմ :
- ԲՐԼԱՆԹԻ — Ուրեմն՝ կ'երեւակայեմ, թէ ի՛նչ էիք պատերազմէն առաջ, այսինքն՝ շատ դրամ ունենալէդ առաջ : Կը խնդրեմ, որ այդ հրաշքը քանի մը անգամ ալ գործես՝ բարեփոխուելու համար : Եթէ աս է քու ազնուական մի ըլլալը, ո՞վ գիտէ ի՞նչ էիք անցեալին :
- ՕՀԱՆՃԱՆ — Ես ջեղի կ'ըսեմ ու կը կրկնեմ, որ դրամով գրեթէ ամէն բան կ'ընեմ : Աս ըսողը Օհանճանն է :

ԲՐԱՆՔԻ — Մէկ բան չկրցար ընել ու պիտի չկրնաս ընել՝ զիս հնազան-
դեցնել:

ՕՂԱՆՃԱՆ — Ըսե՛մ պատճառը. դրամը կ'աղղէ խելք ունեցողներուն վրայ:
Դուսն անխելք ես, դուն թուացեալ ես: (Սեզանի քտու կը կանգնի ու կը
խօսի հանտարի շարժումներով, մերթ ալ ձեռքը գարնելով սեզանիմ):
Քեզի բան մը ըսե՛՜մ... լսէ՛:

ԲՐԱՆՔԻ — Երբ կրնաս բան մը ըսել, շնորհով բան մը, կը լսեմ:
ՕՂԱՆՃԱՆ — Մի՛ ընդմիջեր, որ ըսելիքս ըսեմ, շատ տրամաբանական բան
մըն է: Ըսողը Օհանճանն է:

ԲՐԱՆՔԻ (քիկնաքառի մը մէջ ընկողմանելով) — Ըսէ՛ որ գուտընճանմ:
ՕՂԱՆՃԱՆ — Սա սեղանին վրայ, սա կողմը հաղարնոցներ դնեմ, սա միւս
կողմն ալ՝ բանաստեղծութիւններ: Եւ աշխարհի բոլոր մարդիկը հրա-
ւիրէ եւ ըսէ, որ սա սեղանին առջեւն անցնին ու կա՛մ մէկ կողմինը,
կա՛մ միւս կողմինը առնեն: Հիմա թեզի կը հարցնեմ՝ կրնա՞յ զանուիչ
աւանակ մը, որ հաղարնոցները ձգելով՝ բանաստեղծութիւնները առ-
նէ: Ամէնէն առաջ բանաստեղծներն են, որոնք հաղարնոցները պիտի
չսփռուակեն սեղանին վրայէն, որովհետեւ խեղճերուն գորը անօթի է:
Հիմա կրցա՞յ համոզել, որ դրամը գրեթէ կը է ոտանաւորէն: Դրամ շա-
հուտ համար՝ զլուսն ունենայու է, իսկ ոտանաւոր լինելու համար,
անունէն յայտնի է՝ որք ունենալու է — ուրանաւոր —

ԲՐԱՆՔԻ — Գարշելի գոհակ, եթէ Նուրհան Պարոյրի առջեւ ալ այսպիսի
լրբութիւններ խօսիս, ես գետնին տակը կ'անցնիմ: Արդէն թու նպարտ-
վածաւ ըլլալդ իմ թեւերս կտրած է: Բայց եթէ այդքան դարձելի
գոհակութիւններ դուրս տաս, ես գետնին տակը կ'անցնիմ...

ՕՂԱՆՃԱՆ — Հարցում մը. Նուրհան Պարոյրն ալ գետնին տակը կ'անցնի՞մ...
ԲՐԱՆՔԻ — Կը փախի աշտանդէն:

ՕՂԱՆՃԱՆ (քիկնը բացած պարելով) — Գտա՞նք, գտա՞նք Աբիլէսին կրուն-
կը: Լսեցի՞ր ըսածս, ես ալ բանաստեղծ եմ: Այս կէտը իննի ձիւան-
եանը բացատրած է: Աս թի՛չ լաւ բան, սա թի՛չ լաւ բան: Գտանք
գաղտնիքը թե՛ գետնին տակը անցընելու, կրողն ալ փախցնելու:

ԲՐԱՆՔԻ (օտի պէտ ցցուած, քուծալից) — Եթէ գետնին տակը անցնիմ,
չկարծես, թէ հոն պիտի մնամ: Ո՛յ, դուրս պիտի ելլեմ, ու ալ անկէ
ետք է, որ գործ պիտի ունենաս հետս: Անկէ ետքը, թոյնի մէջ պիտի
թաթիսեմ թե՛ ամբողջ կեանքդ թունաւորելով:

ՕՂԱՆՃԱՆ — Արդէն թունաւորած ես: Սա գէ՛տքդ նայէ: Եթէ անօթի Նուր-
հան Պարոյրը հոս ըլլար ու սա գէ՛տքդ տեսնէր, ախորժակը կը փախէր,
հակառակ անօթիին մէկը ըլլալուն:

ԲՐԱՆՔԻ — Զհամարձակիս անգամ մըն ալ զանօթին բառը դործածելու
Նուրհան Պարոյրին համար: Զհամարձակիս, սրբապի՛ղծ: Դուսն իսկէ,
որ իրմով կշտանաս:

ՕՂԱՆՃԱՆ — Այո՛, երկու շաբաթ իրեն կերցնելով-խմցնելով՝ ես ալ ճաշ-
բուն մասնակից պիտի ըլլամ եւ իր շնորհի պիտի կշտանամ:

ԲՐԱՆՔԻ — Ա՛հ, անխելք գոհակ: Դուսն պիտիսէ՛ղ միշտեւ ոտքը միայն ստա-
մոքս եւ ու աղիք:

ՕՂԱՆՃԱՆ — Ամէն մարդ ալ ստամոքս է: Դուսն չե՛ս, թու կրող Նուրհան
Պարոյրը ստամոքս չէ՞: Երկուքդ ալ պոլսեցի չէ՞ք, այոյնքն՝ ստա-
մոքսով ստամոքս չէ՞ք: Պոլսեցիին շատակերութիւնն ու շատախօսու-
թիւնն ըսէ: Մարդ ըսածդ թի՛չ է որ — Մաղայէլի ստամոքս, ամենակեր
ու ամենակուլ: Բայց պոլսեցիները առաջնակարգ են իրիւս ստամոքս:

Իրենց միակ մեծութիւնը ստամոքսային է: Մարդուս սենեցածը ստամոքս է եւ ուզածը սնունդ է: — մարմնի սնունդ, մտքի սնունդ, հոգիի սնունդ: Այսքանով ալ չի վերջանար. աչքը սնունդ կ'ուզէ, ականջը սնունդ կ'ուզէ, մորթը սնունդ կ'ուզէ, մտղը սնուած սնունդ կ'ուզէ: Եւ այլն: Մարդուս ամէն մէկ տեղը ստամոքս է, սուսկ կ'ուզէ: Մարդու հոգով շինուած Փայտիքս մըն է, որ կ'ուտէ աւ կ'ուտուի: Հո՛ղ... կերածը հողէն կ'ելլէ: Ռ'ւր կ'երթայ: Հողին: Գուն կ'նշէ էր: Հող: Ի՛նչ պիտի ըլլաս: Հող: Ասանկ ճշմարտութիւն Օհանճանը կ'ըսէ:

- ԲՐԱՆՔԻ — Ինչպէ՛ս յայտնի է հողագործի գուտի ըլլալը:
- ՕՀԱՆՃԱՆ — Ինչպէ՛ս յայտնի է քու ալ հողագործի աղջիկ ըլլալը:
- ԲՐԱՆՔԻ — Ա՛հ, երկու կաթիլ, երկու կրամ բանաստեղծ ըլլալիք, հասած պիտալ:
- ՕՀԱՆՃԱՆ — Ինձի նայէ, ինձի: Ես եթէ նստիմ աւ մէկ-երկու որ աշխատիմ, բանաստեղծ կրնամ ըլլալ աւ բանաստեղծութեան ամէնէն անմահականները կը գրեմ: Բայց բանաստեղծ մը, որքան ալ աշխատի, նպարտագնահատութիւն կրնա՛յ ընել: Նպարտագնահատ՝ մարդս ծնած ըլլալու է աւ գործին մէջ մեծցած ըլլալու է: Ամէնէն պատասխանատու գործն է նպարտագնահատութիւնը: Աս ըսողը Օհանճանն է:
- ԲՐԱՆՔԻ — Քէ՛ պիտալ ես, թէ՛ կը պարծենաս պիտալ ըլլալուդ:
- ՕՀԱՆՃԱՆ — Նախ՝ պիտալը չիմ...
ԲՐԱՆՔԻ — Հապա թ'նշ ես...
ՕՀԱՆՃԱՆ — Պաքալ եմ: Պաքա՛լ: Պոլսեցիներն են, որոնք պաքալին պաքալսը կ'ըսեն, (Նրորթն արտասանելով): Պաքա՛լ... լորան պաքա՛լ... պաքալորէն...
ԲՐԱՆՔԻ — Հաս մըն ալ ե՛ս ըսեմ — պաքալիարս:
ՕՀԱՆՃԱՆ — Պաքալութիւնն է պրուստի, առուտուրի, գիտութեան եւ գեղարուեստի հիմը: Աս ըսողը պաքալապետ Օհանճանն է:
ԲՐԱՆՔԻ — Եթէ աշխարհի բոլոր վարդերով ալ դարգարուիս, նորէն սոխ ես, նորէն սխտոր ես, նորէն չաման ես, զանի որ պիտալ ես:
ՕՀԱՆՃԱՆ — Գուն գիտե՛ս թէ իմինիս պէս պաքալի խնամութիւն թ'նշ կ'ըսեն « Ծրանայի մէջ — Արիմանթասինն ժէնէրալ: Ստիէթէ մէնէրալի պէս բան մը: Ժէնէրալն ալ գորովար ըսել է: Զորավարն ալ ե՛ս եմ:
ԲՐԱՆՔԻ — Ա՛խ, Աստուած թմ, տս թ'նշ գծուար բանն է հղեր կրկրորդական ուսում շունեցող մարդու մը հետ ամուսնանալը:
ՕՀԱՆՃԱՆ — Ես նախկրթարանը աւարտած մարդ եմ: Եթէ քու ոտած ուսումը երկրորդական է, իմ առածս նախկրթութիւնն է, այսինքն՝ առաջնակարգ է: Աս ըսողը նորէն Օհանճանն է:

Զանգ: Բըլանթի կ'երթայ բանալու դուռը: Կ'երեւի էլլալսի՞մ հետ:

4

- ԲՐԱՆՔԻ — Ի՛նչ ունիս, էլլալիս, տրամադրութիւնդ տեղը չէ, Կիբակի օրով:
- ԷԼՊԻՍ — Բարեւ, Օհանճան:
- ՕՀԱՆՃԱՆ — Բարեւ, էլլալիս, խեր ըլլալ:
- ԷԼՊԻՍ — Տրամադրութիւնս ինտո՛ք տեղը ըլլայ: Էրկանս հետ կուտեցայ:

ՕՀԱՆՃԱՆ (եղգձակամ) — Էրկան հետ կռիւ կ'ընեն, սիրելի էլլիս: Օրինակ տա մերինէն: Խաղաղութեան աղաւթին է, նոյն տաղանէն արձակուած աղաւթին սերունդէն է: Ու անդադար կը հոտոտէ, կը համբուրէ զիս, հրեաներս ու չրթունքներս մաշելու աստիճան: Խիստ պայմաններ կը դնեմ՝ ինծի համբուրելու համար, բայց այդ պայմանները կէտը կէտին կը կատարէ, զիս համբուրելու հանոյքին համար: Իմ աղաւթի է. դուռն ալ, անոր նայելով, աստարակ եղիր:

ԲՐԱՆԹԻ — Քեզի ծիծեռնակ մը պէտք էր, որ գաղթէր ու տաք տեղեր երթար:

ՕՀԱՆՃԱՆ — Եթէ ծիծեռնակ մը չունեցանք, Աստուծոյ ողորմութեանը մտնիմ, քոնէ շրկահաւ մը ունեցանք:

ԲՐԱՆԹԻ — Ան ըսէ դուն, էլլիս, ինչո՞ւ խնդիր ունեցար ամուսինդ հետ: ԷԼՊԻՄ — Կիրակի առտուով դպրեր խմեր ու խաղացեր է: Ժամը երկուսուկէօրն տուն եկաւ եւ սկսաւ պոտալ, որ անօթի է: Սեղանը կը շողէի, սկսաւ հրել ու գարնել՝ ասնապարէ՛ն պոտալով: Մէկ գորկաւ, ձայն չհանեցի: Սրկու գարկաւ, զէչ մը իրեն նայեցայ: Երեք գարկաւ, իմ ալ արինն գլուխ գարկաւ ու, պնակ մը ստեղծով՝ գլխուն գարկի: Պընակ մըն ալ ան գարկաւ գլխուս: Իմ գլուխ սոկոսն է, անոր գլուխը՝ կունտ: Կէս տալգիմա պնակ կտորեցինք երկուքով: Երբ տեսայ, որ փայտ մը տանելու կ'երթայ, փայտայ ու փողոցին վրայ նայող տնտակը մտայ: Եհա, բայց ուշ էր, դուրը կղզած էի: Պոտայ, դոտայ եւ, վերջապէս, խոհանոց մտաւ ու մինակը ճաշեց: Անկէ ալ հայտնի չլով, սպասեալով՝ դուրը ուժով մը գոցեց եւ դուրս գորտեցաւ: Անոր երթալէն յետոյ, ես ալ երկու պատար բռն կերայ ու դուրս ելայ: Ահա՛:

ԲՐԱՆԹԻ — Հայ մարդիկը դարձած են խաղաժուլ ու խռովաբար: Լուր չունին, որ խաղը տառնուց կրնայուցած են: Բայց հիմա, բուն խաղը խաղալու կարգը մերն է:

ՕՀԱՆՃԱՆ — Իսկ հայ կիներ կը յառաջդիմէ՞ Եւրոպայի մէջ. կը յառաջդիմէ՞ զէպի բանաստեղծութիւն:

ԲՐԱՆԹԻ — Լո՛՛կ, յիտադիմական: Ի՞նչն իտէ՞, էլլիս...

ԷԼՊԻՄ — Երբ տունէն դուրս ելայ, չար օր է այսօր, զէչ հանգիպումներ ունեցայ...

ՕՀԱՆՃԱՆ — Ճիշդ է, այսօր զէչ օր է, բայց վաղը՝ օրերուն օրն է...

ԲՐԱՆԹԻ — Լո՛՛կ: Որո՞նց հանդիպեցար, էլլիս:

ԷԼՊԻՄ — Փողցը գարձած տտեհն, էրիկս գիմացս ելաւ: Ծիտակը վախցայ: Բայց ան գոհացաւ ըսելով... Հմակատամարտ մը կործնուցի, բայց կռիւը չեմ կործնուցած: Անցայ մեր ջրերին քովէն, ոտանց կից մը ուտեցաւ: Աս էրիկ մարդիկը չեն համոզուիր, որ կիններուն հետ գլուխ ելեւ չ'ըլլա՞ր: Ես միշտ կ'ըսեմ... Ձեզ, էրիկմարդը թո՛ղ արիւն, բայց կիներն է, որ կը կատաղարէ, ու էրիկմարդը պէտք է հպատակիտ:

ԲՐԱՆԹԻ — Ա՛հ, էլլիս, բնութիւնը կիները դժբախտ ճակատագրով ոտեղծած է: Անցեալին մէջ կիները ստրուկ էին, հիմակ ալ նահատակ են:

ԷԼՊԻՄ — Դուն, Բրլանթիս, ըսելիք չունիս: Եթէ իմ էրիկս չուկիմէ պէս ըլլար, գլխուս վրայ կը դնէի:

ՕՀԱՆՃԱՆ — Լսեցի՞ք, տիկին Բրլանթի:

ԲՐԱՆԹԻ — Էլլիս, գուն ալ սա ջրին շփացնելու եկար:

ԷԼՊԻՄ — Մոռա նստինք, շատեկ խօսինք: Օհանճանը իմ էրկանս պէս խմող, խաղացող, խայտասակութիւններ ընող մէկը չէ: Իմ փնայած էրիկս

դիմացի մեծ տան զոնապանուհիին Հեա է : Օհանճանը աշխատասէր , շահող , շնորհքով , կարգին մարդ է , խանութպան է , տանտէր է եւ տունն ի վեր է :

ՕՀԱՆՃԱՆ .— Միրելի էլ պիտ , քու բերանդ բերան չէ , խորան է : Կարճ կայէ եւ Հասկցուր , որ ես մասնիկ եմ , մոտէ՛լ . . .

ԲՐԱՆԹԻ .— Այո՛ , տասնիններորդ դարու մտէլ մըն ես :

ԷԼՊԻՍ .— Ո՛ր դարունը կ'ուզէ բլլայ : Դուն Գէդդոնին պէս էրիկ մը ունենալու էիր առաջ , որ Օհանճանին յարգը գիտնայիր :

ԲՐԱՆԹԻ .— Դուն սա պատմելիքդ շարունակէ : Տունէն ելար Ճանիկի՞ն գտցիր . . .

ԷԼՊԻՍ .— Դուն ալ Ճանիկին օճիքը ձգած շունիս : Այո՛ , նախ Ճանիկին գտցի : Հեռուոր ազգականս է ու զիս կը սիրէ :

ԲՐԱՆԹԻ .— Մի՛ բարկանար , տնուշ , սխտեմ , որ սիրուած ես , արժանի ես :

ԷԼՊԻՍ .— Ճանիկին դացի՛ վիզը փաթթուելու եւ լալու Համար , բայց տունը չէր : Բնու մարգարէ չէ սա անզգամը : Եթէ քիչ մը մարգարէ բլլար , պիտի գուշակէր գլխուս եկածը եւ տունը պիտի մնար , ես ալ քիչ մը իր քով պիտի մնայի , անկէ ալ քեզի պիտի դայի ու պիտի շահնդիպէի սա Եանասպրամին :

ԲՐԱՆԹԻ .— Ատոր Հե՛ա ալ խնդիր ունեցար : Բայց նստինք (կը մտնիմ) :

ԷԼՊԻՍ .— Եուն Եանասպրամը Հագուած-աքուած , կոտորուելով , աչքերը խողցնելով իմ կողմս կու դար : Տեսաւ զիս , դէմս եկաւ ու կեցաւ : Քիչ մնաց , որ կոկորդ-կոկորդի պիտի բռնուէինք փողոցին մէջ :

ԲՐԱՆԹԻ .— Բայց ի՞նչ պատճառով . . .

ԷԼՊԻՍ (կը իօսի բարբաբաճ ու չափազանց արագ) .— Ինչ պատճառով : Քո՛ւ պատճառով : Եանասպրամը ինձի բտաւ , որ դուն իրեն ըսեր ես՝ իմ քեզի ըսելու , որ Հարուստ Վիքթորը իր ետեան է : Ես քեզի բտած էի , որ իրեն չըսես իմ քեզի ըսելու : Ատանկ բան կ'ըսուի՞ , մի՛ ըսեր ըսուելն հաքը :

ԲՐԱՆԹԻ .— Ա՛հ , ի՞նչ թուրբարն է սա Եանասպրամը : Չի՛ղէ է , իրեն ըսի , բայց ըսի նաեւ , որ ըսելու քեզի չըսէ : Ըսել է՛ ըսաւ : Դո՛ւն ըսէ , իմ իրեն ըսելու քեզի ըսելու՞ էր : Մա՛նաւանդ ըսած էի , որ դուն գէշ մըտքով ըսած չես ըսածդ . . .

ՕՀԱՆՃԱՆ (Իրկուքին մէջ մտնելով) .— Կեցէ՛ք , որ ես ալ իմ ըսելիքս ըսեմ .— կ'ըսեմ , կ'ըսես , կ'ըսէ , կ'ըսենք , կ'ըսէք , կ'ըսեն : Աս ըսողն ալ Օհանճանն է :

ԲՐԱՆԹԻ .— Անդին գնա՛ , մենք իրարու ըսելիք ունինք :

ԷԼՊԻՍ .— Կը բաւէ , գիրջին ըսելիքս ըսե՛մ . ես չեմ սիրեր ըսի-ըսաւը :

ԲՐԱՆԹԻ .— Չի՛ղէ ինձի պէս : Սա ալ ըսեմ , որ ես ալ Եանասպրամին ըսելիք ունիմ , բայց աւելի լաւ է , որ չըսեմ : Ասկէ ետքը , անոր երկու խօսք ըսողը՝ գիտի մը առջեւ պէտք է ըսէ :

ՕՀԱՆՃԱՆ .— Եթէ վկայի պէտք բլլայ , ես պատրաստ եմ սուտ վկայութեան Համար :

ԲՐԱՆԹԻ (Օհանճանին) .— Դուն քանի Հոս մնաս , պղծութիւններ կամ ապուշութիւններ պիտի ըսես ու զիս պիտի ջղայեացնես : Ա՛լ գուրս եմք , գնա՛ : Նուրճան Պարոյրին մէկ գիրքը առ ու դաշտ կամ անասուն քաշուէ եւ սկսէ կարգալ : Քիչ մը միտքդ դարգացուր , ճաշակը քրքացուր , Հոգիդ աղնուացուր , Հայերէնդ ճոխացուր , թոխիք ունեցիր , վերանալ պիտցիր : Տակաւին տող մը չես կարդացած Նուրճան Պարոյրէն եւ կը Համարձակես Հիւր ընդունելի գինքը :

ՕՀԱՆՃԱՆ.— Ետա կը փութաքիս, որ վերանամ ու Վերին Երուսաղէմ համառոտեամ, որպէսզի դուն վարը մնաս եւ ուզածդ ընես՝ ուզածիդ հետ: Անանկ չէ՞: Ես չեմ վերանար. նայէ՛, իմ վրաս վերանալու կերպարանք կա՞յ: Ես ցույի կազմ ունիմ, փիղի թոք, առիւծի ստամոքս, վազրի լեարդ եւ ուղտի աղիք:

ԲՐԱՆԹԻ.— Կենդանարանական պարտէզ: Զորս խողով ալ յղի ես:

ՕՀԱՆՃԱՆ.— Ես մարմինս ներսով-դուրսով զինած եմ շամանով:

ԲՐԱՆԹԻ.— Բո՛ւ՛հ, զղուելի, զղուելի պարոն ապուխտ:

ՕՀԱՆՃԱՆ.— Ես կ'երթամ Գէղէտը զանելու, որպէսզի միտսին նտոնք, մէջ-մէկ հաս կանծելով՝ մտմտանք կեանքի ունայնութեան եւ կրեւորու առնողորմութեան վրայ:

ԷԼՊԻՍ.— Ի՞մ հոս ըլլալու չըսես. վրաս կ'ուրի կու գայ:

ՕՀԱՆՃԱՆ.— Ձե՛մ ըսեր: Ես թուլութեան կնիկ չեմ, որ ըսուածը ըսեմ: ԾՔԷ ինք բան մը ըսէ՛, ես ալ բան մը չդիտնալու կ'ըսեմ: Ես ըսածիս աչքն եմ. երբ ըսեմ, ա՛լ ունի բան մը ըսելու չես: Դուն ա՛ն ըսէ, որ տղաքդ ո՛ւր դադարե՛ նն:

ԷԼՊԻՍ.— Մեծս Փութալուի գացած է, միջեկո՛ւ պոքոն, պզտիկս ալ՝ պլոթի:

ՕՀԱՆՃԱՆ.— Երեքն ալ մարզանք է — Փութալու, պոքս ու պլոթ: Մէկը սառեք մարզանք, միւրը՝ ձեռքի, երրորդն ալ՝ մտքի: Փութալու աղէկ բան է: Օր մը, կրթոր կարգուի... պէտք կ'ըլլայ:

ԲՐԱՆԹԻ.— Անբարբառական:

ՕՀԱՆՃԱՆ.— Պոքոն ալ լաւ բան է: Պոքս դիտողը փոխանակ պնակ կոտրելու, քիթ-բերան կը կոտրէ, առանց ինք կոտորուելու:

ԷԼՊԻՍ.— Քարը ինծի է:

ՕՀԱՆՃԱՆ.— Պզտիկը աղուոր մանչ է, բայց աղջկան պէս խելքը կարճ է: Պլոթ խաղալու տեղ, կրնար սինեմա երթալ ու մարմնակազմական բարբառայից ֆիլմ մը տեսնալ՝ շոքոյա ուսանով...

ԲՐԱՆԹԻ.— Տղան պատուովը պլոթ կը խաղայ, ու դուն ինչ չես... Պուխելք-միտքը սուտ է... Կ'ուզես, որ ամէն մարդ ուրիշ բան չընէ, միայն ուտէ եւ խմէ, որպէսզի խանութը լաւ աշխատի:

ՕՀԱՆՃԱՆ.— Ամէն պատուաւոր մարդ ուտող է, ամէն ազնիւ բան ուտուելիք է: Երեկմարդիկը ինչպէ՛ս կը գովեն աղուոր կին մը, ինչպէս Եանաս-պրամը. «Ուտուելիք է», կ'ըսեն: Աս ըսողը մինակ Օհանճանը չէ:

ԲՐԱՆԹԻ.— Թող Եանասպրամին հետ ամուսնանայիր: Ինչո՞ւ գիտ քերիք ու դժբախտացուցիր:

ՕՀԱՆՃԱՆ.— Քեզ քերի, բայց դժբախտացուցի... Ինքզինքս:

ԲՐԱՆԹԻ.— Էլպիտս, էլպիտս, հիմա պիտի խենթեմ: Խայտառակութիւնը չափ մը ունի: Ինծի պէս արժէքաւոր, պարկեշտ, իսկալ կնոջ մը առջև, Եանասպրամին պէս ըլլելիք կը գովէ: Անամօթ, ապերախ, առարժան, անպատիւ, լի՛րբ: Ես երկրորդական ուսում ստացած եմ, իսկ փաստալ Եանասպրամը ո՞ր վարժարանին դուռնէն դուրս նետուած է:

ՕՀԱՆՃԱՆ.— Նախ՝ թու առած ուսումը վրաս գրէ: Ճրանեմքի՛նը հաղիւ կը ճանկես: Աշխարհադրութեան մէջ ըսես՝ հարաւը, հիւսիսը, արեւելքը ու արեւմուտքը չես գիտեր: Պոլիտէն հոս կ'ուր, առանց լուր ունենալու, որ ուրիշ՝ ուր գացիր: Թուարանութեան մէջ՝ չորս գործողութիւն անգամ չես գիտեր. միայն դէրոն՝ դէրոյին հետ կրնաս պումարել: Քու զարդացումը ալ զէրօ է, հեքիաթ է, անհամ, անհոտ հեքիաթ մը, որ մտիկ չ'ըլլուիր: Ատկէ զատ, կրեւորուն ուսումը կոթ մըն է, որ չ'ուսու-

ւիբ, որ դիրենք էր աղեղցնէ: Իսկ սուս ուսումը կրկին կոթ է: Կնիկ ըսածք, ինչպէս ըսեմ, կնիկ ըլլալու է: Բհրանը միայն ուսանալու եւ գայտ', սիրելի ամուսինս ըսելու համար բանալու է: Աս ըսողը Օհան-ճանն է:

ԲՐԱՆԹԻ.— Հիմա պիտի մարիմ... (կը ծռի):

ՕՀԱՆՃԱՆ.— Կին մը երբ բռնիք չունենայ՝ կը մարի:

ԷԼՊԻՍ.— Մենք՝ էրեկ-կնիկ խենթ ենք: Ատիկա աշխարհ գիտէ: Բայց դուք ալ կատարեալ թուղցեալներ էք: Օհանճան, տիպար ամուսնիկին մը ինչպէ՞ս ըլլալու է:

ՕՀԱՆՃԱՆ.— Տիպար ամուսնիկինը ա՞ն է, որ մեզր ու շաքար է, որ կ'ուտուի: Որ իր էրկանը համով բաներ կը կերցնէ: Որ անուշ կը նայի, անուշ կը խօսի, անուշ կը վարուի: Իսկ մերինը անուշ չէ. թթու, կծու, աղի, լեղի է: Բայց իբրեւ աղանդներ ալ չ'ուտուիր, այնքա՞ն թթու, լեղի է: Տիպար կինը քոթէ՞յլ մըն է. մաս մը մայր է, զի մը քոյր է, համոզը՝ աղիկ է, հոտովը՝ հոմանուհի է: Աս ըսողը Օհանճանն է:

ԲՐԱՆԹԻ.— Մէկ խօսքով՝ ո՛չ ես կին եմ, ոչ ալ էլպիսը: Կնիկը Եանասպարսն է, բացէ ի բաց ըսէ, մի՛ քաշուիր: Ինչո՞ւ չամուսնացար անոր հետ:

ԷԼՊԻՍ.— Ձեր կրնար ամուսնանալ, աղուորս:

ԲՐԱՆԹԻ.— Եւ ինչո՞ւ...

ԷԼՊԻՍ.— Որովհետեւ այն ատենը դեռ ողջ էր Եանասպարսին ամուսինը: Քու դաշեդ երկու շաբաթ յետոյ մեռաւ: Տարիներով հիւանդ էր:

ԲՐԱՆԹԻ.— Ուրեմն՝ եթէ իմ դաշէն ատաղ մեռած ըլլար, Օհանճանը պիտի ամուսնանար Եանասպարսին հետ:

ԷԼՊԻՍ.— Ատիկա չեմ կրնար ըսել: Ատիկա էրկանդ հարցուր: Մարդոց դէ-լուխը վայրի անտառի կը նմանի: Այդ անտառին մէջ բնէ օձեր, աղ-ւէտներ, խոզեր դանուխը՝ միայն սաստանան դիտէ:

ԲՐԱՆԹԻ (Օհանճանին վրայ երթալով).— Ըսէ՛, չիտակ ըսէ՛, եթէ մարդը ամիս մը ատաղ մեռած ըլլար, կ'ամուսնանայի՞ր սա Եանասպարսին հետ...: Հիմա կը խենթենամ...

ԷԼՊԻՍ.— Մի՛ խենթենար: Ե՛ս ըսեմ քեզի: Օհանճանը չէր ամուսնանար Եանասպարսին հետ:

ԲՐԱՆԹԻ.— Այդպէս...: Ապա թէ ոչ...

ՕՀԱՆՃԱՆ.— Փրկուեցանք:

ԷԼՊԻՍ.— Ըսելիքս չամբողջացուցի: Օհանճանը չէր ամուսնանար, որովհետեւ կը վախնար Եանասպարսին: Ըսելիք չկայ. Եանասպարսը աղ-ւոր է, բայց մարդը աղուոր մըն ալ կը նստեցնէ մոխրի վրայ: Եանասպարսը դժոխքի կրակ ունի, մարդիկը կը բռնկցնէ, կը վտակ, ետքն ալ անոնց վրայէն կը ցատկէ: Անոր հետ խաղի ելլալ՝ ըլլալու Եանասպարսը սասանայի ծնունդ է, վհուկ է, ուզածին ուզած բանը կ'ընէ: Երբեմն ձեռքը անցած մարդը կը պզտիկցնէ, այնքա՞ն կը պզտիկցնէ, որ պարտաւեր կը խոթէ: Երբեմն ալ մարդ մը կը մեծցնէ, դարձերով անոր ճակատը բարձրացնելով: Ան իր փորին մէջ տասը սենեակ ունի, սասանաներուն վարձու տուած: Ձէ՛, Օհանճանը վախկուտ, այսինքն՝ պատուաւոր մարդ է. Եանասպարսին հետ չէր ամուսնանար: Բայց, խօսքին չիտակը, եթէ կ'ըրիկ գումար մը աչքէ հանէր, անոր հետ կ'ըլ-լար, ասեմ մը:

ԲՐԱՆԹԻ.— Անպատիւ չուն, ազատ խոզ, դաւաճան:

- ՕՂԱՆՃԱՆ (խնգալթվ) — Բանիկ մը չեմ ըրած :
- ԲՐԱՆՔԻ — Ի՞նչ գիտնամ, որ չէ ըրած . . .
- ԷԼՊԻՍ — Եթէ բան մը ըրած ըլլար, կը շուէր : Ես աչք ունիմ, ականջ ունիմ, քիթ ալ : Ո՛չ. բան մը չէ ըրած, բայց մտքէն անցուցած է : Ձէ ըրած, որովհետեւ կծծի է, այսինքն՝ հաշուադէտ բսել կ'ուզեմ :
- ՕՂԱՆՃԱՆ (Էլպիսին) — Դուն ալ ի՞նչ ստատորդի ես : Թէ՛ կը զգուես, թէ՛ կը զարնես :
- ԷԼՊԻՍ — Ճշմարտութիւնը երկու երես ունի : Երկո՛ւքն ալ կը սիրեմ ես :
- ԲՐԱՆՔԻ (Օնանճանին) — Ուրեմն՝ մտքէդ անցուցած ես Եանասարամին հետ ըլլալ . . .
- ՕՂԱՆՃԱՆ — Եթէ մարդիկը՝ իրենց մտքէն անցուցածներուն համար դատապարտուէին, մէկ անձնդ մարդ չէր մնար :
- ԷԼՊԻՍ — Բրբանթիս, դուն մտքէդ շատ մը բաներ չե՞ս փափաքած : Իմ մտքէս ամէն օր ի՞նչ մեղքեր կ'անցնին : Ինչ ալ երազներ կը տեսնեմ : Ատոնց համար մեղասո՛ր եմ :
- ԲՐԱՆՔԻ — Բայց, վա՛յ եթէ բան մը տեսնեմ, բան մը լսեմ, բան մը բռնեմ : Դուն Եանասարամին ապառիկ ապրանք կու տա՞ս :
- ՕՂԱՆՃԱՆ — Եանասարամը սկզբունքով կանխիկեան է :
- ԷԼՊԻՍ — Ես չի սակարկեր :
- ՕՂԱՆՃԱՆ — Ապրանքին լաւը, գինին բարձրը իրեն համար նախընտրելի է :
- ԷԼՊԻՍ — Ո՛չ տալիք ունի, ո՛չ աննչիք. ամէն բան կանխիկ :
- ՕՂԱՆՃԱՆ — Եթէ ապրանքի մը աչքը փակու, կը տիրանայ :
- ԷԼՊԻՍ — Խօսքին շիտակը՝ առեւտուրի մէջ մէկ հատիկ է :
- ԲՐԱՆՔԻ — Այո՛, լաւ առեւտրական ըլլալուն չեմ կասկածիր : Սուղ կը Ծախէ, սուղ կը գնէ :
- ՕՂԱՆՃԱՆ — Բեքինի համը զիտցող է : (Նոյն կ'ընէ Էլպիսին, որ գովեստը շարունակուի) :
- ԷԼՊԻՍ — Առեւտուրի մէջ շատ լուրջ է :
- ՕՂԱՆՃԱՆ — Իւրոտ լրջութիւն մը ունի :
- ԷԼՊԻՍ — Լուրջ լեզած ասեմն ալ չէն է : Անշուշտ Նուրհան Պարոյրին թ պատիւ արտւիք երեկոյթին պիտի հրաւիրէք զինքը :
- ԲՐԱՆՔԻ — Ո՛չ. պիտի չհրաւիրեմ :
- ՕՂԱՆՃԱՆ (վրդովուած) — Ատանկ բան չընես : Ահաւո՛ր, ահաւո՛ր գնասներ կ'ունենամ : Խենթեցա՛ր : Եանասարամը շահն է, խանութիս աստղին յանախորդն է : Ես յանախորդ բերող է : Մինակ ինքը տարեկան մէկ միլիոնի ասուտուր կ'ընէ ինձմէ : Մեր վարդանին հոգին կ'ելլէ՛ Եանասարամին տունը ըմպելիի շէշը ու հարիւր տեսակ ապրանք կրելով : Եթէ Եանասարամին պէս երկու-երեք յանախորդ ունենայի, քանի մը տարիէն տուն մըն ալ կը տնկէի : Ատանկ է, անանկ է, բայց բաց է ձեռքը : Գրադէտ հրաւիրենք, գրականութիւն խաղանք, բայց մեր հացին հաշիւը չմտնանք : Գրականութիւնը ո՛չ հարստութիւն, ոչ ալ հաց կու տայ : Գրականութիւն ըսածը՝ կծծիութեան ամէնէն գէշ մէկ տեսակն է : Գրադէտը ինքը, ուղէ-շուղէ, կ'ըլլայ կծծի : Գրադէտին հանդէպ ամէն մարդ կը գառնայ կծծի, բացի ինձմէ : անշուշտ : Ես, սակայն, Ծախսելի յետոյ, ահաւոր գնասներ ալ չունենանք : Եանասարամը չհրաւիրէ՛լ . . . կործանէ՛ խանութս, լմնցուր : Եանասարամը դուռ շահ է : Աս ըսողը Օհանճանն է :
- ԷԼՊԻՍ — Իրաւունք ունի Օհանճանը : Եանասարամին ձեռքը շատ բաց է : Ուսող-խմող ու կերցնող-խմցնող է : Եարաթը քանի մը զիշեր խնճոց

ունի: Մեն սխալ ժը կ'ընեն՝ զիները չհրաւիրելով: Իր քնն ըլլալը՝ ինչ
 ի՞նչ պէտք: Գէշ է, բայց սիրտը բուռ է: Պոչին չդպրողին, չարիք
 չընելէն զատ, բարիք ալ կ'ընէ:

ԲՐԼԱՆՔԻ.— Բուռ սիրտ է էջիկմարդոց համար:

ԷԼՊԻՍ.— Ճիշտ հակառակն է: Մարդոց խերը կ'անիծէ, իսկ կիներուն կը
 խղճայ: Վարդուկին ազլիկը ի'նք կարգից: Ամբողջ ծախսը ի'նքը հո-
 դաց: Եսպրաքսէն երբ հիւանդ էր, դարձանումի ծախսերը ի'նքը վրան
 առաւ: Պատաւ Ուսաննային ամսական ժը կապած է: Որբուհի ժը կը
 պահէ զիշերթիկ դպրոցի մը մէջ: Իր ըրածները հարուստ մարդիկը
 չեն ընէր: Նա՛, մէկը Օհաննանն է, հարուստ, բայց եթէ տարճանակ
 քաշես, Եահասպրամին մէկ ըրածը չ'ընէր:

ԲՐԼԱՆՔԻ.— Օհաննանը ինձմէ անգամ կը խնայէ:


ՕՀԱՆՃԱՆ.— Իրաւ քեզի կը խնայեմ: Եթէ չխնայէի, գիտէի ընելիքս: Ես
 դացի:

ԲՐԼԱՆՔԻ.— Գնա՛, գնա՛: Մենք ահադին դարձ ունինք: Բաղձաթիւ կարգա-
 դրութիւններ կան:

ՕՀԱՆՃԱՆ.— Եւ ահադին ըսի-ըսաւ: Մնաք բարով (կ'նլի):

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(Շար. 2)



«ԲԱՆ ՏԱՐՈՒԱՅ ԳՈՐԾ Է ԱՅՍ»

Առջև տարի Հայաստանի պիտույթիներու ակադեմիան լոյս ընծայեց Նդիշէ Զարինգէն ուսուար հատոր մը, որ կ'ամփոփէ եղբարարաբա բանաստեղծին վեցհատորեակէն (1962-1967) դուրս մնացած երկերը, — բանաստեղծին կենդանութեան որօջ հրատարակուած, յետ յարութեան մատուցին յանձնուած եւ նոր յայտնարեւուած բանաստեղծութիւններ, պոեմներ, էպիգրամներ, թարգմանութիւններ, յօդուած, վրասումներ ու մակագրութիւններ, ի միասին՝ շուրջ երեք հարիւր կտոր, առաւել՝ Անահիտ Զարինցի կողմէ պատրաստուած մանրատառ 220 էջնոց ծանօթագրութիւն մը, ամբողջութիւնը, միջին ծաւալով՝ 712 էջ, տպագրեալ՝ 15 հազար:

Գործը տպագրութեան համար երաշխաւորած են Սուրէն Աղարաբեան եւ Վազգէն Մնացականեան, որոնք նոյն ատեն Ալմաստ Չաբարեանի, Պրոն Յակոբեանի, Վարդէս Պետրոսեանի եւ Էդուարդ Զրբաշեանի հետ մաս կը կազմեն անոր իմբազարական կազմին: «Խմբագրութեան կողմից» նոթէն կ'իմացուի, որ «Նդիշէ Զարինցի այս հատորի վերջնական իմբագրութիւնը կատարել են Է. Մ. Զրբաշեանը եւ Պ. Զ. Յակոբեանը»:

Վեցհատորեակին վեցերորդին (1967) լոյս ընծայուած է վեք, Հայաստանի պիտույթիներու ակադեմիայի Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան մասնաճիւղի պաշտօնական կոչով ու առանձին մտաւորականներ թուան բաղձանքով պահանջը ներկայացուցին նման հատորի մը, անոր կազմութեան համար դիմելով նոյն ատեն Զարինցէն իրենց մօտ նիւթեր պահած մարդոց օժանդակութեան, այն հիմնաւորումով՝ որ «Նդիշէ Զարինցի անտիպ էրերի ժողովածուն, որ կը կազմի եեղիմակի ստեղծագործութիւնների գիտական հրատարակութեան 7րդ հատորը, անհնար է իրագործել, քանի դեռ ի մի չեն բերուած նրա բոլոր օճաագրերը»:

Ի գործ դրուած այդ ճիշդին արդիւնքն է ներկայացուող հաստիքը, որ ստահայն ո՛չ կազմողին, ո՛չ խմբագրութեանն եւ ոչ ալ ընթացողներուն սպասած ամբողջութիւնն է, որովհետեւ, ինչպէս կ'ըստի խմբագրական Նոթին մէջ, Չարենցի ստեղծագործութեան հաւաքման ու հրատարակման գործին մէջ նըշանակալի աւտող մը ըլլալով հանդերձ կատարուածը, ուրուագծուած ամբողջութիւնը «այս գրքով չի սպասուում, այլ պահանջում է կոնկրետ մեծ ջանքեր, նոր որոնումներ արխիւներում, մամուլի էջերում, մասնաւոր խառնածոներում»:

Նոյնը եղած է կազմութեան պատմութիւնը ներկայ հաստիքին, որուն համար օգտագործուած ձեռագրային աղբիւրներ հանդիսացած են Գրականութեան եւ արուեստի թանգարանի Չարենցի ֆոնդը, Գրողներու միութեան ֆոնդը, Չարենցի հարուգանքներուն՝ Արփենիկ եւ Անահիտ Չարենցիներուն մօտ «Հանգրուանած» թուղթերը, եւայլն: Չըսենք հեւայն ու անցնինք, այլ երախտագիտութեամբ յիշենք նաեւ միւս աղբիւրները, ուժեղօր Արմէն Գուլապեանի, քանդակագործ Սուրէն Ստեփանեանի, Արաք Մանուկեանի արխիւները, եւ բժիշկ Գաբրիէլ Յարութիւնեանի, ուժեղօր Արշակ Բուրջալեանի ու բանաստեղծ Աւետիք Իսահակեանի ընտանեկան արկղաները: Չարենցի ձեռագրներուն կազմած այս յիշատակարանը ամբողջ չէ անշուշտ եւ շատ աւելի թերի պիտի ըլլար, եթէ չլիչէինք ուրիշ երկու անուն եւս, իրենց մօտ գտնուող թուղթերը յաջորդաբար Չարենցի ֆոնդին ու Տուն-Թանգարանին նուիրած երաժշտագէտ Ա. Լ. Ուրեկլեանը եւ ուսուցիչ գրող Ռիչի Դոստեանը ու, մասնաւորօրէն՝ երբորդ մը, որ կ'երեւի ֆոնդին եւ հոն մէկտեղուած ձեռագրներուն անդրապարտող Անահիտ Չարենցի ստեղծուած մէջ:

«Չարենցի ձեռագրերի հիմնական մասը այստեղ է ընթանլի բանաստեղծի բանտարկութիւնից յետոյ: Ինքնագրերի միւս ստուար հաստածը, մօտ հստմ տարի պահպանուելուց յետոյ, Գրականութեան եւ արուեստի թանգարանին է նուիրելի նկարիչ Ռ. Ղազարեանը»:

Չարենցի անունին շուրջ ստեղծուած միջուորտային հեղձուցիչ պայմաններուն մէջ դիւրին չէր հարկաւ անկէ ձեռագիր պահելու գործը, հերոսական էր նոյնիսկ ու սրտաուշ է փրկուած պատուիկները իրենց ճիշդ հասցէին յանձնելու փութկոտութիւնը, բայց պիտի ընդունինք, որ գործին դժուարագոյն մասը յաջող փուլն էր, ելլալ, արամաղբիւթ թուղթերուն վերծանումը, վերականգնումը, հետեւեալ պայմաններուն մէջ, նոյնիսկ Անահիտ Չարենցի նկարագրութեամբ:

«Վերջին տարիներէ անտիպ գործերի ինքնագրերի մի մասը Քայմաշլի է, խունացի, Թորքերը կարծես թրջուել են եւ ապա բոցի վրայ չարացուել: Այնքան փխրում են այդ քերթիկները, որ փշուում են, երբ անգագաշօրէն սեռք են տալիս դրանց»:

«Իսկ այդ քերթիկներէ վրայ Չարենցի՝ մանուշակագոյն քանակով, մերթ տառ առ տառ յստակ, խառք, մերթ ջոյսիմ, խժրծուած, զնբումներով ու սրբագրութիւններով յեցում, իսկ երբեմն էլ գրեթէ անթթեանիլի դարձած ձեռագիրն է, որ խունացի է, հագրի կարդացում կամ էլ բարբալիմ չի կարդացում»:

«Հարկ է նկատի առնել նաեւ, որ չարենցեան անտիպ գործերի ինքնագիր էջերի մի գգալի մասը այնպէս է փտել, որ ամենար է այլեւս փրկել ու ամրացնել: Թերթիկներէ մի կոյտ էլ պարզապէս մոխիր է դարձել, մի բանի աք մոխիր, եւ անվերադարձ կորստեան մատնել ո՛վ գիտէ ինչ ստեղծագործութիւններ»:

Ու գիշ մը վարը.

«Մեր ձեռքի տակ եղել են ոչ թէ ամբողջական ձեռագիր գործեր, այլ խտան ի խտան թերթիկներ: Պէտք էր այդ հարիւրաւոր թերթիկներից առանձնացնել եւ իրար սուտ բերել իւրաքանչիւր գործի տարրեր տեղեւորման ցրում էջերը»:

Այս պայմաններուն մէջ, ու քայքայուած այդ թուղթերէն, պիտի ընդհանրէ մտերմութիւններէն վերակազմուած հասար մըն է ընթերցողին տրամադրուած այս հասարը, որուն մեծ արժանիքներէն մէկն է նաեւ վեցհատարեակիմ սկզբունքները կերարկած ըլլալու հանգամանքը. ճիշդ այդ պատճառով մենք պիտի սիրէինք զայն կոչել «Չարենց Դ»:

Չարենցի միւս բոլոր հատորներուն պէս, «Չարենց Դ»-ն ալ կը պարզէ անհուսաւոր նկարագրեր մը, ուղղակի փայտաւորումներուն կողքին կան անարբան կտորներ, երբեմն՝ շարքեր, այլոքմային դրամումներ, յաւուր պատշաճի ուրիշ բաներ, տաղեր, ժօներ: Խառնապահանջութիւնը, սակայն, չի կրնար ղեկավար սկզբունք ըլլալ հոս, այն պարզ պատճառով, որ ո՛չ բանտաստեղծը ինք անձամբ գործ մը կը հրատարակէ եւ ոչ ալ հրատարակիչները զուտ քրտական երկ մը ներկայացնելու միտումով ասպարէզ եկած են: Հարցը էսպէս կը վերաբերի հարածանքի, տնային կալանքի, տեսակ-տեսակ խաղաղութիւններու, եւ հուսկ այս բանտային զարհուրելի պայմաններուն մէջ գրուած մասունքներէն հնարաւորը փրկելու մեծ ճիւղին: Զհաշուած քսանի հասնող անկրկնելի ստեղծումներուն առկայութիւնը, հազկ կը զգանք կրկնելու, որ հասարկին մէջ տեղ գտած փրկուածներուն շափ յանկուցիլ է նոյնպէս փրկուագործութեան պատմութիւնը, մեր նոր գրականութեան անարժեքի մէկ մասը, երախտայարոյց՝ ինչպէս ըսինք, իր բոլոր գործօններով: Իրտպէս, հողին վրայ ու հողին տակ՝ բանտտեղծին բախտով պարած, հարածուած, մարած, քայքայուած այդ թուղթերուն առթած յուզումը կը կրկնուի մարգուտ մէջ, երբ մտածէ անոնց հետ ազնիւ ունեցող գործօններուն մասին, պատողներուն, յանձնողներուն, վերակազմողներուն, մասնաւորաբար Չարենցի հարազատներուն եւ յատկապէս Անահիտ Չարենցի, որ իր կեանքին նպատակ գարծուց չօրը տարողուած ժողովուրդեան փրկութիւնը եւ ձեռք բերած արդիւնքները հազարէց ընթերցողին դաստիարակիչներով, մասուրով թէ առանձին հասարակ, տասնամեակներու վրայ երկարած զուարեարկան հեւքով մը:

«Չարենց Դ»-ը նորէն Անահիտ Չարենցի գործն է, եւ ջանջախիչ տոկոսով, մէկտեղելու, վերձանելու, դասաւորելու եւ ծանօթագրելու աղքատանքին աղերասուող բոլոր երեւոյթով: Վիթխարի աշխատանք մը, որ չի է անշուշտ հարազատի առաջնորդ տարերքով, նուիրումով, պաշտամունքով, բայց օտակական հարազատութիւնը բացառիկ ուժ մը չէ նման պատասխանատու գործերու առիթով, նաեւ ու մա՛նուանգ հասկացողութիւն պէտք է, թափանցելու շնորհ, արբանդադրելու բնագր, համեմատելու կարողութիւն ու վերակառուցելու անակաթիւն, արժանիքներ՝ որոնք կը փողփողին բնագրերէն բաժնին համարեա՛ւ բոլոր էջերուն վրայ, նախանձելի չափով մը:

«Գարուն» ամսագրի թղթակիցներէն բանաստեղծ Յակոբ Մովսէսի ընդհանր հարցադրոյցի մը մէջ, Անահիտ Չարենց ի միջի այլոց կը յայտնէ, թէ «...այդ պատճառով էլ մենք գիրքը կազմելու մօտ բան տարի շարունակ հաւաքելի ենք տարրեր տեղեւորման ցրում ձեռագրերը եւ նոր միայն ձեռագրուելու եղել հիմնական գործին» (1984, թիւ 5):

Քասն տարի:

Որ կը յիշեցնէ ուրիշ քսան տարի մը, 1932ի հրատարակութեան սեփական օրինակին վրայ արձանագրած Չարենցի քսան տարին.

Քսան տարուայ գարծ է այս —
Եւ քսան տարում —
Որքա՞ն ցնորք ու երազ
Եւ որքա՞ն արիւմ...
Բայց վաստակից քա այս մեծ
Երբ մնայ անմեծ
Գունէ մի բառ կամ մի էջ —
Երբ քանիկ ես յաւէտ...

Հակառակ անոր, որ ի վերուստ շնորհուած ստեղծագործելու միջոց, Աստուծոյ «պարզեւած ընծան այդ օրրադնագոյն» իրեն համար եւ «զուսնութիւն դարձաւ, եւ մազձ, եւ ցաւ», պէտք է ենթադրել Չարենցը երջանիկ, որովհետեւ ցնորելով ու արիւնելով երկնուած իր քսանամեայ վաստակին մէջ կային, եւ ինք շալ պիտէր, որ կային բազմաթիւ անմեծ բառեր ու էջեր: Պէտք է երջանիկ ենթադրել նոյնպէս Անահիտ Չարենցը, որուն քսանամեայ ու միահեծան շարչարանքին գինը եղաւ բանաստեղծէն անմեծ բառեր, տուներ, ամբողջ էջեր ու զերթուածներ յայտնաբերած ըլլալու այս իրականութիւնը՝ «Չարենց Դ»:

Քսան տարուան գործ...

Դժուար է պատկերացնել անոր վճարուած լրիւ գինը, ամբողջ երկտասարդութիւն մը, շխույցող լարուածութեամբ, յափշտակութեան ու յուզումի մնայուն արեւախոսքերով, ենթակայ՝ ամէնօրեայ սպասման, յայտնագործելու հանդէպ ու սպասում, կորուստներու արտասանք ու կրկին սպասում, առաւել՝ արտաքին խոչընդոտները հարթելու հոգեմաշ ջանք, յամառող վախերը փարատելու տանջանք, յայտնագործուած կտորները վաթ դնելու հարկադրանք տակաւին եւ ուրիշ ով պիտէ ինչեր ու ինչեր: Անահիտ Չարենցի օրագիրը միայն պիտի յաջողէր լոյս մը նետել կատարուած ամբողջին վրայ, վիպասան մը միայն պիտի կարենար սպասել նահատակ բանաստեղծին ազդեկան քսանամեայ այս նահատակութեան պատմութիւնը:

Դարձնենք էջը եւ ըսենք, որ տրուածը գոհունակութեամբ կը լեցնէ ընթերցողը, քայց կայ տակաւին շարուած մաս մը, որուն գիմաց հարցականները կը շարունակեն պահել իրենց ուժը:

«Չարենց Դ»ին մէջ յաճախ նշուած եւ նոյն առիթով տեղի ունեցած վերոյիշեալ հարցադրոյցին մէջ Անահիտ Չարենցի կողմէ դարձեալ ընդգծուած է այն փաստը, որ «նակատագրի բերումով Չարենցի ճեղագրերը նրա անժամանակ մահից յետոյ ցանցիք եղան, եւ մենք չգիտեմք (եիմա էլ չգիտեմք)՝ որտե՞ղ եմ հանգրտանել դրանք, ո՞ւմ մտն են եւ ի՞նչ վիճակում են»:

Իսկ ծանօթ հանգրուաններուն մէջ եղողները, — իսկոյն պիտի հարցընէ ընթերցողը, — յայտնաբերուած բոլոր կտորներուն ազատութիւն շնորհում է արդեօք կամ վերծանուած միւսներուն համար Անահիտ Չարենց յաջողած է զազաջայական իրաւունք ստանալ:

«Չարենց Դ»ը կը յուզէ նման բազմաթիւ հարցեր, որոնց մէկ քանիին լուծման կարուսով յաջողող էջերուն կը բանանք առանձին սիւնակներ:

«ՄԻ ԾԱՐՔ ՈՒՐԻԾ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ,...

Իրբև թիւ, թիւերու կապուած լուր, ընթերցողը «Զարեանց Դժի մէջ տրուածէն շատ աւելի մեծ պատկերացում մը ունէր բանաստեղծին անտիպ ժառանգութեան մասին, աղբիւր ունենալով միշտ Անահիտ Զարեանցի լրջ ընծայած յօդուածներն ու կարգացած դասախօսութիւնները: Այս հասարչիկ հրատարակութիւնէն դեռ տարի մը առաջ, 1982ին, «Արվեստական գրականութիւն» ամսագրին (թիւ 10) մէջ ան կը գրէր.

«Մի տասնամեակ առաջ, երևի, եմարաւար չէր պատկերացնել, որ չարնցեան ամենուր ցրուած եւ խաթարուած ինքնագրերից գոյանալով, պիտի ամբողջանային միայն «Գիւրջ ճանապարհ»-ից յետոյ գրուած 200ից աւելի բանաստեղծութիւն, 15-16 պոեմ, տասնեակ էպիգրամներ ու երգիծական ստանաւորներ», եւ այլն:

Չափածոնեւրուն ընդհանուր դուժարը չէ տրուած հոս, տրուած է մէկ էջ անդին, զնահատանքի նախադրուչացման մը հետ.

«Նկատի ունենալով Զարեանցի ստեղծագործական եղանակի այս իւրայատուկութիւնները՝ ճիշտ ինքնագրերի հիմամ վրայ իմ պատրաստած մօտ երեք հարիւր չափածոյ կտորներից եւ ոչ մէկը (թէն նրանցից շատերը արտաբնական կարող են անգամ կատարելաբար) մեծ իրաւունք չունենէ վերջնականապէս արտուած համարելու, քանի որ գիտեմք, թէ զրանց դեռ չէր դիպել բանաստեղծի վերջին ճիշտ ընդհանուր հրաշագործ շունչը: Բացառութիւն կարող են կազմել քերական այն մի քանի գործերը, որոնց վրայ հեղինակը գրել է «վերջնական վարիանս» (էջ 127):

Բանաստեղծուած տպագրութիւնը ճիշդ է անպայման, բայց ուշադրութեամբ միւս է, բանաստեղծութիւններուն դուժարը՝ մօտ երեք հարիւր: «Գիրք մանապարհի»-ն եւս, այսինքն՝ 1984ի առաջին ամիսներէն մինչև մահ դրուածներուն դուժարն է այս «մօտ երեք հարիւր չափածոյ կտորներից», որոնց կէսը միայն տեղ դուժար է «Զարեանց Դժի մէջ, ուրեմն՝ արդէն պատրաստ (եթէ պատրաստած)» ունինք շուրջ 150 կտոր, որոնց լրջի կը սպասեն:

Այս յօդուածին հրատուածէն տարի մը ետք լրջ տեսած «Զարեանց Դժի խմբագրական կազմին նոթը եւ նոյն առիթով «Գարուն» ամսագրին հետ ունեցած Անահիտ Զարեանցի հարցազրոյցը քիչ մը տարբեր բաներ կ'ըսեն ընթերցողին:

Քիչ առաջ տեսանք «Զարեանց Դժի խմբագրական նոթը, որուն ուղղակի մէկ արձագանգն է Անահիտ Զարեանցի հաստատումը, թէ՛

«Այս ժողովածուի հրատարակմամբ Զարեանցի անտիպ ստեղծագործութիւնները դեռ եւս չեն սպառուած: Գրականութեան եւ արտեստի քանգրանուտ, բանաստեղծի դուստրերի մօտ պահպանուած են մի շարք ուրիշ ստեղծագործութիւններ, որոնք դեռ սպասում են վերծանման ու լայնընթացման».

Ոչ այնքան վերծանման թիրեւս, որքան լրջընծայման: Կ'արձանագրենք այս տպագրութիւնը ա'յն հիմամբ, որ Անահիտ Զարեանցի արդէն վերծանած (եթէ պատրաստած) մօտ երեք հարիւր կտորներուն կէսը միայն չնորճը դուժար է մտնելու «Զարեանց Դժի մէջ, իսկ միւս կէսը

կը սպասէ սպասման անկիւններուն: Ու զարմանալի է, որ արդէն պատրաստ
այդ հարիւր յիսուն կտորները լոյս բնծայելու փութկասութիւնը շնչառէ
աւելի: Հաւաքման ու վերծանման մասին կը խօսուի շարունակ:

Մօտեցման այս եղանակը ընթերցողին լրիւ չբացուելու դիւանագիտու-
թեան մը կասկածը կը հերձնէ պարզապէս առ կը մղէ այն ասպարեութիւնը,
որ Չարինց դեռ բոլորովին չէ ազատագրուած արտաքին ճնշումներէ...

Ուշադրութենէ չի վրիպիր նաեւ ա՛յն՝ որ «Չարինց ԴՅԻ մէջ տեղ զատծ
որոշ կտորներ, իրենց կարգին, որոշ կասկածներ կը ներշնչեն, կը թելադրեն
վերծանուած մասեր՝ բառեր, տողեր, տուներ իրենց մարմինէն դուրս մղուած
ըլլալու հաւանականութիւն մը»:

Այս ենթադրութիւնը իրականութեան մօտեցնող առևաններ չեն պակ-
սիր: «Չարինց ԴՅԻ մէջ, օրինակ, կը խօսուի «Բանաստեղծութիւններ յետա-
բակ»ի մը մասին, որմէ արտագրուած են 22 բանաստեղծութիւններ, 21 էպի-
գրամ եւ պոեմ մը՝ «Նավգիկէ», ու ամէնքն ալ, երկարաշունչ թէ կարճաշունչ,
կարդացուած են լրիւ, վերծանման նոր պատմութիւն չունին, լաւ չէ կար-
գացուած միայն մէկը, գրուած՝ Գրողներու միութենէն Չարինցի գուրու ե-
լած կամ դուրս գրուած օրերուն, — «Ներքող երգողներին» գառնաթախիծ բա-
նաստեղծութիւնը: Այս բացառութիւնը համոզիչ չի թուիր ու կը մղէ ընթեր-
ցողը մասնելու, որ վերծանողը ա՛յ թէ անընթեռնելի տողերու կամ հատուած-
ներու բախած է հոն, ալ «ինչ-որ» ասիական տակ ոտտումներ կատարած է
կարգ մը չօրսփելի իրադարձութիւններու վրայէն:

Պատահականութեան հետեւանք չի կրնար ըլլալ նաեւ այն հանգաման-
քը, որ «Ներքող երգողներին» բանաստեղծութեան պատկերով ներկայացուած
են պատմական անջքերու եւ անձնաւորութիւններու զարնուած միւս կտոր-
ներու հետ, ինչպէս են, օրինակ, «Պոետի վիշտը», «Մի համարեղ երիտասար-
դի», «Ռեֆլիքս հայրեմական», «Իգիլ է այսօր Հիլիկոնն ամբողջ», «Հեքսաթ
հարսանիքը», և այլն:

«ՎԱՐՔ ՍՐԲՈՑԸ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ

Չարինց, ամբողջ տասնընչիկ տարի, 1922էն մինչեւ մահը, անընդհատ
զբաղւած պայքարի մէջ եղաւ եւ բոլոր տաղանդաւորներուն պէս իրեն զէմ
զտաւ միջակութիւններու ամբողջ բանակ մը, տեսակ-տեսակ դպիրներ, հին,
հասակակից ու նորերու, որոնց մերկացման համար ի գործ դրաւ իր տրա-
մադրութեան տակ ունեցած բոլոր պէնթերը, տրամաբանութեամբ յարեցած
յօդուածը, յուզառատ բանաստեղծութիւնը թէ երգիծական ոտանաւորը, ի-
րենց բառով՝ էպիգրամը:

Ներկայ հասարակ մէջ եւս տեղ պտած են շարք մը էպիգրամներ, թի-
ւով՝ 28 հատ, որոնք «Գիրք ճանապարհի»էն առաջ թէ հոսք գրուած են եւ
մեծ մասը նոր կը բացուի ընթերցողին: Միայն թէ՛ շարք մը տունայնից ցոյց
կու տան, որ այդ շարքը եւս լրիւ չէ ներկայացուած եւ ոմանց հանդէպ կը
շարունակուի փափկանկատ վերապահութիւն մը:

Առ ալ՛ կարգանք «Չարինցի պոեզիան» անուն իր գործին մէջ խնդրոյ
առարկայ սեռին անդրադարձող Գ. Յովսէփիանի սա հատուածը.

«Անս մի ցայտուն բնութագրութիւն եւս, սրբ աշխի է բնկնում եւմն-
բազան տիպահանգսման ախտութեամբ եւ կրճատ բացատումով: Այտեղ
տիպարի բնութագրմանը նպատում են կենցաղային մտնամտումութիւնները:
«Վարք որբոց» էպիգրամը ցուցադրում է իւրովի երգիծական շեշտերով մի
մարդու կեանքն ու գործը, նրա կենսագրութեան, վարքագծի բնորոշ բացա-
տական գծերը. «Մարմնանում է նա առաւօտ կանուխ, ուտում է մի քիչ ու
նորից քնում. ճաշիւոց յետոյ ուտում նորից ու ճարպ է նստում վառարանի
փորին: Թերթում է մէկ-մէկ զանազան գրքեր, կարգում է միայն «Գրական
դիւբեր»: Անս մի իւրայտուակ դիմանկար: Պոետը նշում է «նա» խաբարիք
կրօյ էպիգրամում, քէ ինչպէս է նա աւարտել եօք դասարան, գրել է կեան-
քում մի յօդուած միայն եւ ճննադատ է հիմա մեզանում» (էջ 408):

*Գարեգին Յովսէփեանի արձակի վերածած «Վարք որբոց» էպիգրամը
կիջ կրկին ուսանաւորի վերածենք՝ կը ստացուի.*

Բարձրանում է նա առաւօտ կանուխ,
Ուտում է մի քիչ ու նորից քնում.
Ճաշիւոց յետոյ ուտում է նորից
Ու ճարպ է նստում վառարանի փորին:
Թերթում է մէկ-մէկ զանազան գրքեր,
Կարգում է միայն «Գրական դիւբեր»:

«Վարք որբոց» անուն այս էպիգրամը Գարեգին Յովսէփեան անպարտան
առած է Չարենցի կազմած այն տետրակէն, ուր, ի միջի այլոց, բանաստեղ-
ծին իսկ ձեռամբ մէկտեղուած են նոյնանոյնի կտորները՝ «Եպիգրամներ եւ
սասիրական բանաստեղծութիւններ» ընդհանուր խորագրին տակ: Անհիւս
Չարենց այդ նոյն տետրակէն արտադրած է նոր կազմած հատորին մէջ տեղ
դասած քանակից էպիգրամները, որոնք, ըստ երևոյթին, քանակիցէն ա-
ւելի թիւ մը կը ներկայացնեն, ինչպէս ենթադրել կու տայ «Վարք որբոց»-ին
օրինակը: «Չարենց Դոյն մէջ կայ «Վարք որբոց»ի «հանդերձած» այս տիպա-
րը, որ նորէն «Գրական դիւբեր» միայն կարդացող անձնատրուութիւնն է, Գա-
րեգին Յովսէփեանի յիշատակած «Նախն, բայց չկայ «Վարք որբոց» տարբե-
րակը, ու չկայ օրեւէ ակնարկութիւն «Վարք որբոց»ի տարբերակին մասին:
Անս «Նախն, որով Չարենցը բամբայն հաւանականութեամբ նկատի ունի
Հայի Գիւլիբեիսեանին», այն Գիւլիբեիսեանը, որ 1927-1928 թթ. «Գրու-
կան դիւբերում» ամսագրի էջերում յամիրաւի ճննադատում էր Չարենցի բա-
տեղագործութիւնը» (էջ 606):

Ն Ա

Աւարտել է նա եօքը դասարան,
Սգել է յետոյ արտասահմանում,
Գրել է կեանքում մի յօդուած միայն —
Նւ ճննադատ է հիմա մեզանում:
Չարս լեզուներով բազմաթիւ գրքեր
Նիքում են հիմա նրա անգանին,
Բայց կարդում է նա «Գրական դիւբեր»
Ու գովք է տում նա Ալագանին, —
Նւ գոհ է հիմա ինքը իրանից,
Նւ գոհ են մարդիկ հիմա նրանից: —

ժամանակը, գործող անձերը, մտայնութիւններն ու գիրքորոշումները պատկերացնող զրական սեռ մըն է էպիգրամը եւ Չարենց այնպիսի՝ վաստակ մը ունի այդ մարզին մէջ, որ թէեւ վերապահութեամբ, այնուամենայնիւ, մէկէ աւելի մատուցականներու կողմէ սւտամիտութեան նիւթ դարձաւ։ Անահիտ Չարենց աւելի բաց մտքով մօտեցած է անոնց, անունով-մականունով քողազերծած է մեծ մասը Էպիգրամաւած անմնաւորութիւններուն եւ ճիշդ այդ պատճառով անհասկնալի կը մնայ շարքին միւս կտորները լսյալի շահունչու պատճառը։

էպիգրամներուն կապուած ուրիշ խնդիր մը.—

Աւելի քան ասոնցինք տարի առաջ, Հայաստան այցելած դրոսաշրջիկ մը, հիմա լաւ շինք յիշեր տարիքը եւ սեռը, վերադարձին՝ մեզի արտադրեց մեքենազէր փունջ մը բանաստեղծութիւններ, Չարենցի անունով ստորագրուած։ Այդ բանաստեղծութիւններէն ոմանք արդէն կարդացած էինք Հայրենի մամուլին ու Հրատարակութիւններուն մէջ, իսկ կարգ մը ուրիշներ կարդացինք Հետազային։ Գտրուեցաւ մեզի Հանդիպել փոքր չափի երկու-երեք կտորներու միայն, որոնցմէ մէկը, քառասող էպիգրամ մը, պարագայարար լոյս ընծայեցինք «Բազին»ի 1969 տարեշրջանի թիւ 9ին մէջ, սա մէկը.

Ն. Չ.

Իրք նայում եմ քո քրամիս դեմքին
 Եւ կարդում յետոյ երգերդ գրած —
 Ինձ պարզ եմ դառնում, քէ ինչո՞ւ նրանք
 Գրաւիչ եմ... քիչ։

Հարկաւ երկինքէն չէ ինչպիսի այս կտորը ու անհասկանալի չէ, որ անիկա եւս գանուի «Բանաստեղծութիւնների տետրալիքին այն բաժնին մէջ, ուրիշ արտադրուած են միւս էպիգրամները։ Չարենցի զրական թնամիներէն վերջինը չէր նայրի Չարեան եւ չի կրնար ըլլալ, որ բանաստեղծը էպիգրամով մը «պատուած» ու տեղաւորած չըլլայ դայն շատերներու այն շքախումբին մէջ, որուն հոանդուն անդամներն էին Հայկ Գիւլիքեիսեանը, Ազատ Վչտուհին, Յարութիւն Մկրտչեանը, Գէորգ Աբովը, Ալազանը, Նորայր Դարազեանը եւ ուրիշներ։

Նայրի Չարեանին նուիրուած վերի էպիգրամին ձեռագրային փաստին վերաբերող ոչ մէկ ակնարկութիւն կայ «Չարենց Դ»ի էջերուն, չկայ նաեւ «Բազին»ի մէջ երեւցած անոր պատճենին վաւերականութիւնը Հաստատող կամ Հերքող խօսք մը։ «Չարենց Դ»ը գիտական Հրատարակութիւն մըն է սակայն եւ ըմբռնելի չէ, որ գիտական Հրատարակութիւն մը լռութեամբ անցնի սպաղրուած գործերու վրայէն։

ՊԱՐՋՈՒԱԾՆ ՈՒ ՉՊԱՐՋՈՒԱԾՆԵՐԸ...

Չարենցի ձօներուն, էպիգրամներուն, բանաստեղծութիւններուն թէ նամակներուն մէջ յիշատակուած կարգ մը անունները անյայտ մնացած են Անահիտ Չարենցի եւ պարզան արձանագրած է իբրեւ այդ. — «Չյաջողուեց պարզել»:

Քանի մը օրինակներ.

«Չյաջողուեց պարզել՝ ով է Լ. Զ. մ, որին նախրուած է նաեւ «Նամղիկէ» պոեմի առաջին տարբերակը (էջ 503):

«Մեզ չյաջողուեց պարզել, թէ ով է Դատրէն, հնարաւոր է, որ խօսքը Դորէի մասին է (էջ 670):

Մամիկոնեան — Հնարաւոր չեղաւ պարզել, թէ ով է այս անձնաւորութիւնը (էջ 689):

Անյայտ մնացածներու այս շարքին կայ մէկը, որուն ուրուստուերը առաջին անգամ երեցաւ «Բագիմ»ի մէջ: Ամփոփենք պատմութիւնը եւ նշենք հաւանականութիւն մը. —

1980ին, «Յեղափոխական այլաբաններու հրատարակիչ Աւոն իմբպրուէթեան տրամադրեց «Սիրելի բժիշկ»ի մը ուղղուած Չարենցի մէկ նամակը, որ լոյս ածուած «Բագիմ»ի նոյն տարուան օգոստոսեան համարին մէջ, լուսապատճենով միասին: Չարենցի ներկայ հատորին մէջ տեղ դրած այդ նամակին անդրադարձող ծանօթագրութեան մէջ, Անահիտ Չարենց կ'ըսէ.

«Մեզ չյաջողուեց պարզել, թէ ով է այս նամակի հասցեատէրը, որիմ Չարենց դիմում է «Սիրելի բժիշկ» քառերով (էջ 688):

Պատճառներն է, որ այդ կապակցութեամբ զուր անցան նաեւ մեր պըրպըտումները, եթէ չհաշուենք այն ոչ անպայման հաւատարմ լոյսը, որ առկայ է տասնութ տարի առաջ «Սովետական գրականութիւն» ամսագրի (1967, թիւ 9) լոյս ընծայած կարինէ Քոթանջեանի յուշերուն սա հատուածին մէջ.

«Չանցած մի քանի օր, կանչում են ինձ օֆիս (Ամերկոմի գրասենեակ), պահանջում են ներկայանալ դոկտոր Ռուբէնիմ, Դաշնակցութեան կամբոտի քարտուղարին: Ես այդ գրասենեակի հետ աղբիւրքիւն չունեի, որպէս որքանցի բժշկական մասի վարիչ եմ քարկում էի բժշկական բաժնին: Դա կանկաւածանքի մէջ է գցում ինձ ու զգուշութեամբ հաւտը Չարենցի կապոցը յանձնում եմ մայրապետներին մէկին:

Դոկտոր Ռուբէնը ընդունում է սառը եւ սպա սկսում է գրագրայ. «Բաշնիկիւնք ես դարձրել արանոցը, Չարենց, ինչ որ ազդիկ...»:

Անհաւանական չէ, որ ինքնութիւնը անյայտ մնացած «բժիշկը» այս դոկտորը ըլլայ, դոկտոր Ռուբէնը: Այս ենթադրութեան առիթ կու տայ այն հանգամանքը, որ ճիշդ նոյն միջոցառումն մէջ Չարենց գրած է իր նամակը, Մայիսեան ապստամբութենէն ետք, 5 Օգոստոս 1920ին, երբ ուրիշներու կարգին ինք եւս կը գտնուէր հակապետական քարոզչութիւն ու գրգռութիւններ ընծիււ մեղադրանքին տակ, 13րդ որբանոցի 4 մեծ սրբ ըմբոստութեան

ճղած ըլլալու ամբաստանութեամբ, ինչպէս կ'ըսուի նամակին մէջ՝ որքանոցը բոլշեւիկեան որջ զարձնելու մեղքով...

Չարենց կը մերժէ եղած ամբաստանութիւնները, նամակով. «Եւ անս ես պիտի ասեմ Ձեզ, սիրելի բժիշկ, որ ես այդ գործին մէջ բնաւ խառնուած չեմ եւ ինչպէս դուք գիտէք, վերջին ժամանակներս հիւանդ եմ եւ բնաւ դուրս չեմ գալիս սամից»:

Մեր ենթադրութիւնը չի փոքրանք հարկաւ մշուշը, բայց կը կարծենք, որ բոլորովին արհամարհելի հաւանականութիւն մը չէ:

Այս շարքէն, չպարզուած, ուրիշ նմոյշ մը, «Այս աշունը այնպէս անցաւ բանաստեղծութեան ծանօթագրութեան տարեթիւր (էջ 565)»:

«Թերթիկի հակառակ երեսին գրուած են մի քանի էպիգրամներ: Թերթիկը վերի մասում քայտայտած է եւ առաջին էպիգրամի վերնագիրը հնարաւոր չեղաւ վերականգնել»:

«Օ, դու Սեւանի մեծ ծովով
Եւ «Տուրիտի» բովով
Միմչել Ձեկա հասած
Ողորմելի «Օվոդ»...

Օվոդը՝ Լեւոն Շանթի թարգմանած նշանաւոր «Բռնչին Հերոսն է, Բո՛ւրը, որուն հետ Չարենց կամեմասած է իր հերոսը: Միւսները՝ չենք գիտեր, բայց այս մէկը, «մինչև Ձեկա հասած ողորմելիքն», որ պէտք է սեւագրուած ըլլայ 1936ին, դժուար չէր ստուգել եւ դժուար չէ մտածել, որ Անահիտ Չարենց չէ ուղած առ այդ պարպումներ ընել:

Չլալողունց պարզել,
Հնարաւոր չեղաւ պարզել,
Հնարաւոր չեղաւ վերականգնել...
Եւ այլն:

Հաստ՝ պարզելը, պիտի հարցնէ ընթերցողը, «պարզի՞ց պարզները: Կան ասոնք եւս, որոնց մօտէն չենք գիտեր ինչու աչք գոցելով կ'անցնի Անահիտ Չարենց: Նշենք քանի մը հասը ու բաւարարուինք հարցումներով:

ՄԱՀԱՅ ՏԵՐ-ԳԱՐՐԻԷԼԵԱՆ. — Մահացել է 1937 թուականին (էջ 501):

Բնակումն մահով:

ԱՂԱՄԻ ԽԱՆՋԵԱՆ. — Հետագայում Որս անիւնը փոխադրուել է Երևանի պամբէռնը (էջ 546):

Ե՞րբ:

Ա. Բ. — Բաճաստեղծութիւնը առաջին անգամ տպագրուել է Ս. Աղաքաբեանի «Ակսեչ Բակուց» գրքում (Երևան, 1958) (էջ 568):

Հարագատօրէ՞ն:

26-8-1936, 26-8-1936. — 1936 թ. ՕԳՈՍՏՈՍ 21ԻՆ, «Յորհրդային Հայաստան» թերթում լոյս տեսաւ «Փոշիայնեկ, Հողմացրիւ անել սողխալիզմի թշնամիներին» յօդուածը (էջ 560):

Յօդուածը հեղինակ չունէ՞ր:

ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐ ՈՒ... ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐ...

Յայտնաբերուած բանաստեղծութիւնները ծանօթագրելու սկզբունքին մէջ ինչն իրեն հետեւողական չէ եղած Անահիտ Զարեկն եւ զժողար է կուահել այդ տասանուամբն պատճառը:

Արքեմն բանաստեղծութեան մը ազդեցին սուկական յիշատակութեամբ կը բաւարարուի:

Ուրիշ տարիքով՝ ազդեցին հետ կը յիշատակէ առաջին անգամ սպուած ըլլալու հանգամանքը:

Յրբորդ՝ ազդեցին հետ, որու կողմէ եւ ուր սպառնալու ըլլալու փաստը:

Չորրորդ՝ ազդեցը, առաջին սպառնալութիւնը եւ սպառնական ինչ վերաբերումներու արժանացած ըլլալու պարագան:

Նմուշներ —

Առաջին — ՄԵՌԱՒ ԱՍԳԱՆԱԶԸ: — ԿԱՆՑՆԵՄ... — Տպագրուած է ԲՏ իմքնագրից:

Երկրորդ — ԽՈՂ... — Ինքնագիրը պահուած է ՁԹ, առանձին քերթի վրայ, զանգամ փոփոխութիւններով: Առաջին անգամ տըպագրուել է՝ ՄԳ, 1962, քիւ 6:

Երրորդ — ԱՆՎԵՐՆԱԳԻՐ... — Տպագրուած է ԲՏ իմքնագրից: Առաջին անգամ նրատարակել է Անահիտ Զարեկը՝ «Թանկեր Երևանի համալսարանի», 1975, թիւ 2:

Չորրորդ — ԻՄ ՕՐԵՐՈՒՄ ԵՄ ՅԱՆԱՑԱՑ ԼԻՆԵԼ ՎՍԵՄ ԵՒ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ... — Դրուած է շերտերի սեփական օրհնակի առաջին էջին: Առաջին անգամ տրոշ բացքադումներով տպագրուել է՝ Զարեկ, Ընտիր երկեր, 1954, էջ 495:

Կան Կական բանաստեղծութիւններ, եւ քիչ չէ անոնց թիւը, որոնք արուածէն աւելի կենսագրական երեսներ ունին, բայց Անահիտ Զարեկն, ինչպէս ըսուեցաւ, անանած է անոնց մէկ կամ միւս կերտը, մանաւանդ առաջին անգամ հոս կամ հոն տպուած ըլլալու անոնց հանգամանքը, երբ Զարեկի անտիպներուն պատմութեան համար շատ աւելի նպատակաշարժար պիտի ըլլալու առաջին մի կատարին սպառնի կենսագրականը: Պիտի չմոռնանք, որ Զարեկի անտիպները Զարեկի ոգիբազումներն եւ ոգիբազական ժամանակի մը մասին վկայութիւններ չեն միայն, անոնց հանդէպ ցուցաբերած մարդոց վերաբերումը նոյնպէս ունի վկայաբանական արժէք. զոր երբեք չենք կրնար թիջի ալլոց իրադարձութիւն համարել: Յասկանչական է այս իմաստով վերոյիշեալ ծանօթագրութիւններէն չորրորդը, ի՞ մասնաւորի անոր զբացթողումները բաժինը: Մանրամասնութիւն մը չէ ասիկա, հական կէտ է, բացթողումները իմանալու հետաքրքրութեան բաւարարութիւն առաւ պարտաքէն վեր բան մը, Զարեկի անտիպներուն պատմութեան համար նորէն: Բաց-

Թողումները բանաստեղծութեան երկրորդ և չորրորդ երկտողներն են, Հե-տեւեալները.

Իմ օրերում դժուար էր շատ լինել հաստատ ու մնայում, —
Իմ օրերում պատմութիւնն էր իւրաքանչիւր բառիս նայում:

Իմ օրերում շա՛տ էր դժուար երգը կեանքի համար երգած, —
Իւրաքանչիւր բառը — կամ մի թռի՛չք էր վեհ, կամ — մութ արկած:

Աւելի լաւ պիտի ըլլար Հարկաւ, որ Հատորին ամբողջ երկայնքին կի-րարկուէր այս մեթոտը, բայց Անահիտ Զարենց, իր կարգին, թոյլ տուած է արդ բացթողումներ, որոնք չեն կրնար ստուեր չնեակել իր Հերոսական ու ի-րապէս Հիանալի աշխատանքին վրայ: Պատճը կը վերաբերի վերի նմոյշին պէս բացթողումներով Հրատարակուած բանաստեղծութիւններուն ծօտէն լուս-անցնելու իրականութեան: Օրինակ մը.—

Մի ՀԱՆՃԱՐԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ... — Տպագրուած է ԶԳ պահպանուող քայքայուած ինքնագիրից: Հնարատրիս չափ վերականգնուել է երկատղերի յաջորդականութիւնը» (էջ 537):

Այսքան միայն: Ո՛չ առաջին անգամ տպագրուած ըլլալու յիշատակու-թիւն և ոչ ալ բացթողումներու Հարց: Բայց այս բանաստեղծութիւնը ան-գամ մը ներկայացուած է ընթերցողին շուրջ քսան տարի առաջ, «Հայրենիքի» ձայն» շարաթաթերթին (1965, թիւ 5) մէջ, և ներկայացուած է սխալ վեր-ծանուցմանով ու դարձեալ բացթողումներով: Բացթողումները.

Եւ ո՞վ է քեզ համոզել, որ ոգին դու եմ,
Եթէ մահրես եղեամի այդ մախշերից անգոյ —

Պիտի աշխարհը իր դէմ այնպէս տեսնի,
Ինչպէս գրեում Զարեամի, կամ Ալագանի...

Սխալուած ես, սիրելիս, — այդ քեզ ցուրտն է խորել
Մի՞թէ աշխարհը պիտի Ալագանով չափել...

Մամուլին մէջ երեւցած բանաստեղծութիւններուն և Անահիտ Զարեն-ցի Հատորին մէջ տեղ դասած անոնց պատճէններուն միջև տարբերութիւն-ները չի՛ չեն, կրբեմն ակամայ թոյլ արուած են անոնք և մերթ խմբադիրներու բացայայտ կամայականութեամբ («խմբադիրներս են արեւը»): Այդ տարբե-րութիւնները իմանալու գործը դիւրացնելու Համար, ստորեւ կը նշենք առա-ջին տպագրութեան ա՛յն ողբերները, որոնք բաց մնացած են Անահիտ Զա-րենցի ծանօթագրութեանց մէջ:

ԱՇՈՒՆ Է ՆՄՏԵՆ ՍԵՂԱՆԻՍ. — Բանաստեղծութեան ինքնագիրը պահուած է
ռեժիսոր Ա. Գուլակեանի (1899-1960) թղթերում: Տպագրութեան
է արամադրել ռեժիսորի դուստր Ս. Գուլակեանը:
Գրուած է «Նոյնեմբեր» միութեան բլանկի վրայ:
Բանաստեղծութիւնը Համակուած է կնոջ՝ Արվենիկ Զարենցի մահ-
ւան (1927) վերյուշով (էջ 501-502):

ԲԱԳԻՆ. — Առաջին անգամ հրատարակուած է «Սովետական Գրա-
կանութիւն» ամսագրին մէջ, 1962 թիւ 6:
digitised by A.R.A.R.®

ՀԱՐՔԱՆԻՆՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՐԸ պահպանում է ԳԱԹ, ԶԾ, ԲՏ. արտա-
դրում է «Իժմաբան» տոգրով սկսող բանաստեղծութեան հետ նոյն
էջի վրայ՝ «Արփիկի յիշատակին» ընդհանուր խորագրով (502):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակում է «Մոլեռական գրա-
կանութիւն» ամսագրին մէջ:

ԳՈՒ ՄԻԱՅՆ ՊՈԵՏ ԵՍ, ՀԱՍԿԱՅԻՐ... — Տպագրում է ԲՏ *ինքնագրէց*
(502):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակում է «Գրական թերթ»-ին
մէջ, 1978, քիւ 8:

ԱՍՏՈՒԱՄԱՄԱՅՐ, ՀԵՌԱՅԱՄ ԿՆՈՋ ՊԱՏԿԵՐ ԼՈՒՍԷ. — Տպագրում է ԲՏ
ինքնագրէց (511):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակում է «Գրական թերթ»-ին
մէջ, 1978, քիւ 6:

ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է ԲԵՐՔՆ ԱՆՑԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԵՐԿՐԻ. — Տպագրում է ԲՏ
ինքնագրէց (512):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ տպագրում է «Մոլեռական գրա-
կանութիւն» ամսագրին մէջ, 1977, քիւ 11:

ՈՎ ԿԸ ՏԱՅ ԻՆՁ ԳԻՏԵԼԻՔ. — Տպագրում է ԲՏ *ինքնագրէց* (513):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակում է «Մոլեռական գրա-
կանութիւն» ամսագրին մէջ, 1977, քիւ 11:

ՍԻՐԵԼԻ ՆԱԶԻԿԻՆ. — Գրում է «Նարարատիկա Մ. Մաքսիմովի ընտանեկան
ալպոմում», որից էւ տպագրում է (518):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ տպագրում է «Յիշողութիւններ Եղի-
շէ Զարենցի մասին» հատորին մէջ, 1961, էջ 79:

ԵՐԵՆԱՆԵՐՆ ԵՆ ԲԱԿՈՒՄ ԱՂՄԿՈՒՄ. — Ինքնագրէ պահպանում է «Բա-
նաստեղծութիւնների տեսակէց» պոկում մի թերթիկին վրայ
(514):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակում է «Գրական թերթ»-ին
մէջ, 1978, քիւ 3:

ՌԻԶՁԻ ՀԱՄԱՐ. — Ռիչիէն Նուրում բանաստեղծութիւնների *ինքնագրէրը*
պահում է նա Չարենցի տուն-թանգարանում (515):

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ տպագրում է «Աշակարգ» մէջ, 2
փետրուար 1978:

ԻնՋԲԱՆ ԽՈՂԵՐ ԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ.— Գրուած է ՁՅ պահպանուող *Վերկերքի* սեփական արհեստի առաջին էջերին (520) :

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակուած է *ՎՍՊԿՍՊԿՆԱԿԱՆ զՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ* ամսագրի՞ն մէջ, 1962, քիւ 8 :

ԻՄ ՄԱՆԿԻԿԻՆ՝ ԱՐՓԵՆԻԿԻՆ.— Բնագիրը պատրաստուել է ՁՅ պահպանուող *Ինքնագրերից* մեծագիր էջի վրայ գրուած է Ա տարբերակը, որի Ա եւ Բ մասերը մշակել է նոյն էջի վրայ: Իբրեւ Հիմնական բնագիր ներկայացուած է մշակուած տարբերակը (520) :

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակուած է *ՎՍՊԿՍՊԿՆԱԿԱՆ զՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ* ամսագրի՞ն մէջ, 1957, քիւ 3 :

ՆԵՐՔՈՂ ԵՐԳՈՂՆԵՐԻՆ.— Ներկայացուող բնագիրը պահպանուած է *Քանոնատեղծութիւնների տեսակետով*, վերնագրին կից թուադրուած է 1935. 4. 14, վերջում՝ 1935. 14. 6: ՁՅ պահպանուած է բնագրի 63-64 տողերի մի այլ *Ինքնագիր* (ինքն. Բ.), որն, ըստ երեւոյթին, հաստատ է բանաստեղծութեան այլ տարբերակից: Բանաստեղծութիւնը գրել է Գրողների միութիւնից հետազոտչու աւիթով, որի համար պատրուակ է եղել *Չարեցի* այսպատարութիւնը՝ աւղղուած Հայաստանի գրողների միութեան վարչութեանը (528) :

ԲԱԳԻՆ.— Վերբողէն առաջին անգամ 31 տող հրատարակուած է *Չարեցեան ընթերցումներ* շարքի երկրորդ հատորին (1974) մէջ, էջ 212-213 :

ՏԵՈՒՐ ԿԱՐՈՒՍԵԼ.— Բանաստեղծութիւնը գրուած է *Չարեցի ձեռքով* պատրաստուած ու մեկաւորուած մի փոքրիկ տեսարակի մէջ, որ պահպանուած է ՁՅ: Տպագրուած է այդ թայտարարուած *Ինքնագրից* (535) :

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակուած է *Վերական թերթ*ի՞ն մէջ, 1967, քիւ 3 :

ՄԻ ՀԱՆՃԱՐԵՂ ԵՐԻՏԱՍԱՐԳԻ.— Տպագրուած է ՁՅ պահպանուող *Թայտարարուած Ինքնագրից* (537) :

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ տպագրուած է *Հայրենիքի մայն* շաբաթաթերթի՞ն մէջ, 1966, քիւ 1 :

ՅՐԳԻՆ ԿԱՆԳԵՍԻ ԵՄ ԵՍ ԻՆՔՍ ԻՄ ԴԷՄ ՇՈՒԱՐ.— Տպագրուած է ՁՅ պահպանուող *Ինքնագրից* (558) :

ԲԱԳԻՆ.— Առաջին անգամ հրատարակուած է *ՎՍՊԿՍՊԿՆԱԿԱՆ զՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ* ամսագրի՞ն մէջ, 1962, քիւ 6 :

Օ, ԱԼԵՔՍԱՆԴՐ, — ՈՉ ՀՌԶԱԿ, ՈՉ ԳԱՆՁ. — Տպագրւում է ԲՏ Ինքնագրից. վերջնական այս տարբերակը թուագրւում է՝ 9. 4. 1935 — 22. 12. 1936 (527):

ԲԱՊԻՆ. — Առաջին անգամ տպագրուած է Ս. Աղաբաբեանի «Եղիշէ Զարեհ» — 2, 1977, էջ 148:

Օ՛, ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՊՈՆՏ ՊԱՅՄԱՌ. — Տպագրւում է ԶՅ պահպանուող անթը-ւակէր Ինքնագրից: Գրել է 1937ին, Պուշկինի մահուան 100ամեայ յարելեանի օրերին (593):

ԲԱՊԻՆ. — Առաջին անգամ տպագրուած է «Զարեհեան ընթեր-ցումներ»-ում մէջ, Բ. Խատար, 1974, էջ 80:

ԱԽԵՏԻՔ ԻՍԼԱՄԿԵԱՆ. — Բանաստեղծութիւնը գրուած է թաշկինակի վրայ, որն իր սպիտակեղէնի հետ Զարեհը բանակից ուղարկել է կնոջը եւ նա յանձնել է Ա. Իսահակեանին: Այժմ պահպանւում է Իսահակեանի ժառանգների մօտ (605):

ԲԱՊԻՆ. — Առաջին անգամ երեւցած է «Երկերի ժողովածու» շարքի Զ. Խատարի մէջ, 1967, էջ 456:

Մենք, պարզ է, հայրենի բուր հրատարակութիւններուն եւ մամուլի բուր անդամներուն հետեւելու բախտ ու հնարաւորութիւն չունինք, հետեւաբար՝ «Թագիմ»-ի նշած առաջին անգամը պէտք է հասկնալ պայմանա-կանօրէն:

Մ... -ի յիշատակին

■ *Չարենցի ձեռագրերն առաջին անգամ մէջ առջ ունեցող անձնատարութիւններու շարքին՝ առաջին տնունը անգլոսլոնի նկարիչ Ռեդիա Ղազարեանն է, որ 1936-1937 տարիներուն զետեւացի պարձանուէի մը, անօրինակ ջր-մանր յանձն առաւ զուսուկէ Չարենցի ձեռագրերն ձեռն ձեռք, եւ երբ Հայաստանի վերայ կուսակուած ժողով անպիտան փարտանքան՝ քանապակիներն ժառանգորդներուն աւ Գրականութեան Բանագրանին յանձնեց ժողովը պահել զրուած բոլոր Բուրգիները:*

Իսկ երկուսն էն՝ Ռեդիա Ղազարեան 1967ին Վրաստան քերթին (13 Յունուար) արածագրեց Չարենցի շարքը կտոր, ձեռագրի գիտաբանք արձակ գրասուճը, Վճար կտրուանքը, Վճարիտոյցը եւ Վճար յիշատակին հրահայտունը բանաստեղծութիւնը: Առաջին երկը առջ գտած են Վճարեան 73ի մէջ, եւ վերջինը՝ 74:

Մտորէ կը ներկայացնենք իր Վին բախտին նմարկուած այդ գործիս պոսթիւմը...

Հոգու պարտք եմ համարում հայ ընթերցողին ծանօթացնել Չարենցի անտիպ ձեռագրերի մի մասին՝ զըրւած 1936-37 թուերի ծանր պահերին, ընդհուպ մինչեւ նրա կեանքի վերջին օրերը:

Չարենցի անտիպ ձեռագրերը յանձնուել են ինձ բանաստեղծի կնոջ՝ Իվաբելայի կողմից՝ Չարենցի յանձնարարական նամակի հիման վրայ:

Այդ ձեռագրերը շուրջ 17 տարի պահուած էին իմ հարապատենից մէկի տանը:

Պատկաւում ձեռագրերի մէջ էր նաեւ «Կոմիտաս» պոեմի վերջնական, մաքրագիր տարբերակը, որի հետ ընթերցողը ծանօթացաւ «Սովետական գրականութիւն» տնամարտի 1964 թուականի Յունուարի համարում, եւ որը, ի դէպ, բանաստեղծի արխիւի հիմնական մասի հետ դեռուս 1955 թուականին նուիրել եմ նրա զուտարերին:

Ձեռագրերի՝ ընթերցողին ներկայացուող այս մասը, որը հրատարակում է առաջին անգամ, պատկերում է Չարենցի կեանքի վերջին տարիների խոռվայոյ պարտմները, որոնք յիստորիկ նրա պայծառ հաւատն ու սէրը իր հայրենիքի նկատմամբ:

«Ոչ, — Չեմ հաւատում, որ նայիրական Աշխարհում ամբողջ գտնուի դէք մի Պոնտ, որ այսօր իր բախտը գտնի իր ժողովրդի վսեմ, տիրական երբը խափանող ուղիների մէջ»:

ՌԵԳԻՆԱ ՂԱԶԱՐԵԱՆ

Որպէս գործ, դեղին տերեւներ, —
 Ցրում է հողմը, ցրում —
 Անդալար, սերունդէ սերունդ —
 Նայիրեան երգի արեւկեր,
 Աներկիր հունտը անմահ,
 Որ վաղուց, իր հողից հեռու՝
 Ե՛ւ դարեր առաջ, է՛ւ հիմա —
 Քշուել է տաշնդի նման
 Աշխարհի բոլոր բացերում...

Եւ կրկին, որպէս տերեւներ,
 Քշում է հողմը նրանց,
 Որ չընկնեն, նրանք չամբանան

Հայրենի հողերի վրայ, —
 Այլ, իբրեւ դեղին տերեւներ —
 Յշնամի դաշտերում մեռնեն...

Եւ ահա, ինչպէս միշտ, — հիմա
 Աշխարհի բոլոր կողմերից,
 Ազատուած հապար հողմերի
 Ժանտաճանտ ուժից, մերձիմահ
 Հաւաքուել էին երբ հազիւ
 Դաշտերում իրենց հարապատ —
 Հայրենի հողմն է ահա ծանտ
 Հալածում նրանց բիրտ ու վապիր...

Թափում են, թափում անդադար՝
 Հայրենի հողմերի ներքոյ —
 Խեղճացած, նողկալի երգով՝
 Հայրենի սիրով յանցապարտ, —
 Հարազատ, սիրած, հանդերի
 եռանդուն խանդով յանցատր —
 Ընկնում են, ընկնում յանցագործ,
 Ինչպէս տերեւներն այս դեղին...

Ո՛չ, պոե՛տ, — օ, ո՛չ, — օ, ո՛չ, —
 Յնծագին երգով, շառաչով
 Տերեւներն այս՝ մահուան առաջող —
 Նրանցից երջանիկ են ու ողջ, —
 Նշանցից քիւրպատիկ առաւել
 Անվեհեր են այս չոր տերեւները, —
 Նրանց մահն-անմահ հորովել է՝
 Հայրենի հողի հրաւեր...

Թռչո՛ւմ են նրանք գուարթուն
 Խառնելու շրջունն իրենց չոր —
 Հայրենի ծարաւով տոչոր
 Հողերին, շողին ու մարդուն, —
 Ընկնում էք ընդմիջտ սակայն դուք՝
 Մեռնելու մահով անիմաստ, —
 Եւ տխուր է ձեր երգը նուաստ, —
 Եւ չունէք անգամ փոս դուք հիմա՝
 Եւ օտա՛ր էք հայրենի հանդում...

Ծաղկածոր 29-30-31 — VIII. 1936
Երեւան. 17 II. — 1937

Եւ թշու՛մ է, թշում է մեր մոլի
 Հայրենի դաշտերի քամին
 Դեռ ռիտով ահեղ, թշամի,
 Ինչպէս տենդն՝ արիւնից շքեմողի, —
 Դեռ թշում է հունտերը բոլոր
 Նայիրեան սիրոյ ու երգի,
 Որ չընկնեն հայրենի հերկին՝
 Սահմանուած քերքի՛ համար նո՛ր...

Աննահանջ կամքով գրատար,
 Անկուռն, անխոնջ ու դաժան՝
 Համակուած դիտ՛վ սրբազան
 Եւ անսահման ահով. —
 Համակուած անեռն սարսափով
 Հայրենի սիրոյ ու երգի, —
 Մաքրո՛ւմ է հող ու երկիր
 Ցեցերի՛ց այդ՝ մահից խուսափող...
 Համակուած անանց սարսափով,
 Ինչպէս արնագոյն լաթից
 Յուլերն են դժնում, մահատիպ, —

Մահացու սարսափի տապով —
 Այրում է երկաթով ու հրով,
 Ռոպէս ծիլ թշնամի արեան —
 Ինչ երանգ ունի նայիրեան
 Եւ կարող է վարակել սիրով...

Ինչպէս սեւ, վապիբ գտանցանք, —
 Որ պատում է հոգին մարդկային, —
 Անդպէս՝ ամէ՛ն մի դահիճ
 Ոչ թէ այն է համարում յանցանք, —
 Որ յանուն նողկալի փողի
 Գո՛ւն է կտրում ինքը կացնով, —
 Այլ-քաղցից դարձած խելացնոր —
 Իր կտրած գլուխը գողի...

Ճի՛շդ այդպէս հիմա մեր Քամին,
 Մեր երկրի Հողմը տիրող —
 Հայրենի ջուրն ու հողը սիրող
 Գողերի՛ն է միայն թշնամի...
 Բռնկուած աշխարհի սիրով՝
 Աշխարհի փրկարար Քամին —
 Կարո՞ղ է արդեօք իր սիրոյ
 Տիեզերքը գրկող յոյգերով
 Ընդունել-հին տունն իր սիրող
 Մի վապիբ հաշմանդամի...

Համակուած ահուելի ռիտով
 Դէպի սեւ, անսանձան
 Այդ սիրով վարակուած, սակայն
 Թաքնուած «կուսութիւն» ջողով
 Ռտինները բոլոր նողկալի, —
 Հնձում է եռանդով անծիր
 Հայրենիքն իր-հայրենի նա հնձից,
 Որ ցանի-հայրենիք մի գալիք...

Իր երկրի յանցատր սիրով
 Վարակուած շիտերն այդ սակայն
 Հրկիպում է նա-յանուն իսկական
 Հայրենիքի սիրոյ...
 Նշելով գարշանքի կնիք
 Հնացեալ սիրոյ ճակատին —
 Հոչակում է նա, դրան հակադիր —
 Հայրենիք...

.

Եւ ընկնում են, ընկնում անդադար,
 Ինչպէս շուրջ-տերեւներն աշնան, —
 Հայրենի հանդերում բունանած
 Յօղուններն՝ հողմերին օտար...
 Ընկնում են, ընկնում են անվերջ —
 Եւ ծիւեր՝ դեռ նուրբ, նորընծայ,

Եւ-սարմատից հնձած —
Բարդիններ՝ արդէն աստղամերձ...

Օ, այն չէ՛ սակայն վազրեյի,
Որ ջշում է այսօր մի հողմ,
Քշնամու նման, ամէն կողմ —
Մեր երգի նոր ծիլերն էլի: —
Այն ե՞րբ է եղել-հարապատ
Իր երկրի, կամ օտար կողմերի
Մահաշունչ, դժնի հողմերից
Նայիրեան երգի սաղմը-ապատ...

Քշե՛լ է միշտ է՛լ նայիրեան
Երգերի սաղմը քամին, —
Տեսել է նա անթի՛ւ թշնամի,
Բայց ծաղկել է կրկին՝ բո՛րբ ու բուրեան:
Քշուե՛լ է, արուել ոտնակոխ,
Խառնընել հրի ու փոշու, —
Բայց իբրեւ ոգի, իբրեւ շունչ,
Իբրեւ սաղմ անմահ, ինքնագոհ, —
Պահպանուել է նա մի՛շտ անմեռ
Իր ներքին ինքնութեամբ անկոր, —
Ինչպէս հու՛նտն է պտուղի-անկոխ,
Քանի չի նեխել միջից դեռ...
Պահպանել է իր միջուկն-անեղծ,
Եւ դարձել դրանո՛վ միայն-յար
Քիչատոր դժնի. անհնար
Փորձանքների համար-անմերձ...

Անձրեփ, ցրտերի, շոգի,
Տանաշնքի, ծովի, հարուածի,
Մենութեան, դառնութեան, լացի
Բոցերում կարծրացած, օ, ոգի՛...
Օ, ոգի, օ, սաղմ նայիրեան
Հանձարի, — օ, ինքնութիւն, —
Աշխարհում չկար ո՛չ մի թոյն,
Որ լուծէր հիւլէն թո արեան...

Օ, պի՛րկ, անյարիր, անլոյծ, —
Միացման չենթակայ տարր, —
Տարերամերձ, օ, տարր դու օտար,
Որ յորդել ես դարեր անդադար
Ինքնաբուխ, սեփական լոյս...
Փարերի ծագից, ակունքից
Մինչեւ օրս հասած դեռ ասա,
Օ, դու, նայիրեան սաղմ, —
Միթէ արդ, վերջապէս, հասար
Քո..... երկունքին...

Օ, հապար հողմերի նոխապ.
Օ, հապար հողմերով սպար...

Դաշտերում հայրենի եւ օտար
Քիւրատր ոտքերով կոխած...
Դու եղել ես սաղմ կենդանի,
Ոգու հունտ անկոխ ու անմահ,
Որ ծաղկում է բոցով անմար,
Յախտեան՝ ինքն իր մէջ՝ անմահ, —
Եւ ծաղիկ է տալիս, —
Ուր որ Հողմը տանի...

Ես գովքն եմ երգում քո անմահ
Ինչնութիւնը այդ բարձրաբերձ,
Որ, իբրեւ անխորտակ մի բերդ,
Դարձրեց մեկ-յախտեան-մա՛րդ: —
Ես գովք եմ երգում մեր ոգուն,
Որ անկոր ինքնութեամբ կենդանի՝
Փորձութեամբ կարծրացաւ քանի —
Այնքան պիրկ դարձաւ ու տոկուն:

Ես գովք եմ երգում նայիրեան
Պանծալի ոգուն հայրենի,
Որ հրով կոփուած հայրերից
Ժառանգել եմ ես՝ հրի հետ արեան: —
Ես գովք եմ երգում (ցնծութեան)
Ցանուն հոր, ե՛ւ որդու, ե՛ւ հոգու, —
Նայիրեան բարձրաբերձ ոգուն,
Նայիրեան սաղմին անկորուստ...

Բայց եւ գովք եմ երգում խանդավառ
Հողմերին, քամուն, հրդեհին,
Որ (ոտնակոխ) արին
Նայիրեան սաղմն անդադար:
Ես գովք եմ երգում վերջապէս
Մահաշունչ, վայրագ, ամեհի
Ուժերին փորձութեան ու Մահի,
Որ մեր ոգին չափեց: —

Որ դարե՛ր, դարե՛ր, դարե՛ր,
Վայրենի, վայրա՛գ, բարբարո՛ս,
Տեսնելով իբրեւ բարձր փարոս,
Մեր ոգու օղան հանձարեղ, —
Խառնիխուռն, ինչպէս հորդանեթ,
Հեղեղներ ամեհի, կործանող —
Խուժեցին հողմերի պէս —
Ե... անհետ կորան աշխարհում...
Ես գովք եմ երգում կործանիչ
Ուժերին վայրագ, ամեհի,
Որ ներքուստ, սակայն ամայի —
Դասատու են դառնում փորձանքի:
Եւ երգում եմ գովք վերջապէս
Քո ոգուն ամեհի,

Որ հերքումով էր ողջունում մահին,
Որ պիտի իրեն կործանէր...

Եւ այն ո՞ր, այն ո՞ր կենդանի,
Սաղմնատր, սաղմով անմահ
Խնդութեամբ չեն դէպի մահ
Ընթանում, իբրեւ հանդէսի...
Այդպէս չի՞ արդեօք մոլեգնած
Ծառերի ցնծութիւնն այս ահա, —
Ցնծութեամբ են թոյում դէպի մահ
Տերեւներն օտա շուրջս դեղնած...

Հնչելով ցնծութեան ծնծղաներ —
Տրեւով տերեւներն իրենց չոր —
Ցնծութեամբ (ծփածով) ու ճիչով —
Յղում են կենսատու ընծաներ...
Ցնծագին, ամենի, շա՛մ
Ցրում են սաղմերն իրենց չոր
Աշխարհի կողմերը բոլոր, —
Որ, եթէ կարող են-աճեն...

Ցնծութիւն է մահն աշխարհում
Յաղթական երթ է շքեղ,
Գալիքի ցնծալի շքերթ —
Հոնդուն ցրտերի միջով...
Փա՛ռք, օ, փա՛ռք, քրքիջով ու ճիչով
Դէպի մահը թոյող ընդառաջ
Սաղմերին.....:

Բայց դո՛ւք, — դո՛ւք, — շուարած,
Ձեր մահից առաջ մահացող,
Ինքնամեղծ թծութեան հացով
Մահատիպ կեանքին ձեր վարած, —
Հայրենի հողմի այս մովի
Գերանդոս ետանդուն թափից
Գետնահար փռուած, անխօս
Օ, վերջին հերկերի ծիւեր...

Օ, դուք, — դեռ այսպէս խնամքով
Արմատախիլ չարած,
Դեռ դրանից առաջ
Մեր երգի հնամեայ, անկոխ
Հողերից բարձրացած, վերջին
Նայիրեան անաղա՛քտ երգի բերք, —
Այդ ե՞րբ, այդ ե՞րբ, ե՞րբ-ե՞րբ
Պոտորեց ակունքը ձեր ջինջ...

Որքան էլ ուշացած բերք
Հապարամեայ հունտի,
Որ տուել էր դեռ երեկ անթիւ

Բարձրաբերձ վերձիգ երգի
Ուր, իբրեւ սերունդ երէկուայ,
Մի գարունը ընդամենն առաջ —
Բարձրացել էին ի՞նչ կենսառատ
Երգիչներ՝ ոգով աներկբայ...

Հնամեայ անտառում քուսած,
Արմատներ ձգած դարաւոր
Մի կաղնու սաղմը մի օր,
Որքան էլ հեռու, — ասա՛, —
Ասա՛ ինձ, անտառ հայրենի,
Կարո՞ղ է ծած չլինել
Այդ սաղմը — եւ ոչ մի հիպէ
Հայրենի անմահ ափսոսից:

Կարո՞ղ է լինել մի սերունդ,
Որ նախորդ սերնդից յանկարծ
Չունենայ ոչինչ ծառանգած,
Իբրեւ ջիղ, արիւն ու ափուն: —
Որ փչող հողմերի շնչից
Տարածուի այնպէս գետնաքարք,
Որ փորձել չուպենայ անգամ
Գէթ շտկել մէջքը մի քիչ...

Տարածում էք, ընկնում էք այդպէս,
Թափում էք-այդպէս չնչին —
Հայրենի հողմերի շնչից
Դուք ահա իմ շուրջը անվերջ...
Տարածում էք, փռում էք հյուս,
Յանցապարտ ծպիտով, խեղձ,
Որ ներքուստ կայ զրուած ձեր մէջ:

Եւ այդ է ահա, — ահա այդ
Խեղձութիւնն է եղկ ձեր ներքին,
Որ թախիժ է ձուլում երգիս —
Եւ լցնում ոգիս տրտմութեամբ: —
Եւ վարմանք է պատում, եւ անդուս
Տարակոյս ու կասկած անգամ, —
Թէ ինչը ձեզ թեքեց այնքան,
Որ դարձաք անկամ այդքան դուք...

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ վարատը
Բացիլ էր՝ ոգու ցեց խոցէ,
Որ այդքան հե՛շտ սողոցեց
Նայիրեան ոգին գրահատը,
Ձեր ոգու անկոխ ու անեղծ
Ինքնութիւնն հապարամեայ,
Որպէս մաշկ մարմնի զառամեայ, —
Եւ, որդի նման, մտաւ ներս...

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐ

Հայաստանի մտաւորականներէն Գարեգին Յովսէփեան, 1969ին լոյս ընծայած իր «Չարեցի պոեզիան» աշխատասիրութեան մէկ գլուխը, 66 էջ, ամբողջութեամբ նուիրած է բանաստեղծին անտիպ երկերուն: Այդ բաժինին մէջ առանձնացուած բանաստեղծութիւններուն կարգին, քննադատը առանձնացուցած է նաև մեր կանխող էջերուն արտադրուած երկարաչափ բանաստեղծութիւնը, ընդգծելով, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը վարը, բանաստեղծին փառաբանած «Նայիրեան սաղմի էական անսահմանափակութիւնը»:

Ուրեմն՝ կը գտնուինք մտնուին մէջ երեւցած ու քննադատութեան կողմէ մեկնարանուած կտորի մը առջեւ, որ ենթարկուած է երկրորդ որբութեան մը, անջատուած է անտիպ ու չնաւազուած» իր հին բախտակիցներէն եւ որեւէ յիշատակութեան չէ արժանացած ամբողջ հատորին մէջ:

Ստորեւ ամբողջութեամբ կը ներկայացնենք խնդրոյ առարկայ բանաստեղծութեան նուիրած Յովսէփեանի խորհրդածութիւնը:—



... Այդ տեսակէտից լուրջ հետաքրքրութիւն են ներկայացնում նաև վերջին տարիներէ պոետական խաղումները, որոնք աչքի են ընկնում սովորական հայրենասիրութեամբ, քաղաքացիական բարձր ինքնագիտակցութեամբ եւ սոցիալ-հոգեբանական հարուստ բովանդակութեամբ: Այս նշանակալից կենսական արժէքները խոր ժարմնացում են ստացել առանձնապէս բանաստեղծական այն պատկերներում, որ հրապարակուել է «Գրական քննադատ»(1):

Կենսական-հոգեբանական այդ չափազանց բարդ ու բովանդակալից պատկերացումները ստեղծուել են միանգամայն օրինաչափօրէն ու ունեն իւրօրովի ստեղծագործական ներքին միասնութիւն, հոգեկան-բարոյական ճշշմարիտ բովանդակութիւն: Կանգ չառնելով մասնաւորապէս «Ձուարք գիտութիւն»... եւ «Նրգեր ձեռամբ»ի կենսական բովանդակութեան, շօշափուած էական թեմաների վրայ, ոչէնք առանձնապէս, որ դրանք արտացոլում են հարազատօրէն Չարեցի կեանքի վերջին տարիներէ տրամադրութիւնները, նրա հոգեբանութիւնն ու համոզմունքները:

Չարեցի այդ ստեղծագործութիւնները ցոյց են տալիս իւրովի քաղաքացիական մտեցման արխութիւնը, հոգեհարազատութիւնը ժողովրդին եւ հայրենիքին: Դժուար չէ նկատել այս արուժով նաև ողբերգական մոմենտները: «Եւ այսպէս անս ես — 25 տարի ստեղծագործական աշխատանքով հայրենի հերկը խոփով ոգեկամ հերկելուց յետոյ անս սօնում եմ կրկնակի յո-

(1) Տե՛ս «Գրական Թերթ», 1987, № 8:

բիւնանը — մեծակ ու իսլամական պոետ՝ ափսոսելով սեփական հայրենիքում՝
հերկի եզերքին հայրենական երգի՝ ամայացած դաժանագոյն եռանդով սե-
փական մախարարների եւ պետերի՝ հայրենի երգակիցների դեմ մնացած մի
քանի խեղճերի յախուստն ցնծութեամբ հերքոյ...»:

Այս մտորենքը յանգեցնում են բնականաբար որոշակի գրական բար-
ճերի խորապէս գիտակցուած եւ արժատական ժխտման: Յնդիրը զննուած է
բազմակողմանիօրէն, պատմական եւ այժմէական առումներով: Նշելով, որ
իրքն ուրշ, զեղին տերեւներ ցրու է հողմը, ցրում անզազար սերունդէ-սե-
րունդ եայրիբան երգի հունար անմահ, Չարենցը հետաքրքրական դատողու-
թիւններ է անում: Բանաստեղծը այնուհետեւ մի առանձնապատուկ խորու-
թեամբ շարունակում է ներկայացնել կենսական հանգամանքները, անցեալի
որոշ երեւոյթներ եւ ներկայի զծերի փոխադարձ կապը եւ այլ էական մո-
մենտներ: Մեկնաբանելով վլխաւորապէս նայրեան հոանդի բովանդակ կեն-
սունակութիւնը եւ ուժը, պոետն այնուհետեւ անդրադառնում է հայ ժողո-
վըրդի գոյատեւման հարցին եւ այն ընկալում իբրեւ իւրօրինակ օրինաչա-
փութիւն ու պատմականօրէն մի ներքին օրդանական համամարդկային էու-
թիւն: Բանաստեղծը ընդգծում է առանձնապէս նայրեան ոգու զարմանալի
կայունութիւնը, դրա մէջ տեսնելով զարգացման հաստատուն հիմունքները:

Անճրեւի, ցրտերի, շոգի,
Տանգամբի, սովի, հարսւածի,
Մեծութեան, դառնութեան, լացի
Բոցերում կարծրացած, օ, սգի'...

Օ, ոգի, օ սաղմ մայրիբան
Համնարի, — օ, իմքնութիւն,
Աշխարհում չկար ո՛չ մի թոյն,
— օ, որ լուծէր իւրէն քո արեան...

Այդ տեսակէտից է իմաստաւորում եւ քացայայտում ժողովրդական
ոգու ուժը, նայրեան սաղմի էական առանձնապատուկութիւնները՝ Այդ ինք-
նատիպ փիլիսոփայութիւնը հետագայ թեմատիկ զարգացում է ձեռք բերում:
Բանաստեղծը երգում է նորից զովք անմահ ինքնութեան այդ բարձրաբերձ,
որ իբրեւ անխորտակ մի բերդ, զարձրեց մեզ յաւիտեան-մարդ: — Ենս գովէ
նմ երգում մեր ոգուն, որ անկտր ինքնութեամբ կենդանի՝ փորձութեամբ
կարծրացաւ Բանի-այնքան պիրի դարձաւ ու տակունջ: Այդ պոետական մտա-
պատկերներում նայնպէս խոր իմաստ կայ, էական կողմեր, որոնք խորաց-
ւում են բնականաբար եւ արտայայտում պատմականութեան զգացողութիւն:
Կարելի է ասել, որ բանաստեղծութիւնը զնալով մի առանձնակի տրա-
մարանական ուժ է ստանում, հերոսական-հայրենասիրական բարձրագոյն ի-
մաստներ խոսացնում: Չարենցի կենսափիլիսոփայութիւնը ծաւալում է ըստ
էութեան, պատմական որոշակի կապակցութիւններով, ցայտուն մտապատ-
կերներով:

Միանգամայն իմաստայից են նաեւ հետագոյ խոհերը, որոնք ամբող-
ջացնում են բանաստեղծի գաղափարական հայեցակէտը, պարզորոշ ամփո-
փում առանձնապէս հեղինակի նոր զննումները: Պոետը նկատում է, որ պղտոր-
ւել է նայրեան անազարտ երգի ակունքը: Բանաստեղծութեան շարունակու-
թեան մէջ մեծ գրողը բնականաբար ձգտում է ըմբռնել այդ երեւոյթի իսկա-

կան պատճառները, ընթերցողի ուշադրութիւնը կենտրոնացնելով էական խնդիրների վրայ: Բոլոր դէպքերում չարենցեան վերաբերմունքի համար բնորոշ է մշտե կամազրկութիւնը, այլ ժողովրդական բարձր մղումները, անձնական եւ հասարակական գծերի միաձուլումը: Եւ բանաստեղծը Հարց է տալիս մասնաւորապէս, թէ կարո՞ղ է լինել մի սերունդ, որ նախորդ սերնդից յանկարծ շունենայ ոչինչ ժառանգած, իբրեւ ջիղ, արիւն ու աւելն: — Որ փշոջ հողմերի շնչից տարածուի այնպէս զհոնաբար, որ փորձել շուգենայ անգամ դէթ շակել մէջքը մի քիչ... Պէտք է աւելացնել նաեւ, որ բանաստեղծն այստեղ խօսում է աւելի որոշակիօրէն յանցապարտ դատան ժպիտի մասին, արտայայտում այդ առթիւ իր գայրոյթը անմիջական բացասական երեւոյթների դէմ: Յատկանշական այստեղ ժողովրդական առողջ մասձուլակերպն է, հասարակական երեւոյթների գնահատման արիութիւնն ու ստեղծագործական ակտիւթիւնը:

Եւ այդ է ահա, — ահա այդ
 Խեղճութիւնն է եղի ձեր ներքին,
 Որ քայտի՞ծ է ձուլում երգիս —
 Եւ լցնում եզրիս տրամաբեամբ:

Եւ զարմամբ է պատում, եւ անդաւա
 Տարակոյս ու կասկած անգամ, —
 Թէ ինչը ձեզ քեհեց այլեւա՞ն,
 Որ դարձա՞ք անկամ այդքան դուք...

Անհրաժեշտ է ընդգծել վերոյիշեալ մտապատկերների, ըմբռնումների պարունակած քննադատական յատկանիշները, ակտիւ վերաբերմունքը, ի հակադրութիւն ամէն տեսակի խեղճութեան: Այս տեսակէտից պէտք է նշել յատկապէս բանաստեղծի հոգեկան ողջախոնութիւնը եւ իսկական օրջիկտիւտութիւնը: Բանաստեղծը չէր կարող անտարբեր անցնել այն երեւոյթի կողքից, որ ինչ-որ բացիլ, ոգու ցեց այդքան հեշտութեամբ ողողեց ոգին զրահաւոր: Երեստ յատկանշական է Չարենցի անհաշուողականութիւնը բացասական երեւոյթների նկատմամբ, հասարակական անկեղծութիւնը: Չարենցը մշտապէս զեկեպարում է ճշմարտութիւնը բացայայտելու ձգտումով, ռեալիստական սկզբունքով, զրոնւորելով խորապէս հոգեկան ներքնատեսութիւն, երեւոյթների ռեալ մեկնաբանութիւն: Պոետն ի յայտ է բերում ընդհանրապէս ողին ազնուացնող զազափարնեք ու կարեւոր հայրենասիրական ձգտումներ, դատապարտելով ըստ ամենայնի այն ամէնն, ինչ որ տմարդի էր ու խանգարում էր սովետական ժողովրդի, հայրենիքի առաջընթացին: Այստեղ չկան հակասութիւններ, եւ աչ էլ հաշտեցման ինքնաբաւ մտտիւներ, Բանաստեղծութեան բովանդակութիւնը շնայած նրան, որ զնալով աւելի է բարդանում, սակայն խորապէս ներգործում է շարենցեան մտածելակերպի ռեալիստական ինքնուրոյն գծերով եւ առանձնայատուկ կենսասիրութեամբ:

ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎԱԿԻՓԵԱՆ

ԴՈՒՐՍ ՄՆԱԳԱԾ ՈՒՐԻԾ ԿՏՈՐՆԵՐ...

70-կան թուակենեքու կէսերուն, Հայաստանի մէջ
 Զարեկի մասին տրուեցան շարք մը դատախօսութիւններ,
 որոնք նոյն ստին լոյս տեսան 'առաջով' Վարկնցեան ըն-
 քերցումները ընդհանուր խորագրին տակ: Այդ դատախօ-
 սութիւններուն ընթացքին հայրենի մասուրականներն ու
 մանք անզրազարման նսեւ: Զարեկի անտիպերուն, իսկ
 Անահիտ Զարեկի դատախօսութիւնը ամբողջովն նուիրուած
 էր քանաստեղծին անտիպերուն:

Զորմանալի է նշել, որ այդ առիթով շուտով ու արդ-
 ւած բանաստեղծական պատասխաններէն ոմանք չեն մասն
 Վարկնց Դճին մէջ:

Այս էջին վրայ կը ներկայացնենք խնդրոյ առարկայ
 այդ կատրեկէն քանի մը հատ, իսկ յաջորդ էջին՝ Վնական-
 տակամ Հայաստանի ամառային մէջ Արփենիկ Զարեկի հրա-
 տարակութեան տուած շարքէն երեք կտոր, որոնք, իրենց
 կարգին, դուրս մնացած են Վարկնց Դճին:

Որքան խորն եմ գննում հեռուն մեր մոր լոյսով եւ այսօր՝
 Գալիքն այնքան մութն եմ տեսնում շառագունուած այդ լոյսով:
 Ու անցեալի մեծ քաների հուրն եմ վառում եւ իմ մէջ՝
 Որ չարհաւորն — եւ խաւարում տեսնեմ մշտն զէք յաւայ:



Իմաստուն է միայն քառադիմեր հարթագ
 Վազուայ յաջորդը քա այն երբանիկ, —
 Որ պիտի գայ գիտեմ — եւ անհունի հետ քա
 Մեր յազբութեան լեզունդը մանուտն մաշից համի...



Ձեռն ընդհատի երբեք իմ տրամուրիւնն անդուլ
 Հագարամեայ արեամբ սրբագործուած խոհի:

Օ, ո՛չ, դու չես լսել, երբեք տրամուրն իմ,
 Ո՛չ յագնութիւն, ո՛չ չար յերիւրամբի հանգէպ —
 Թեկուպ իջել եմ ծանր, օրհասական ամպեր
 Իմ ուսերին խոնգած ու անտրուանչ շնչին...



Կեանքը բերել է փորձամբ ու անկում, —
 Միշտ համբերել եւ դու, սիրտ իմ անհուն...

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

1. Լռյալը չեմ վառել սեմեակում խաւար,
Սեմեակի միջում այդ՝ հարբած մի մարդ:
2. Մթին սեմեակում — փռքիկ անկողին,
Երէկ էր, տարան, յանձնեցին հողին:
3. Մետաքսէ վերմակ — սպիտակ բարձեր...
Երբեք այսօր ուշ չէր վերադարձել:
4. Թերեւս երկար ֆիլմ էր կինոյում...
Նա երեկոյեան իննին էր բնում:
5. Ժամացոյցը ճարձ ուք անգամ խփեց,
Զլինի՞ չգայ, չլինի՞ խաբեց...
6. Բայց մի ժամ ամբողջ, ողջ մի ժամ դեռ կար,
Ժամերն այս որքան դարձել են երկար...

Գարնանայլուն իրիկնաւին յուզանման
Ինչ-որ մի բան հեռուներից կանչում է մերք,
Ինչպէս անդարձ մի օր հնչած անբառ մի երգ...
Մի գեղեցիկ կապուտաչեայ երիտասարդ
Ու գնչուի մի սեւաչեայ,
Կանգնել էին ու բշփում էին գուարք
Ինչ-որ մի տեղ, ինչ-որ մեղիկ մի փողոցում...
Ն՞որ էր արդեօք, ո՞ր էր խղախում, ովքե՞ր էին,
Երիտասարդն ու գնչուին այդ սեւաչեայ...
Ինչո՞ւ յանկարծ ես այդքան պարզ վերլիշեցի
Նրանց՝ կանգնած փողոցային մթնշաղում...
Երբեք, երբեք էլ չտեսայ մարդկանց այդ պարզ...

37.15.16.3.

...Ուր ասփալտէ սեւ սաք պողոտաներն անանց
Անձրեւից վերջ լիզուած ատոնների վագրով,
Պսպղում են անթիւ յապտերների լոյսով
Իզոտ մաշկի մամն յասփշիկ կանանց, —
Եւ մայթերի վրայ որպէս հրապոյր,
Ջրապտոյտ չճնաղ ծաղիկներով՝ ցանուած
Երբ՞ն է ելնում բեքեւ եքերային կանանց,
Եւ շշուկներ փռում մայթերին լուրք...
Ուր մանկամարդ կանայք տղայական դէմքով
Եւ կոնֆերով հնչում, որպէս ծնծղայ, —
Եւ մազերով ծակէ ու աչքերով մեղստո, —
Որպէս կապոյտ կրփի անմահ լնեք, —
Եւ աչքերում կապոյտ կիրքն է վառում այնպէս,
Որպէս բաժակներում վառուած լիկէոր...

(«Սով. Հայաստան» *ամսագիր*, 1982, *թիւ 7*)

Հ Ն Ա Ր Ա Ի Ո Ր Է...

Դառնանք նորէն ժամիկ անցեալին ու կարգանք Մանուկ Արեղեանի անուան գրականութեան մասնաճիւղին «Հաւաքեմք Ձարեանցի ձեռագրերը» կոչը, անոր սա մասը.

«Հակասագրի բերումով բանաստեղծի ձեռագրերը ցրուել են, եւ մենք շատ դժպէտով չգիտեմք, թէ նրանք որտեղ են գտնուում: Բայց հաստատ համոզում եմք, որ եղել են մարդիկ, որոնք քաղաքացիական բարձր առաքինութեամբ եւ բանաստեղծի հանդէպ ունեցած անհում սիրոյ մղումով, տարիներ շարունակ պահել ու պահպանել են իրա ձեռագրերը: Կասկած չկայ, որ Ձարեանցի աչգ թերթիկները նրանց իսկապէս հարազատ են դարձել, եւ դրժւար է բաժանուել դրանցից: Սակայն, այսօր այդ խնդրին պէտք է մտնեալ այն գիտակցութեամբ, որ Ձարեանցի իւրաքանչիւր մասուճիւղ պատկանում է հայ ժողովրդին եւ այն իր տիրոջը վերադարձնելը քաղաքացիական սրբազան պարտականութիւն է»:

Այս կոչը հրատարակուեցաւ շուրջ տասնհինգ տարի առաջ եւ, ինչպէս ըսուեցաւ քիչ անդին, անարձապանք չմնաց անիկա, ազնիւ մարդիկ յանձնեցին իրենց ժամ գտնուող ձեռագրերը կամ անոնց լուսապատճենները Ձարեանցի Փոնտին ու հարապատեւրուն եւ այս վերջինները դառնք ընծայեցին բուն տիրոջ՝ հայ ժողովուրդին:

Բայց կը պարզուի, որ կան տկուսին անձնաւորութիւններ, որոնք կը մերժեն իրենց ժամ գտնուող մասունքները յանձնել պատկան մարմիններուն ու Փոնտներուն:

Այս տեղեկութիւնը, որ զբեթէ կը կրկնէ տասնհինգ տարի առաջ հրատարակուած վերի կոչը, կը հաղորդուի այս անգամ Անահիտ Ձարեանցի կողմէ, «Լիակատար ժողովածու» մը ունենալու պապակին առջնթիւր.

«Այս կապակցութեամբ եւ կ'ազնայի իստել մի հարցի մասին, որը տագնապ եւ մտահոգութիւն է յարուցում. ըստ որոշ տուեալներին՝ մի շարք մասնաւոր անձանք մօտ մինչեւ օրս էլ պահում են էջեր Ձարեանցի անտիպ ժառանգութիւնին՝ բանաստեղծութիւններ կամ նրանց անյայտ տարբերակներ, նամակներ եւ գանազան գրութիւններ: Կարծում եմ ժամանակն է, որ այդ մարդիկ բանաստեղծի՝ տասնամեակներ շարունակ խնամով պահուած-պահպանուած մասունքները այժմ, վերջապէս, հրապարակեն կամ յանձնեն գրականութեան եւ արուեստի թանգարան: Դա խիստ անհրաժեշտ է վերջինիս ժողովածուն պատրաստելու համար («Գարուն», 1984, թիւ 5):

Մանուկ Արեղեանի անուան գրականութեան մասնաճիւղին կոչին տասնհինգ տարի ետք նոյն տեղը շինք գտնուիլը հարկաւ, բայց աչքի կը զարնէ հաւաքման գործին արձանագրած գանդաղութիւնը: Ձարեանայի է մասնաւանդ ձեռնպահութիւնը իրենց ժամ ձեռագիր պահող այն մարդոց, որոնք կը յամուին ազգային աւանդ մը սեփական ազրանք համարել: Մահուան դնով Ձարեանցին հաւատարիմ մնացած ըլլալու փառքն ետք՝ ընաւ ներելի չէ սուկայն բանաստեղծին ստեղծագործութեան առթած հանոյքը միտակ վայելելու այս կեցուածքը, որ համազօր է շրջուած թշնամութեան:

«Հնարաւոր»ներու շարք մը ունի Անահիտ Ձարեանցի ու այնքան լատ կը

կրկնէ Հնարաւորը, որ կարծես ձեռքով դրածի պէս ծանօթ է Հետապնդուած կտորներուն:

Հնարաւորները—

ԻնչնՁԻԱՍՏԵՍ — Հնարաւոր է, որ վերջնական տարբերակը պահպանուած է առանձին մարդկանց մօտ (էջ 630):

ԳՈՑԻՆ ՆԱՅԻՐԱՅԱՆ — Առաջին բառատողի մշակումներ կան նաեւ Ի. Ստալինին ուղղած Ձարենցի ոտուերէն ինքնազիր դիմումի էջերին մէկէ ետեւում:

Հնարաւոր է, որ առանձին մարդկանց մօտ պահպանուած են ինչպէս այս, այնպէս էլ միւս սոնետներէ այլ տարբերակներ (646):

ՍՈՆԵՏ ԱՆԿՇԹԵԼԻ — Յաջորդ սոնետներից ՁՅ մաքրագրեր չեն պահպանուած. Հնարաւոր է, որ պահպանուած են առանձին մարդկանց մօտ (650):

... ԻՁԵԼ Է ԱՅՍՈՐ ՀԵԼԻԿՈՆԵ ԱՄԲՈՂՁ... — Հնարաւոր է, որ այդ գործի պակաս էջերը կամ առաւել ամբողջական տարբերակներ յայտնաբերուեն Հետազոտում (573):

«ՀՈՍՈՒՄ Է ԵՐՓԸ ՀԻՄԱ...», «ԱՅՍ ԱՇՈՒՆՔՈՒԱՅ ՀԱՆԴԷՊ». «ՈՐ ՄԻԱՅՆ ՄԻ ՕՐԷՆՔ ԿԱՅ ՄԵՐ...», «ԱՅՍՊԵՍ-ՆԱՍՔԱՆ ԻՁԵՆ...» — Հնարաւոր է, որ զրանք հատուածներ են ուրիշ գործերից, որոնք Հեղինակը չի հասցրել աւարտել, կամ մեզ չեն հասել (574):

Ի ԽՐՐԱՅ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒՍՈՅ — Դ. Սոնետ, — Հնարաւոր է, որ որտեւ, ինչպէս եւ առանձին սոնետների այլ տարբերակներ գտնուած են առանձին մարդկանց մօտ (586):

ԵՐԵՔ ԲԱՂԱԿ — Հնարաւոր է, որ սրտնց այլ տարբերակներ կամ վերջնական բնագրեր, ինչպէս նաեւ «Երկրորդ-Արժիկին» եւ «Երրորդ-Անահիտին» բալլադներէ ինքնազիր կան առանձին մարդկանց մօտ (598):

ՆԱՎՁԻԿԷ — Հնարաւոր է, որ առանձին մարդկանց մօտ պահպանուած են նաեւ Ա տարբերակի վերջին գլուխները, որոնք մեր ձեռքի տակ չեն եղել (651):

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ — ՁՅ պահպանուած է առաջին հատուածի երկու տարբերակ: Հնարաւոր է, որ առանձին մարդկանց մօտ պահպանուած են այլ տարբերակներ (659):

ՊՈՆՄ ԱՆՎԵՐՆԱԳԻՐ — Սրանք պոեմի կառուցուածքին եւ մտայնացմանը վերաբերող առգեր են, որոնցից կարելի է ենթադրել, որ Ձարենցը, թերեւս, հասցրել էր գրել նաեւ պոեմի այլ հատուածներ, որոնք պահպանուել են առանձին մարդկանց մօտ (668):

ՈՄ ԼԵՐԱՆ ԱՂՕԹՔԸ — Հնարաւոր է նաեւ, որ ամբողջական տարբերակը պահպանուած է առանձին մարդկանց մօտ (669):

ՀԵՐՈՍԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ — Հնարաւոր է, որ ժամանակի բնթացքում յայտնաբերուեն այս գործի պակաս էջերը (669):

Բայց շատ շժանբանանք անոնց վրայ ու Հարց տունք կրկին. գործադրուած են ու սպասած արդեօք ձեռքբերման բոլոր միջոցները: Կը թուի թէ՛ ոչ: Այն տպաւորութիւնը կը ստացուի յաճախ, որ ամբողջ գործը ձգուած է պահպանելու բարեացակամութեան եւ կողմերէն ու բաղձանքներէն ետք գործնական քայլ չէ առնուած: Ասիկա Հայաստանի գիտութիւններու ազդեթիւյի գրականութեան մասնաճիւղին պարտականութիւններէն մէկն է, կը

խորհրդից, ու Գրողներու միութեան իրաւասութեան սահմաններէն դուրս չի գնար: Այս կասկածը կ'աւերուանայ մեր մէջ այն պարզ պատճառով, որ Զարեհցի ձեռագիրներուն առկայ պատմութիւնը լրիւ չէ ընդգրկուած եւ անոնց հետ աղերս ունեցող բոլոր մարդերը չեն հրաւիրուած հաւաքման զորքին բարուք լուծման համար:

Տանք օրինակ մը.—

«Նա ծայրալով էլ մտաւ» խորագրուած մահաբխական իր յուշին մէջ, «Անմեկ մեղաւորին» հետ ունեցած իր առաջին (1947) հանդիպումին, բանաստեղծ Վահագն Գաւթեան կը յիշէ Զարեհցէն մէկ-երկու անտիպ կտոր, Մահաբխին անծանօթ («Երեւի մեզանից յետոյ է գրել»), եւ այլն: Ապա՝

«Մահաբխն յանկարծ կանգ առաւ.

«— Այ տղայ, բաց Զարեհցի էլ ամտիպները ո՞նց եմ ըմբիլ ձեռքդ:

«Յոյ՞րէ՛ Թովհաննիսեանը կայ, գիտե՞ք...

«Փիտեմ:

«— Նրա մօտ Զարեհցից շատ ձեռագրեր կան: Պարոյր Սեւակին քայլ

է տօնի արտագրի...» («Ջուգոսահա ճանապարհ», 1976, էջ 65-66):

Մ'ի՛ է Եղիշէ Յովհաննիսեանը, Զարեհց ի՞նչ պայմաներու մէջ ձեռագիր յանձնած է անոր, Պարոյր Սեւակ քանի՞ բանաստեղծութիւն արտագրած է անոր արխիւէն եւ ի՞նչ անուն ու ծաւալ ունին արտագրուածները:

Վահագն Գաւթեանի հաղորդածէն առաջ, ընթերցողը պզտիկ տեղեկութիւն մը ունէ՛ր Եղիշէ Յովհաննիսեանի մասին, Զարեհցի անտիպներով դրողած Գարեգին Յովսէփեանէն, ըստ որում՝ «1954 թ. լոյս տեսած «Ընտիր երկերում գտնուած ճիւղերը հրատարակութեան էր սրամաղդիլ արուեստարան Եղիշէ Յովհաննիսեանը» («Զարեհցի պեղում», էջ 374): Վահագն Գաւթեանի հաղորդած լուրը, որ Յովհաննիսեանի մօտ գտնուող անտիպներուն քանակին ու ծաւալին մասին լուր կը մնայ, եւ «Ընտիր երկերում» ահար տրամադրած 11 բանաստեղծութիւնները, որոնք ամբողջի մը մասին ոչինչ կ'ըսեն դարձեալ, ընդհակառակն, ուժ կու տան հարցումներուն, որոնց պատասխանները ընթերցողը կը սպասէր առնուազն գտնել այս ծաւալուն ու մանրակրկիտ հատորին մէջ, բայց...

Անտահա Զարեհցի կազմած ծանօթագրութեան երկու հարիւրէ աւելի էջերուն երկայնքին զոնէ մինք չհանդիպեցանք այս անձնաւորութեան, Եղիշէ Յովհաննիսեանին, զոր կտորի չէ դասել Զարեհցի ձեռագիրները սեփական ապրանք համարող եսամոլներուն շարքին, տրուած ըլլալով, որ ո՛չ միայն ստալինեան սահմակեցուցիչ օրերուն իր մօտ վտանգալից ձեռագիրներ պահելու տրութիւն ցուցարբած այլ մը եղած է ան, այլև ոչ նուազ շարաշուք չըջանի մը (1947) նոյն արութեամբ թոյլ տուած է արտագրել մօտը դռներուն ձեռագիրները:

Անորոչ հասցէներու շատ վարնուած է Անտահա Զարեհց, բայց չի հակըցուի ինչու չէ դրողած որոշ հասցէներով, որոնք չեն կրնար անծանօթ եղած ըլլալ իրեն:

Իր ընծայած գոհունակութեան չափ հարցումներ կը յուզէ «Զարեհց Դը:

Ամէ՛ն քայլի:

Ռմանք տեսնէք: Միւսները՝ յաջորդէ:



ԴԷՄ ԱՌ ԴԷՄ

ՅԱԿՈՒ
ՅԱԿՈՒԵԱՆԻ
ՀԵՏ

• Երբ մեր վերջին համդիպումի ընթացքին ձեր գործերը ցուցագրեցիք, մեր սուղաբուխինը գրաւեց պատտառ մը, որուն ձգած տպաւորութիւնը տարրեր եղաւ: Խօսքը կը վերաբերի այն պատաստին, զոր գծել սկսած էք Եգիպտոսի մէջ եւ աւարտած՝ հայրենի հողին վրայ: Ինչ կը տեսնենք անահման անապատին անաւորութենէն կհամ մերկաւորմին հայ մարդ մը, որ կը փորձէ իր ակերտով պաշտպանել նորաբայտ տունկ մը. ճիշդ հասկցած էնիք պատտառին միտք քանին...

— Այո, այդ մարդը, այս պարագային՝ դուք ասում էք «հայ մը», ճիշդ է, որեւէ նշան չկայ, որ հայն է, մերկ մարդ մըն է, սակայն ան հայն է, որովհետեւ իմ միտքիս մէջ հայուն նախատպերը այդպէս եղած է, լուսադոյն հայը այդպէս պէտք է ըլլար, այդպէս կը մտածէի այն ժամանակ, երբ այդ նկարը նկարեցի, որովհետեւ իսկապէս ալ, մեր ժողովուրդը, իր պատմութեան ամբողջ ընթացքին, ամէն տեղ՝ ըլլա՛յ, հայրենիքի մէջ, ըլլա՛յ հայրենիքէն դուրս, բայց անհրաժեշտ դատ ուրիշ բան մը չէ ըրած, մենք ուրիշներուն տուները չենք քանդած, ուրիշներուն վրայ չենք յարձակած: Վերջապէս, ամէն տեղ բան մը զարդարելէ, ղեկեցկացնելէ եւ լուսաւորելէ զատ ուրիշ բան չէ ըրած ենք. ուրիշ: Եւ միտքիս

մէջ ալ լուսադոյն հայը այդպէս պէտք է ըլլար եւ այդ նկարը ինձի համար սեւ-պօլիւք կտաւ մըն է:


• Ուրիշ խորհուրդ մըն ալ չունի՞...

— Այո, ունի, մարդկային ասումով ալ նշանակութիւն մը ունի, որովհետեւ մարդը եթէ այդ փոքր բոյսը չպաշտպանէր՝ ինքն ալ զոյւրթիւն պիտի չունենար, այսինքն՝ մարդը պէտք է պաշտպանէ, պահպանէ բնութիւնը: Եւ երեւի պատահական չէ, որ այդ ողիւղ ես կկայ Հայաստան: Այո, ձեր ըսածը հիմնովին ճիշդ է:

• Հայաստան հաստատուել ետք, դուք սկսած գծել բնակարանը, որոնք տարօրինակօրէն չունին մեր հայրենի բնակարանները: Այդ գոյններուն եւ կենսախայտ տրամադրութեան մեմք կը հանդիպինք հայրենի բազմաթիւ գեղամկարիչներու, բայց մա՛նաւանդ Մ. Մարտանի արեւավառ պատտաններուն մէջ: Ձեր պատտանները չունին այն գոյները, որոնց կը հանդիպինք Հայաստանի այս կամ այն հողակտորին վրայ: Ընդհակառակն, Յակոբ Յակոբեանի գոյները, մա՛նաւանդ այդ շրջանի երանգները կը դրսեւորեն աշնանային քալիսի մը, տխուր հանդարտութիւն մը, որ, կը կարծենք, անգրադարձն են ձեր եգիպտական փորձառու-

քեան՝ իրնս խօսուն հայելին հնչում
հոգեվիճակ մը ասպած եգիպտահայ ար-
ւեստագէտին Գերբին պիկոճումներուն:
Այդ գոյները սփիւռահայ ընկնում
Ճարդու ձեր գիտակցութենէն եւ ներաշ-
խարհէ՞ն կը բխին, թէ այլ աղբիւրնե-
րէ:

Գիտէ՞ք, դուք հարցը թէ՛ մը շատ,
ինչ ըսեմ, տրամաբիզէ ըրէք, բայց իր-
կանութիւնը այդպէս չէ: Այս պահուն,
աշխատային սա օրերուն, հիմա դուք Հա-
յաստան էք, եւ հիմա ճիշդ գրեթէ այն
պահն է, որ ես իմ նկարներս կը նկարեմ:



...Եւ հայաստանեան բնակար մը



...եգիպտական շրջանի նախիւր մ-րթնրէն

Հիմա երբ մեր բնութեան կը նայես, գրե-
թէ իմ նկարներու բնութիւնն է՝ ո՛չ կա-
նաչ ծառեր կան, ո՛չ ծաղկած դաշտեր
կան եւ ո՛չ ալ վառ գոյներ...

● Բայց ոսկի աշուն մըն է, բազմա-
գոյն եւ հրդեհում աշուն մը, մինչդեռ,
ձեր պատասաններում մէջ, տաքեր բնու-
թիւն մըն է, ձեռք մը՝ տխուր, դաժման
բնութիւն մը, որ գուարթ գարունը չէ,
լուսայարդ ամառը չէ, գապում գրտու-
թիւն մը ունի, ներամփափ աղբերգութիւն
մը. — ամայի դաշտեր, մերկ ծառեր, որ-
քատումներու չորցած եւ կծկում գիւ-
ղեր, անմարդաբնակ տարածութիւն-
ներ...

— Այս, կրնայ ըլլալ, որ Հայաստա-
նի բնութեան այն պահը, որ ես նկարած
եմ, աւելի թախծոտ է, բայց ինչո՞ւ դա-
ժան ըսենք անպայման: Բնութիւնը ինքը
իր շորս եղանակները ունի եւ տարուան
ընթացքին շորս անգամ իր սեսքը կը փո-
խէ:

Վերջապէս, ամէն նկարիչ ունի իր գունային մթնոլորտը, որ կը համապատասխանէ ընդհանուր առմամբ իր նկարազիրին: Բնաւորութեամբ աշխոյժ, կենսասէր նկարիչ մը, կայտառ մարդ մը, անուշտ, բնութեան մէջ պիտի ընտրէ ա՛յն պահերը, որոնք կը համապատասխանեն իր նկարազիրին, իր էութեան: Ըսենք Սարեան մը, որ մեծագոյն հայ նկարիչն է, անդադար Հայաստանը նկարած է վառ դոյներով եւ ամբողջ գեղեցիկ, արեւոտ օրերուն, ծաղկած պահերուն, կայսրտ երկինքը, որովհետեւ այդ պահերն են, որ իրեն նկարելու գրգռներ տուած են: Ըսենք Մինասը, որ մեր նոր ժամանակներու ամենամեծ հայ նկարիչն էր, որուն գործերը սեննալով որոշ ոգրեզական բովանդակութիւն ու խորք, կը յատկանշուին մինասեան օճով, վառ դոյներով, նկարելու շատ կենսասէր եւ կենսուրախ մթնոլորտով: Բայց իրենց էութիւնն է ատիկա: Ինչպէս ըսի, ես էութեամբ աւելի հանգստեալ մարդ մըն եմ...

● Ներամիտ՞ի...

— Ոչ անպայման, հանգստեալ մարդ մըն եմ, ներամիտի՛ եթէ կ'ուզէք, աւելի շատ... ոչ յարձակող, ոչ շատ դրսեւորող, ցուցադրելը, պարտադրելը շփոթող մարդ: Հեանւարար, բնական է, որ այդ տեսակ նկարազիր մը թերեւս բնութեան մէջ փնտռէ ա՛յն պահը, որ տեսակ մը միադոյն է, սկսած է ննջել, հանգստանալ եւ այդ տեսակ պահին մէջ գտնէ իր գրգռները եւ արտայայտելու միջոցները: Կարծեմ որ ի՞մ պարագաս ալ այդպէս է, որովհետեւ ուրիշ նպատակ չկայ, չէ եղած: Վերջապէս, ընդհանուր արտադրութեամբ թերեւս ես հակուած եմ աւելի հանդիստ, մեղմ արամադրութեան մը: Բայց ուրիշ քան մըն ալ ըսեմ. այս նկարները ուշ աշնան Հայաստանէն ներշնչուած են, եւ պէտք է ըսել, որ հայ նկարիչներէն շատերը կամ դրեթէ մեծ մասը չեն անդադարձած այդ Հայաստանին, իրենց նկարչութեան մէջ կարծես թէ Հայաստանը միայն ամառը գոյութիւն ունեցած է, բայց մե՛րն ալ գոյութիւն

ունի, աշնան ըս գոյութիւն ունի Հայաստանը, եւ ես ալ այդ պահերուն կ'ուզեմ նկարել:

● Ձեր այդ գործերում մէջ, գոյմիմ կողմից դուք նոյնքան կարեւորութիւն կու տաք գիծիմ եւ առատօրէն կը գործածէք գիծը, կարծէք թէ ձեր պատասանները գունաւոր գծանկարներ ըլլալու նպատակ մը կը հետապնդեն: Միևնդեռ, օրինակ, եզրապատկան շրջանի ձեր գործերում մէջ գիծը այդքան զգալի կերպով ներկայ չէ: Գիծը օգտագործելու այս հսկումը ինչպէ՞ս կարելի է բացատրել. արդեօք այն տեսակետով, թէ Յարութիւնը մասն գիծով սկսած է եւ յետո՞յ գոյմը կիւծ է:

— Ծիշող ըսեմ՝ չեմ կարծեր, որ շատ մեծ տարբերութիւն մը կայ եզրապատկան շրջանի ի՞մ նկարներու աշխատեցածեին եւ Հայաստանի մէջ գծած գործերու միջև: Բայց թերեւս դիժ տարբերութիւնը կ'երեւայ, քանի որ ուշ աշնան նկարուած բնանկարներ են, ծառեր են եւ տերեւութի ծառը աւելի շատ գծային տեսք մը ունի, քան գունային: Այս ի՞մաստով՝ խոնդողի վազ մը, չորցած թուփ մը կամ խոտ մը աւելի գծային իրականութիւն են, քան գունային: Ինչ խօսք, որ դիծը իբրեւ միջոց, իբրեւ լեզու ի՞մ նկարներու հիմնական տարրերէն մէկն է, թէեւ ոչ այնքան շատ բացայայտ կերպով:

● Այս տարուամ ձեր ստեղծագործութիւնները աւելի գուաքք, ասիլի կիւստարաի եւ կանաչ ծառերով յարցուած լուսաւառ պատասաններ են: Ինչո՞վ կը բացատրէք այս տարբերութիւնը:

